

ՎԱՐԴԱՆ ՂԱՍՊԻՒՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՇԱՀԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ավագ դպրոցի
10-րդ դասարանի դասագիրք

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ԵՐԵՎԱՆ



2013

ՀՏԴ 373.167.1:27(479.25) (075.3)

ԳՄԴ 86.37 ց7

Հ 282

Դասագիրքը պատրաստվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀՀ ԿԳ նախարարության
կողմից:

Դասագրքի խմբագրական և հեղինակային կազմ՝

Պ. Հովհաննիսյան. պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

Վ. Ղանդիլյան. պատմաբան

Վարդան Վարդապետ Նավասարդյան

Շահե Վարդապետ Անանյան

Զ. Զ. Քյոսեյան. պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վ. Ս. Ղանդիլյան. պատմաբան

Ղևոնդ Քահանա Մայիլյան. Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս

Վ. Ռ. Պարսամյան. պատմաբան

Ա. Վ. Գյուլբուղաղյան. պատմաբան

Մ. Վ. Պետրոսյան. արվեստաբան

Հ 282 Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 10-րդ դաս. դասագիրք
/ Վ. Ղանդիլյան և ուրիշներ - Եր., Տիգրան Մեծ, 2013: - 136 էջ:

ՀՏԴ 373.167.1:27(479.25) (075.3)

ԳՄԴ 86.37 ց7

ISBN 978-99941-0-546-5

© Հեղինակային կազմ, 2013

© Տիգրան Մեծ, 2013



1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՝ բարեկամ

Քրիստոնեական բարոյագիտությունը քրիստոնեության, ուստի նաև Հայ առաքելական եկեղեցու կողմից ուսուցանվող կենսակերպի հիմքն է: Իր հիմնադրման ժամանակաշրջանից սկսած Քրիստոսի ուսմունքը լայն տարածում գտավ աշխարհով մեկ, որովհետև մարդու միտքն ու հոգին ազնվացնելով՝ քարոզում է ապրելակերպի բարոյական վեհ արժեքների ամբողջական մի համակարգ:

Յուրաքանչյուր քրիստոնյայի, այդ թվում և հայ մարդու ազգային-հոգևոր նկարագրի կարևոր բաղադրիչ է, նրա բարոյական դիմագիծը: Ազգային-հոգևոր նկարագիրն ու բարոյական արժեքների համակարգը ներհասարակական հարաբերությունները կարգավորող չափանիշներ են, որոնք ապահովում են տվյալ հասարակության համակեցությունը, ուղղորդում, դաս-

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

տիարակում են սերունդներին, դառնում իիմք ինչպես յուրաքանչյուր անհատի վարվելակերպի (չգրված օրենքներ), այնպես էլ պետականորեն ընդունած որոշումների ու օրենքների համար:

Եվ վերջապես, քրիստոնեական բարոյական արժեքները համամարդկային նշանակություն ունեն: Այդ արժեքներն են ընկած նաև արդի հումանիստական շարժումների ու գաղափարների հիմքում:

Այսօր էլ՝ տեխնիկական աննախաղեա զարգացման մեր դարում, մարդ արարածն առաջվա պես հարցադրումներ ունի բարոյական նկարագրի, հոգու և խղճի, կյանքի ու մահվան վերաբերյալ: Հարցերը շատ են, և դու էլ, սիրելի՝ բարեկամ, մի օր տալու ես այդ հարցերն ինքո քեզ: Եվ փորձելու ես գտնել դրանց պատասխանները: Փորձելու ես գտնել բարին, ազնիվն ու վսեմը, ծշմարիտն ու առաքինին:

Որոնումների այդ դժվարին ճանապարհին քեզ աջակից կլինի նաև այս դասընթացը:

Աշխատանքային խումբ

2. Բարոյականության Վերաբերյալ

ՊԱՏԿԵՐԱՖՈՒՄՆԵՐԸ

ՄԻՆՉՔԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Բարոյականություն հասկացության մասին

Վաղնջական ժամանակներից սկսած՝ մարդկանց մշտապես մտահոգել են բազմաթիվ հարցեր. ի՞նչ է սերը, ազնվությունը, արդարությունն ու բարությունը, ինչպես նաև նախանձը, ստորությունը, չարությունն ու ատելությունը և այլն: Տարբեր ժամանակներում ստեղծված և սերնդեսերունդ փոխանցվող առակներում, ասացվածքներում ու հեքիաթներում ժողովուրդը գովերգել է բարին ու արդարը և պախարակել չարն ու մերժելին: Մանուկ հասակից բոլորս էլ լսել ենք մեր ծնողներից կամ կարդացել գրքերում ժողովրդական իմաստուն խոսքեր, ինչպես, օրինակ՝ «Պտղատու ծառի ճյուղերը խոնարի են լինում», «Ճիտակ պատը չի փլվի», «Լավ է գիտունին գերի լինել, քան անգետին՝ սիրելի», «Դու քեզ մի գովիր, թող ուրիշը գովի», «Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե» և այլն: Դայ մատենագրությունը և գեղարվեստական գրականությունը լի են այդօրինակ ասացվածքներով:

Բարությունը, արդարամտությունը, համեստությունը, ծշմարտասիրությունը բարոյական հատկանիշներ են: Ուշագրավ է, որ դեռևս քաղաքակրթության հնագույն կենտրոններից մեկում՝ Շումերում, գտնում էին, որ մարդկային բարոյական բարձր հատկանիշներն ու առաքինություն-

Բարությունը, արդարամտությունը, համեստությունը, ծշմարտասիրությունը բարոյական հատկանիշներ են:





Դնագույն ժամանակներից սկսած՝ մարդկային հարաբերությունները որոշակի թույլատրելի սահմաններում պահելու խնդրում կարևոր դեր ունեին բարոյականության վերաբերյալ ժամանակի պատկերացումները, կրոնական ծեսերն ու արարողությունները:

Աերը աստվածային պարգևներ են: Կավե սալիկների վրա պահպանված և ավելի քան չորս հազար տարվա հեռավորությունից մեզ հասած գրվածքների համաձայն շումերները բարձր էին գնահատում բարությունն ու ծշմարտությունը, օրենքն ու կարգուկանոնը, արդարությունն ու ազատությունը, պարզությունն ու գրասարտությունը: Շումերական քաղաք-պետությունների կառավարիչներն ու արքաներն իրենց իսկ հրամանով ստեղծված գրավոր տեքստերում հպարտությամբ արձանագրում էին, որ օրինականություն ու կարգուկանոն են հաստատել իրենց երկրում, վերջ են տվել չարիքին ու բռնությանը, դաժան և անհագուրդ պաշտոնյանների կամայականություններից պաշտպանել են թույլերին ու աղքատներին, որբերին ու այրիններին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում բարոյականության վերաբերյալ ձևավորված հայացքները նաև վաղ քաղաքակրթության մեկ ուրիշ կենտրոնում՝ **Հին Եգիպտոսում:** Այդ հայացքների ու պատկերացումների մասին մեզ տեղեկացնում են Ք. ա. III-II հազարամյակներում ստեղծված գրավոր հուշարձանները: Դրանք խրատաբանություններ են, օրիներգեր, սիրային բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ ու ասացվածքներ, որոնցում գովերգվում են համեստությունը, չափավորությունն ու հեղությունը, հավատարմությունն ընկերոջն ու հարազատին:

Այսպիսով, հնագույն ժամանակներից սկսած՝ մարդկային հարաբերությունները որոշակի թույլատրելի սահմաններում պահելու խնդրում կարևոր

դեր ունեին բարոյականության վերաբերյալ ժամանակի պատկերացումները, կրոնական ծեսերն ու արարողությունները, առաջնորդի, քրնապետի կողմից ձևակերպված պատվիրաններն ու **օրենքները**: Բարոյականության պահանջը իին աշխարհում ձևակերպվել է որպես **արգելք** (օտար բառով՝ տարու), այսինքն՝ չի կարելի անել այս կամ այն բանը. չի կարելի ուտել առաջնորդի կերակուրը, չի կարելի սպանել այն կենդանուն, որին սրբազն դեր է վերապահված, չի կարելի ամուսնանալ եղբոր, քրոջ և այլ մերձավոր ազգականների հետ և այլն: Երբ այս արգելքը դառնում է հանրային (ցեղի, տոհմի, ազգի) գիտակցության մաս, այն ձևավորվում և ձևակերպվում է որպես անժխտելի **կանոն**:

Բարոյականության վերաբերյալ ամենավաղ պատկերացումներում իսկ արդեն ներկա է կրոնականության տարրը՝ հավատալիքը, ըստ որի բարձր հատկանիշներն ու առաջնությունները ոչ սովորական, այլ աստվածային պարգևներ են:

Հայերի հեթանոսական պատկերացումներում ու առասպելներում ևս բարոյականությանը վերաբերող ինդիրներին կարևոր տեղ է հատկացվել: Դրվատվել են հատկապես այնպիսի առաջինություններ ու բարոյական արժեքներ, ինչպիսիք են ազատությունն ու **հայրենասիրությունը** (Հայկ, Արամ, Վահագն), ամուսնական ու **ընտանեկան հավատարմությունը** (Արա Գեղեցիկ, Նվարդ), ուղղամտությունը, աստվածապաշտությունը (Արտաշես Ա) և այլն:

Բարոյականության վերաբերյալ ամենավաղ պատկերացումներում իսկ արդեն ներկա է կրոնականության տարրը՝ հավատքը, ըստ որի բարձր հատկանիշներն ու առաջինությունները ոչ սովորական, այլ աստվածային պարգևներ են:





Երբ արգելքը դառնում է համրային գիտակցության մաս, այն ծևավորվում և ծևակերպվում է որպես անժխտելի կանոն։ Այս նեպրում արդեն առաջնորդի, քրմապետի, մարդարեի խոսքը վերափոխվում և դառնում է պատվիրան, օրենք։

Բարոյական պատկերացումների վերաբերյալ կրոնական-հասարակական պատկերացումների ամբողջությունը Հին աշխարհի երկրներում ամփոփվում է որոշակի ուղղության մեջ, որին այսօր անվանում ենք եթիկա (բարոյագիտություն)։

Բարոյականություն և բարոյագիտություն


Բարոյագիտության վերաբերյալ համակարգված տեսություններ մշակելու փորձ արեցին հին հույները։ «Մարդը բոլոր իրերի չափանիշն է», այս կարծիքն ունեին հույն փիլիսոփաները։ Հին Հունաստանում բարոյականության հարցերն առաջինը հատուկ ուսումնասիրության նյութ դարձրին սովիեստները (թ. ա. V դ.): Նրանք, ինչպես հայտնի է, շրջիկ փիլիսոփաներ էին։ ճանապարհորդելով Հունաստանում և Արևելքի երկրներում՝ սովիեստները պարզեցին, որ լուրջ տարբերություններ կան ոչ միայն այդ երկրների քաղաքական օրենքներում, այլև բարոյական կանոններում։ Ուսումնասիրելով սեփական երկրի պատմությունը՝ նրանք համոզվեցին, որ իրենց նախնիների սովորություններն ու օրենքները ևս զգալիորեն տարբեր են եղել։ Փորձելով հասկանալ մարդկանց հայացքների, սովորույթների, վարքագծի փոփոխության պատճառները՝ սովիեստները եկան այն եզրակացության, որ մարդիկ պարզապես կողմնորոշվում են օգուտի, շահի շարժառիթներով։ Օգտակարության, շահախնդրության սկզբունքը նրանք դրեցին նաև բարոյական հասկացությունների հիմքում։ Այսինքն՝ սովիեստները գտնում էին, որ մարդիկ բարի և արդար

Են համարում այն, ինչն օգտակար է իրենց անձնապես, իսկ ինչը վնասակար է, ընդհակառակը, չար է և անարդար: Յետևաբար, չի կարող գոյություն ունենալ արդարության մասին միասնական, ընդհանուր հասկացություն: Ուստի արդարությունը, ինչպես և բարոյական բոլոր հասկացությունները անհատական և հարաբերական են:

Բարոյագիտության մասին սովիեստների այսպիսի հոռետեսության դեմ հանդես եկավ հին աշխարհի մեջ մտածողներից մեկը՝ **Սուկրատեսը** (Ք. ա. 469-399): Նա համոզված էր, որ գոյություն ունեն արդարության, ազնվության, չափավորության և բարոյական այլ՝ բոլորի համար ընդհանուր հասկացություններ: Սուկրատեսն առաջին հույն մտածողն էր, որ բարոյականության, մարդու նկարագրի էռթյան հարցերը համարեց փիլիսոփայության ուսումնասիրության հիմնական առարկա՝ իր գործունեության նշանաբանը դարձնելով Դելփյան տաճարի ճակատին գրված ասույթը՝ «ճանաչի՛ր ինքր քեզ»:

Ինչպես հին հույներից շատերը, Սուկրատեսն էլ գտնում էր, որ կյանքի նպատակը երջանկությունն է, բայց դրա համար պետք է ունենալ ինքնատիրապետում և կամքի ազատություն: Կամքի ազատությունը, նրա կարծիքով, պարտադիր պայման է զգայական կրթերի նկատմամբ բանականության, ողջախոհության հաղբանակի համար: Իսկ երջանկությունը, ըստ Սուկրատեսի, արդարության և առաքինի կյանքի նկատմամբ ձգտումն է:

Սուկրատեսի բարոյագիտական տեսության շարունակողն ու զարգացնողը նրա աշակերտն էր՝



Սուկրատես
Ք.ա. V-IV դդ.

Մարդիկ, ըստ Սուկրատեսի, չարիք են գործում չիմացության հետևանքով: Յանրահայտ է սուկրատեսյան բանաձևը՝ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»: Բայց այստեղ շեշտվում է ոչ թե ամեն ինչի, այլ մարդկայինի, մարդու ներաշխարհի, սեփական անձի չիմացությունը: Սուկրատեսը գտնում էր, որ առաքինությունն առաջին հերթին որոշակի իմացություն է նշանակում: Իմաստությունը՝ թե ինչպես պահպանել օրենքները, արիությունը՝ ինչպես հաղթահարել վտանգը, չափավորությունը՝ ինչպես զսպել սեփական կրթերը:



Պլատոն
Ք.ա. V-IV դդ.

**Ըստ Պլատոնի՝ մարմինը
մահկանացու է, իսկ հոգին՝
անմահ:**

Պլատոնը (Ք. ա. 428-348): Եթե Սոկրատեսի կարծիքով ճշմարիտ գիտելիքը բարոյական օրենքների ճանաչողությունն է, ապա Պլատոնի կարծիքով՝ իրական աշխարհը օրենքների, սկզբունքների և կանոնների աշխարհն է, միաժամանակ, մարդը պետք է ձգտի գեղեցկության, բարու և ճշմարտության իդեալական աշխարհին: Գոյություն ունեցող ամեն ինչի գերազույն ու վերջնական նպատակը, բարձրագույն իդեալը բարիքն է: Բարիքն իր մեջ ունի գիտելիքը, կատարյալը և գեղեցիկը: Հատկապես վերջինը նորամուծություն էր անտիկ բարոյագիտության մեջ: Դրանով իսկ բարոյականը հանարվում էր գեղեցիկ, իսկ գեղեցիկը՝ բարոյական:

Բանի որ մարդն ապրում է հասարակության մեջ, ուստի, Պլատոնի կարծիքով, անհատական բարիքը և երջանկությունը չեն կարող նրա համար վերջնանպատակ լինել: Բարիքն ընդհանրական է, հետևաբար՝ մարդն իր անհատական բարիքը պետք է ենթարկի ընդհանուր բարիքին:

Դրա համար անհրաժեշտ են այնպիսի հասարակական պայմաններ և կառավարման այնպիսի ձև, որոնց նպատակը լինի ոչ թե առանձին մարդկանց կամ առանձին խնբերի մասնավոր բարիքի ապահովումը, այլ հասարակության բոլոր անդամների բարեկեցությունը: Այս պատճառով՝ Պլատոնը անհատական բարոյագիտությունը լրացնում է սոցիալական բարոյագիտությամբ կամ քաղաքագիտությամբ:

Բարոյականության խնդիրներին մեծ ուշադրություն է հատկացրել նաև անտիկ աշխարհի ականավոր մտածող Արիստոտելը (Ք. ա. 384-322):

Մարդը, Արիստոտելի կարծիքով, հասարակական էակ է և կարող է բարոյական կյանք վարել միայն հասարակության մեջ: Յետևաբար՝ արդարությունը, սերը և բարոյական մյուս առաքինությունները հասարակական բնույթ ունեն:

Բարոյագիտությունը, ըստ Արիստոտելի, գործնական գիտություն է և սերտորեն կապված է քաղաքագիտության հետ: Անհնար է, գտնում էր նա, գործել հասարակական կյանքում՝ չլինելով որոշակի բարոյական հատկությունների կրող, արժանի մարդ: Լինել արժանի մարդ նշանակում է օժտված լինել բարոյական առաքինություններով: Նա, ով ուզում է մասնակից լինել հասարակական քաղաքական կյանքին, պետք է լինի առաքինի վարքի տեր մարդ:

Արիստոտելը բարոյագիտությունը սահմանում է որպես այնպիսի գիտություն, որը վերաբերում է մարդու կյանքի իմաստին ու նպատակին, գիտություն այն մասին, թե մարդ ինչպես կարող է հանել բարձրագույն բարիքին՝ երջանկությանը կամ երանությանը:

Բարոյական առաքինություններից ամենակատարյալը, ըստ Արիստոտելի, արդարությունն է: Դա առաջին հերթին այն է, ինչ համապատասխանում է օրենքներին: Արդարությունը ենթադրում է նաև համաշափ բաշխում: Առավելություն պետք է ստանան նրանք, ովքեր գերազանցում են մյուսներին իրենց ծառայությամբ և արժանիքներով:

Արիստոտելը Պլատոնի աշակերտն էր և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նետագայում մեծ զորավարը Արիստոտելի մասին ասել է. «Երան պատվում եմ հորս հավասար, որովհետև հորս պարտական եմ իմ կյանքի, իսկ Արիստոտելիմ՝ այն ամենի համար, իմը կյանքին արժեք է տալիս»:



Արիստոտել
Ք.ա. 384 -322

Դանրային միասնության հասմելու համար պետք է դաստիարակել առաքինի քաղաքացիներ:

Արիստոտել

Արիստոտելը բարոյագիտությունը սահմանում է որպես այնպիսի գիտություն, որը վերաբերում է մարդու կյանքի ինաստին ու նպատակին, գիտություն այն մասին, թե մարդ ինչպես կարող է հասնել բարձրագույն բարիքին՝ երջանկությանը կամ երանությանը:



Մի բան է իմանալ, թե ինչ է բարին, մի այլ բան՝ բարիք գործելը:

Արիստոտել

Արդարությունն, ի վերջո, սեփական շահերի հավասարեցումն է ուրիշների շահերին: Մարդը երջանկության է հասնում, եթե ապրում է և իր, և իր ընտանիքի, և իր համաքաղաքացիների* համար: Արդարությունը, ինչպես և մյուս առաքինությունները մարդկային համատեղ կյանքի բարոյական հիմքն են: Ոչ միայն իին հույնները, այլև ընդհանրապես անտիկ աշխարհի մտածողներն անվերջ որոնումների ընթացքում հիմնում էին նորանոր դպրոցներ, որոնցից ամեն մեկը դառնում էր մի նոր ուսմունքի սկիզբ: Նորը հաճախ ստեղծվում էր նախորդ ուսմունքների ժխտման ճանապարհով:

Անտիկ աշխարհի ճգնաժամը ներառել էր նաև հասարակության հոգևոր-բարոյական բնագավառները: Դրա անխոս վկայությունն էր այն, որ մարդիկ իրենց ազգային ինավանդ աստվածներին զուգահեռ պաշտամունքի առարկա էին դարձնում նաև օտարամուտ աստվածների:

Սակայն այս որոնումները՝ կրոնական, փիլիսոփայական, կանոնադրական և այլն, ամբողջական պատասխան չէին տալիս մարդուն հովանող տիեզերքի, բնության, հոգևոր աշխարհի, հասարակության, մարդու և ընդհանրապես հոգևոր-բարոյական արժեքների վերաբերյալ հարցերին:

Թերևս բոլոր բնագավառներում տիրապետող դարձած անորոշությունը, հուսահատությունը ծնունդ տվեցին մի նոր աստծու գաղափարի, որն ամփոփում էր մարդու համար ամենայն անհասանելին ու անհասկանալին: Որոշ կրոնական համակարգերում այդ աստծուն անվանեցին **Անծանօթ աստված**: Ժամանակի ընթացքում մարդու հոգևոր փնտրությը պսակվեց Աստծու կողմից ժամանակ առ ժամանակ տրվող օրենքներով և պատվիրան-

ներով, որոնք սովորաբար անվանում են աստվածային հայտնություն:

S ա ս ը պ ա տ վ ի ր ա ն ն ե ր ը

Մարդկային հասարակության բարոյական սկզբունքների, կանոնների ավելի կատարելագործված համակարգ էին ներկայացնում Տասը պատվիրանները, որոնց մեջ արտացոլված և արտահայտված է Աստծու կամքն ու ձգտումը՝ առաջնորդելու նարդկանց հավատքի ճանապարհով և նրանց միջև հաստատելու արդար ու ազնիվ փոխհարաբերություններ:

Տասը պատվիրաններից (Տասնարանյա) առաջին չորսի մեջ բացատրվում են մարդու պարտականությունները և անելիքները Աստծու հանդեպ, իսկ մնացած վեցում՝ մերձավորների: Տասը պատվիրանները, որ հայտնի է որպես Յին Կտակարանի օրենք, անհրաժեշտ էին, որպեսզի մարդիկ նախօրոք պատրաստվեին ընդունելու Յիսուս Քրիստոսի պատվիրանները կամ այլ կերպ ասած՝ Քրիստոսի կատարյալ օրենքը:

**«Ես եմ քո Տեր Աստվածը ...
Ինձանից բացի այլ աստված-
ներ չպիտի լինեն քեզ համար»:**



Կուռքեր չունենաս:



Աստծու անունը գուր չտաս:



**Պատվիր քո հորն ու քո մորը,
որպեսզի բարիք գտնես, եր-
կար ապրես բարեբեր այն հո-
ղի վրա, որ Տեր Աստված
տալու է քեզ:**



Մի՛ սպանիր:



Մի՛ շնացիր:

Մի՛ գողացիր:

Մի՛ ստիր:



**Քո մերձավորի ունեցածի
վրա աչք մի՛ ունեցիր...**



Առաջադրանք

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ներկայացվող հատվածը բերված է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»:

Որոշ ուսումնասիրողներ ցույց են տվել, որ Պատմահայրն այստեղ միավորել է Հայոց պատմության հին շրջանի երկու մեծ գործիչների կերպարները՝ Տիգրան Երվանդյանի, որը Կյուրոս Մեծի ժամանակակիցն էր (Ք. ա. VI դար) և Տիգրան II Մեծ Արտաշեսյան արքայի (Ք. ա. 95-55):

Կարդալով տեքստը՝

ա. Թվարկե՛ք այն հատկանիշները, որոնք Խորենացին բնութագրական է համարում իր սիրելի հերոսի համար, որոնց շնորհիվ նա **նախանձելի եղավ իր ժամանակակիցներին, իսկ մեզ՝ հետո եկողներին՝ ցանկալի:**

բ. Քննարկե՛ք և հայոց արքայի կերպարում փորձեք առանձնացնել այն, ինչ, ձեր կարծիքով, անհրաժեշտ ու կարևոր է երկրի դեկավարի համար:

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն ու ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ:

... Հաստ բամեր բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր երվանդյան Տիգրանը, գումեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հմերը... ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն... Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի գգեստը:

Հարցեր

1. Ինչպիսի՞ պատկերացումներ կային բարոյականության վերաբերյալ իին աշխարհում: Մարդկային ո՞ր որակներն էին համարվում բարձր ու գնահատելի:
2. Դիմարևելյան շատ երկրներում բարոյական արժեքներն աստվածային պարգևները մեկնաբանել այդ դրույթը:
3. Բարոյականության պահանջն սկզբում ձևակերպվել է որպես արգելք: Բարոյական ի՞նչ արգելքներ կարող եք թվարկել: Դետագայում ինչպիսի՞ ձևակերպում են դրանք ստանում: Դասարակական մտքի ո՞ր ուղղության ձևավորմանը հանգեցրին դրանք:
4. Դիմա աշխարհում ովքե՞ր առաջինը բարոյականության հարցերը հատուկ ուսումնասիրության առարկա դարձրին: Ի՞նչ եզրակացության եկան այդ առումով սովորական երկրը՝ ուսումնասիրելով սեփական երկրի պատմությունն ու այլ ժողովուրդների սովորություններն ու օրենքները:
5. Բարոյագիտական ինչպիսի՞ տեսակետ ուներ Սոկրատեսը: Դելիյան տաճարի ճակատին գրված ո՞ր ասույթն էր դարձել նրա գործունեության նշանաբանը: Մեկնաբանեք ասույթը:
6. Սոկրատեսի տեսության շարունակողն ու զարգացնողը Պլատոնն էր: Դամառոտ ներկայացրեք նրա բարոյագիտական ուսմունքը: Ի՞նչն էր Պլատոնի կարծիքով բարձրագույն իդեալը: Այդ առումով ինչպիսի՞ նորամուծություն կար տեսության մեջ: Ի՞նչ կարծիք ուներ նա անհատական և հանրային բարիքի վերաբերյալ:
7. Ի՞նչ տեսակետներ ուներ Արիստոտելը բարոյագիտության վերաբերյալ: Ըստ նրա, ինչպիսի՞ բնույթ ունեն մարդկային առաջինությունները:
8. Ինչպե՞ս առաջացավ «Անծանոթ Աստծու» գաղափարը:
9. Ո՞րն էր Տասը պատվիրանների նպատակը: Սովորեք անգիր թվարկել Տասը պատվիրաններից այս դասի համար լուսանցքում նշվածները:

Քննարկում

- Ըստ սովեստների՝ **մարդիկ բարի և արդար համարում են այն, ինչ օգտակար է իրենց, իսկ ինչ վնասակար է, ընդհակառակը, չար է և անարդար:** Խմբային քննարկման արդյունքում պարզեր ձեր դիրքորոշումն այդ առումով:
- **Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ:** Ի՞նչ նկատի ուներ Սոկրատեսը: Ձեր կարծիքով՝ ճանաչելի՞ է արդյոք մարդու հոգեկան աշխարհը: Ինչպե՞ս:
- **Բարոյական առաքինություններից ամենակատարյալը արդարությունն է:** Մեկնաբանեք Արիստոտելի այս միտքը: Ձեր կարծիքով՝ արդարության ձգումը հասանելի՞ է մարդկանց համար, թե՞ ոչ: Հիմնավորեք ձեր տեսակետը:

Քացատրել բառը, արտահայտությունը

տարու, էթիկա, սովեստ, կոսմոպոլիտ, «ճանաչիր ինքո՛քեզ ...»

Քառարան

Համաքաղաքացիներ – Յին Յունաստանում «համաքաղաքացի» ասելով առաջին հերթին նկատի ունեին միևնույն քաղաք-պետության մեջ ապրող մարդկանց:

Կոսմոպոլիտիզմ, աշխարհաքաղաքացիություն – համընդհանուր գաղափարներով տարվածություն, ինչը հանգեցնում է անտարբերության սեփական երկրի շահերի նկատմամբ:



3. Քրիստոնեական բարոյագիտություն

Անցյալի մասին խոսելիս հաճախ օգտագործում ենք «Քրիստոսից առաջ կամ Քրիստոսի ծննդից հետո» արտահայտությունը: Շուրջ մեկուկես հազար տարի առաջ քրիստոնյաները, ապա նաև մարդկության մեջ մասը ժամանակն սկսեցին հաշվել այդպես՝ Քրիստոսի ծնունդը համարելով 1 թվական: Եվ դա պատահական չէ. իր գործունեությամբ և ուսմունքով, մահվամբ և հարությամբ Հիսուս Քրիստոս ոչ միայն քրիստոնեության և եկեղեցու հիմքերը դրեց, այլև դարձավ ընդհանրապես մարդկության պատմության մի նոր ժամանակաշրջանի սկզբնավորողը: Ընդ որում, դա արեց ոչ թե զենքով ու զորքով, այլ իր կյանքի օրինակով, խոսքով, քարոզությամբ, պարզ, բոլորին հասկանալի առակներով, ասույթներով ու պատմություններով:

Քրիստոնեությունը և նախորդ շրջանի բարոյագիտությունը

Քրիստոնեությունն արմատական փոփոխության սկիզբ դարձավ հատկապես մարդկանց բարոյագիտական պատկերացումների բնագավառում: Բարոյականության ճշմարիտ պատկերացումներն ու վեհ գաղափարները պետք է ծնվեին նախևառաջ մարդկանց հոգիներում, նրանց մտքերում: Դա իհարկե չէր նշանակում իրաժարում մինչ այդ եղած և Հին Կտակարանում ամփոփված պատվիրաններից և օրենքներից: «Ես չեմ եկել

Աստված սեր է:

Նոր Կտակարան



Քրիստոնեությունն արմատական փոփոխության սկիզբ դարձավ հատկապես մարդկանց բարոյագիտական պատկերացումների բնագավառում:

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յիսուս Քրիստոսը ոչ միայն քրիստոնեության և Եկեղեցու հիմքերը դրեց, այլև դարձավ քննիանրապես մարդկության պատմության մի նոր ժամանակաշրջանի սկզբնավորողը:



Ես չեմ Եկել վերացնելու օրենքը կամ մարգարեներին, այլ՝ լրացնելու:

Վերացնելու օրենքը* կամ մարգարեներին, այլ՝ լրացնելու», - ասում էր Յիսուսը: Նա օրենքը լրացրեց խոսքով և գործով: Քրիստոնեական բարոյական իդեալին հասնելը դարձավ մարդու համար նպատակ, այդ իդեալներով առաջնորդվելը՝ ապրելաձև:

Յրեական հասարակության մեջ օրենքի պաշտպան համարվող փարիսեցիները բառացի էին հասկանում օրենքներն ու բարոյականության կանոնները, որա համար էլ դատապարտում էին շաբաթ օրը անգամ բարի գործեր անելը (շաբաթը երրայական հանգստի օրն է, և որևէ աշխատանք այդ օրն արգելվում է): Նրանց հայեցակետն օրինականության ձևապաշտական ընկալումն էր: Քրիստոսի տեսակետը բոլորովին այլ էր. օրենքը կատարել՝ նրա ոգուն և եռությանը համապատասխան: Նրա հայեցակետը բարոյականությունն էր: Ի տարբերություն փարիսեցիների և օրենքի մյուս ձևապաշտ հետևորդների՝ Յիսուսը ճիշտ և բարոյական էր համարում նաև շաբաթ օրը անդամալույթին բժշկելը և այլ բարի գործեր անելը:

Վերջապես, համայն մարդկության համար, նախընթաց ողջ ժամանակաշրջանում բարոյական նորմերն ու կանոնները մարդու կյանքը կարգավորում էին իիմնականում բացասող, արգելող միջոցներով (մի՛ սպանիր, մի՛ գողացիր և այլն): Յիսուսի, նրա աշակերտների ու հետևորդների համար գլխավոր սկզբունքը դրական, պատճառական բնույթ ուներ, այսինքն՝ արեք այն, ինչ կամենում էք, որ ձե՛ք անեն:

Բարոյագիտության քրիստոնեական ուսմունքը

Բարոյականության վերաբերյալ քրիստոնեական տեսությունը նոր մոտեցում և սկզբունք էր առաջադրում:

Մարդուն, մարդկայինին վերաբերող այդ նոր մոտեցման հիմքում ամենից առաջ սերն է դրված: «Աստված սեր Է», - ասվում է Նոր Կտակարանում: Սեր Աստծո և մարդկանց նկատմամբ, գուցեն առաջին հայացքից տարօրինակ ու անհավատալի թվացող սեր: Եվ այդ սիրո ճանապարհը բարությունն է, ներողամտությունը դեպի մերձավորը: Աստծու համար, ըստ քրիստոնեության, ընտրյալ մարդիկ և առավել ևս ընտրյալ ժողովուրդներ չկան: Բոլորը հավասարապես Աստծո արարածներ են: Յուրաքանչյուրը կարող է ազատվել մեղքից նախ մկրտությամբ, իսկ հետո՝ ապաշխարելով, դեպի բարին, ճշմարիտը, կատարյալն իր ամենօրյա ձգտումով, իր գործով, իր ապրած կյանքով:

Իր աշակերտներից Յիսուսը պահանջում էր սիրել ոչ միայն բարեկամներին, որոնք փոխադարձաբար սիրում են. դա դժվար չէ, չէ՞ որ նույնն էն անում նաև մաքսավորներն ու մեղավորները: Դա մի չլսված, աննախադեպ հեղաշրջում էր մարդու ողջ հոգեկան աշխարհում:

Սիրել նշանակում էր հրաժարվել եսակենտրոն (եգոխատական) սիրուց, վեր կանգնել սեփական անձի նեղ շահերից և բարությամբ ու սիրով վերաբերվել ուրիշներին, որոնց մեջ շատերը



Յիսուսի, նրա աշակերտների ու հետևորդների համար գլխավոր սկզբունքը դրական բնույթ ուներ, այսինքն՝ արեք այն, ինչ կամենում եք, որ ծե՛զ անեն:

Մարդուն, մարդկայինին վերաբերող այդ նոր մոտեցման հիմքում ամենից առաջ աստվածային սերն է դրված:



**«Սիրիր քո Տեր Աստծուն» և
«Սիրեցեք միմյանց» այս պատ-
վիրանները քրիստոնեական
բարոյագիտության հիմքն են:**

Կարող են մեզ համար լինել անգամ տիած, չար, անցանկալի: Չէ՞ որ Հիսուս Քրիստոսն իր Երկրային կյանքն ավարտեց խաչելությամբ, այսինքն՝ մարդկանց փրկության համար արված ինքնազնու- ղությամբ: Այդ գոհաբերությունը մարդկանց նկատ- մանք աստվածային անսահման սիրո արտահայ- տությունն է: Եվ ինչպես որ Աստված է անսահ- մանորեն սիրում ու պահպանում իր կողմից արարված ամեն ինչ, այդպես էլ, ըստ քրիստո- նեական աշխարհընկալման, մարդը պիտի սիրի իր արարիչ Աստծուն և Նրա արարչագործության արդյունք հանդիսացող աշխարհն ու մարդկանց: «Սիրիր քո Տեր Աստծուն» և «Սիրեցեք միմյանց»: այս պատվիրանները քրիստոնեական բարոյա- խոսության հիմքն են:



Առաջադրանք

Ստորև տրվող հատվածը Հիսուս Քրիստոսի Եթոան քարոզից է: Տեքստը կարդալուց հետո դասարանում կազմակերպեք քննարկում և փորձեք պարզաբեր թե բարոյական ի՞նչ արժեքների մասին է այստեղ խոսվում:

Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:

Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան:

Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն:

Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:

Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:

Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:



Ավետարան ըստ Մատթեոսի

Հարցեր

1. Ինչպիսի՞ թվագրություն ենք մենք կիրառում: Ինչի՞ մասին է վկայում այն:
2. Բարոյագիտական նոր պատկերացումներն ու գաղափարները նշանակո՞ւմ էին արդյոք հրաժարում մինչ այդ եղած պատվիրաններից: Եթե ոչ, ապա Յիսուս Քրիստոսի ո՞ր ասուլյթն է հիմնավորում դա:
3. Բարոյականության օրենքներն ու կանոններն ինչպե՞ս էին հասկանում փարիսեցիները և նրանց կողմնակիցները: Ինչպիսի՞ն էր Յիսուսի հայեցակետն այդ առումով:
4. Բարոյականության վերաբերյալ քրիստոնեական տեսությունը նոր մոտեցում և սկզբունք էր առաջադրում: Ո՞ր գաղափարն ու պատվիրանն էր դրված այդ մոտեցման հիմքում:
5. Բոլորը հավասարապես Աստծու արարածներ են: Ի՞նչն է, ըստ քրիստոնեության, մարդկանց հավասար դարձնում:

Քննարկում

Միրեցե՛ք միմյանց: Խսմբային քննարկման ընթացքում փորձե՛ք հասկանալ և պարզաբանել քրիստոնեական բարոյախոսության այս կարևորագույն դրույթը:

Բառարան

Օրենք – տվյալ դեպքում դա նշանակում է Յին Կտակարանում մարդկանց համար սահմանված վարքագծի կանոններն ու օրենքները:

4. Քրիստոնեական իդեալ

Յավատը, հույսը և սերը քրիստոնեական բարոյականության երեք հիմնական դրսնորումներն են:

Հավատ

Անձնական և հասարակական հարաբերություններում հավատալ նշանակում է վստահել:

Յավատն ընդիմանրապես կապված է մարդու կամքի հետ և մարդու բարոյական կյանքի դրսնորումն է: Այն կարող է լինել կրոնական և ոչ կրոնական: Յավատն ինքնին ներկա է մարդկային կեցության ամենատարբեր բնագավառներում. այն երբեմն նույնացնում են ճանաչողության հետ: Սակայն նյութապես առկա, տեսանելի առարկայի առավել կամ նվազ ճանաչողությունը կապված է գիտական նվաճումների, ուսումնասիրությունների հետ, ուստի առարկայի ուսումնասիրությունը կարող է լինել ճանաչողության համոզում, բայց ոչ երբեք հավատ: ճանաչողությունն ինքնին առաջնություն չէ, որովհետև այն ակամայից կատարվող իրողություն է, երբ մարդ իբրև դիտող ծանոթանում է արտաքին աշխարհի հետ:


Յավատի ներկայությունը կենսականորեն անհրաժեշտ է կրոնական կյանքում: Կրոնական իմաստով հավատը խարսխված է այն համոզմունքի վրա, թե Աստված մարդկային գիտակցությունից անկախ գոյություն ունեցող բացարձակ ճշմարտություն է: Եվ դա փիլիսոփայությանը հատուկ վերացական գաղափար չէ:



«Բայց արդ, մնում են հավատ, հույս, սեր. սրամք երեքը»:



ճանաչողությունն ինքնին առաջինություն չէ, որովհետև այն ակամայից կատարվող իրողություն է, երբ մարդ իբրև դիտող ծանոթանում է արտաքին աշխարհի հետ:



Հավատը համակում է հոգու բոլոր ուժերը, այն բխում է մեր էության խորքերից, ընթացքի մեջ դնում մեր միտքը, կամքը և զգացումը. Արա համար խորք են տրամարանական սառը հաշվարկը, մտամարզական ապացույցը կամ թեական ենթադրությունը. Արան բնորոշ է լիակատար համոզումն Աստծու ծշմարտացիության, որով «ապրում ենք, և շարժվում ենք, և կամք»:

Առանց Աստծու նկատմամբ հավատի, չի կարող լինել բարձր բարոյականություն, սրբություն և վեհություն: Երբեմն մարդն ինքնարավ մեծամտությամբ իրեն հաստատելով ինքն իր մեջ՝ իրեն դարձնում է իր իսկ կյանքի կիզակետը, որի հետևանքով նրա բարոյականությունն անխուսափելիորեն ապականվում և այլասերվում է: Ինքն իր «ես»-ի նկատմամբ կեղծ սեր տածողը կեղծ սեր էլ տածում է աշխարհի, շրջապատի հանդեպ:

Եթե նյութական աշխարհի գոյության վերաբերյալ մեր համոզումը հիմնված է ճանաչողության վրա, ապա անտեսանելի Աստծու վերաբերյալ մեր համոզումը՝ հավատի: Հավատին բնորոշ է նաև սիրո զգացումը, որովհետև կրոնական հավատի առարկան անձն է, անձնավոր Աստված. սիրո առարկա կարող է լինել և պետք է լինի միայն անձը: Ուստի հավատը համակում է հոգու բոլոր ուժերը, այն բխում է մեր էության խորքերից, ընթացքի մեջ դնում մեր միտքը, կամքը և զգացումը: Հավատի համար խորք են տրամարանական սառն հաշվարկը, մտամարզական ապացույցը կամ թեական ենթադրությունը. Արան բնորոշ է լիակատար համոզումն Աստծու ծշմարտացիության, որով «ապրում ենք, և շարժվում ենք, և կամք»:

Սակայն որտեղի՞ց է բխում հավատը: Ինչի՞ վրա է հիմնված Աստծու գոյության, հայտնության ծշմարտացիության վերաբերյալ վստահությունը: Հավատի հիմքը Աստծու և մարդու միջև առկա խորհրդավոր կապի գիտակցումն ու զգացումն է: Եթե հեթանոսներն այս գիտակցությունն ունեին նյութական աշխարհի արարչության վկայակոչու-

ՁՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐԸ

մով, ապա քրիստոնյաները՝ Աստծու Որդու՝ մարմնացած Խոսքի շնորհիվ, որովհետև ինչպես նկատում է նույն ինքը՝ մարմնացած Խոսքը՝ Դիսուս Քրիստոսը, «Ով Աստծուց է, Աստծու Խոսքերն է լսում», «Ամեն մարդ ով ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է»:

Դավատի մաքրության և հաստատման համար անհրաժեշտ է սրափի գիտակցություն: Առաջյալները քրիստոնյաներին իրահանգում են հավատի մեջ լինել զգաստ, չիրապուրվել ամեն տեսակ ուսմունքներով: Ինքը՝ Քրիստոսը, ամենկին էլ կույր հավատ չէր պահանջում իր նկատմամբ: Իր ուսմունքի հաստատման համար նա մշտապես վկայակոչում էր իր գաղափարների վեհությունն ու ճշմարտությունը, իր կյանքի սրբությունը, հինկուտակարանյան մարգարենությունները: Ուստի հավատի զորացնան համար անհրաժեշտ է հաղթահարել կյանքի բոլոր վայրիվերումները և ամրանալ բարոյական կյանքում:

Դավատի ամենազոր ուժի մասին է վկայում Քրիստոսն ինքը, երբ անհնարը հնարավոր է համարում հավատացյալների համար. «ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեղափոխվիր այստեղից այնտեղ և կտեղափոխվի, և որևէ բան ձեզ համար անհնարին չի լինի»: Ու եթե հավատը մարդուն Աստծու հետ միավորող այսպիսի ուժ է, ապա միանգամայն հասկանալի է այն մեծ կարևորությունը, որ Քրիստոսը և նրա առաքյալները վերապահում էին հավատին: Նրանք շեշտում էին այն բացառիկ դերը, որ կատարում էր



Դավատի իիմքը Աստծու և մարդու միջև առկա խորհրդավոր կապի գիտակցումն է:

Հավատի ամենազոր ուժի մասին է վկայում Քրիստոսն ինքը, երբ որ անհնարը հնարավոր է համարում հավատացյալների համար. «Եշմարիտ եմ ասում ծեզ, եթե մանամեխի հատիկի չափ հավատ ունենք, այս լեռանը կասեք՝ տեղափոխսվիր այստեղից այստեղ, և կտեղափոխվի, և որևէ բան ծեզ համար անհնարին չի լինի»:



հավատը մարդու կյանքում և փրկության մեջ: Ժողովրդի այն հարցին, թե՝ «Ի՞նչ անենք, որ Աստծու ուզած գործերը գործենք», Քրիստոսը պատախանում է. «Աստծու ուզած գործը այս է, որ հավատաք նրան, ում նա ուղարկեց», որովհետև «Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանք»:

Հույս

Հույսը սերտորեն աղերսված է քրիստոնեական հավատի հետ: Աշխարհիկ կյանքում հույսի աղբյուրը ենթադրությունն է, ցանկությունը: Առօրյա կյանքում մենք կարող ենք հուսալ, որ այսպես կլինի կամ չի լինի, տեղի կունենա և կամ տեղի չի ունենա, կհաջողվի և կամ չի հաջողվի: Մարդու և կամ նյութի նկատմամբ հույսն իր մեջ միշտ ունի թեական, հարցական մաս:

Քրիստոնեական իմաստով՝ հույսի աղբյուրը և առարկան, նպատակը Աստված է: Եվ քանի որ հույսի հիմքը հավատն է առ Աստված, ուստի քրիստոնյայի համար կատարյալ հավատն ու հույսը սերտորեն փոխկապակցված են: Եթե հավատը անառարկելի համոզում ու վստահություն է «աներևույթ»-ի, այն է՝ Աստծու նկատմամբ, ապա հույսը «ցանկալիի ու սպասելիի», այն է՝ աշխարհի արարչության և մարդու փրկության իրականացնության համոզումն ու վստահությունն է: Հույսը, մասնավորապես քրիստոնեական հույսը, միտված է ապագային, քայց քանի որ բարոյական կատարելագործման կարելի է հասնել նաև այս կյան-

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

քում, ուստի այն միտված է նաև այս կյանքին: Քրիստոնեական հույսի նպատակակետը ոչ միայն բարոյական և հոգևոր բարիքն է, այլև՝ նյութական, մարմնավոր (առողջություն, ունեցվածք և այլն), եթե վերջիններս օգտագործվում են հոգևոր բարիք ձեռք բերելու համար: Պատահական չէ, որ Քրիստոսն ինքը սովորեցնում է աղոթել «հանապազ-օրյա հացի» համար:

Այսպիսով, քրիստոնեական հույսի մեջ մեկտեղ-ված են ներկան և ապագան: Ով առաջնորդվում է այդ հույսով, նա երբեք չի խոտորվի աստվածահա-ճո ճանապարհից: Յուսը ծշմարիտ ու կենդանի չէ, եթե լոկ սպասում կամ ակնկալություն է, եթե նրա նպատակն ու առարկան անորոշ և մշուշոտ ապա-գայում է: Բայց քանի որ հույսի վերջնական հանգրվանը Քրիստոսի անձն է, ապա մարդը փրկվում է հույսով: Սակայն, այդուհանդերձ, մարդու հոգևոր և բարոյական վերելքի ճանապար-իին հավատը և հույսը, լինելով կարևոր հանգր-վաններ, դեռ գագաթ առաջնորդող միջոցներ են միայն:

Քրիստոս ամենակին էլ կոյր հավատ չէր պահանջում իր նկատմամբ: Իր ուսմունքի հաս-տատման համար նա մշտապես վկայակոչում էր իր գաղափար-ների վեհությունն ու ծշմարտու-թյունը, իր կյանքի սրբությունը, իինկատակարամյան մարգա-րեռությունները:



Դավատը լեռ կշարժի:

Մեր

Ի տարբերություն աշխարհային կամ կենցաղային հույսի, քրիստոնեական հույսը իրական և շոշափելի է, քանի որ «Դույսը երբեք չի աճաշեցնում»:



Բարոյական արժեհամակարգի գագաթը Աստծու հանդեպ սերն է: Սերը, քրիստոնեական հասկացողությամբ, տարբեր է, այն անձնական սեր չէ (եթք մեկը սիրահարվում կամ սիրում է ուրիշ մեկին): Քրիստոնեական սերը «անանձնական» է, վեր է զգացնունքային սիրուց: Դավատի ու հույսի միջոցով ճանաչելով ամեն ինչում կատարյալ ու արարիչ Աստծուն՝ մարդը սիրում է արարչին, ձգտում է դեպի այդ կատարելությունը: Դեպի Աստված տանող սիրո այդ ճանապարհին մարդը նախ ճանաչում, գիտակցում է Աստծու արարչագործության կատարելությունն ու գեղեցկությունը, առանձնակի սիրով է լցվում բնության, կենդանական աշխարհի, մեր մոլորակի ու ողջ տիեզերքի հանդեպ: Եվ իմանալով, որ այդ ամենի մեջ մարդն է միայն, որ ունի Աստծու պատկերը, այսինքն՝ բանականություն, ազատ կամք, գիտակցություն և այլն, սիրում է այդ ամբողջ արարչագործության թագն ու պսակը հանդիսացող մարդուն: Եվ գիտակցելով, որ իրենից վեր Աստվածն է, որ կատարյալ է, մարդը ձգտում է դեպի իր արարիչը: Ուստի քրիստոնյայի սերը Աստծուն միավորվելու բոցավառ, անձնուրաց փափագ է:

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


«Ով սիրո մեջ է ապրում, - ասում է Հովհաննես առաքյալը,- բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ»: Սիրո շնորհիվ Աստծու և մարդու միջև հաստատվում է հոր և որդու հարաբերություն, ինչը բացում է հավատացյալի սիրտը Աստծու առջև՝ ընդունելու համար աստվածային շնորհմերը: Աստծու և մարդու այսօրինակ հարաբերությունը նմանեցվում է բարեկամների հարաբերությանը, որի մասին Քրիստոս ասում է. «Այլև ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե Տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ հորից լսեցի, հայտնեցի ձեզ»: Սակայն ինչպես հավատը և հույսը, այնպես էլ սերը դառնում է բարոյական արժեք և առաքինություն, երբ այն ներքափանցված է լինում պարտքի գիտակցությամբ: Առաջին հայացքից սերը և պարտքը անհամատեղելի են թվում. մի՞թե կարելի է կարգադրությամբ սիրել: Այս առումով Աստվածաշունչ մատյանում կա Աստծու հանդեաւ սիրո մասին մասնավոր պատվիրան. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծ և առաջին պատվիրանը»:

Բայց կարող է միանգամայն օրինաչափ հարց առաջանալ. մի՞թե ինարավոր է սիրել անտեսանելի Աստծուն և եթե ինարավոր է, ապա՝ ինչպե՞ս: Այս պատճառով Հովհաննես առաքյալն ասում է. «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել»: Ուստի Աստծու հանդեաւ սերը պետք է նախ դրսնորվի մարդկանց միջև եղած փոխադարձ սիրո մեջ:

Քրիստոնյայի սերը Աստծուն միավորվելու բոցավար, անձնութաց փափագ է: Սաղմոսերգում այդ փափագն արտահայտում է հետևյալ բառերով. «Ինչպես եղցերուն ջրի ակունքներին է փափագում, այնպես էլ ես քեզ եմ փափագում, ո՞վ Աստված, հոգիս ծարավ է քեզ, Աստված հզոր և կենդանի»:



«Ով սիրո մեջ է ապրում, - ասում է Հովհաննես առաքյալը,- բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ»:



**Յովիաննես առաքյալն
ասում է. «Ով չի սիրում իր եղ-
բորը, որին տեսնում է, ինչպե՞ս
կարող է սիրել Աստծուն, որին
չի տեսել»:**



**Յիսուս Քրիստոսը լոկ ան-
ցյալին պատկանող պատճա-
կան անձ չէ, որ կատարելով
սիրալի գործեր՝ հեռացել է
աշխարհից: Նա կենդանի, հա-
վիտենական Աստված է, որ այ-
սօր էլ աներևութապես ներկա է
մարդկանց մեջ, և Սուրբ Յոգու
ներգործությամբ մեզանում
սեր է բորբոքում Աստծու և
մարդկանց նկատմամբ:**

Եվ մենք՝ աղամորդիներս, սովորում ենք սիրել Աստծուն՝ նախ սիրելով մարդուն, որ Աստծու պատկերն ու նմանությունն է, ապա պատասխանելով Աստծուն՝ արարչագործության և հատկապես մարդու հանդեպ ցուցաբերած սիրո համար: Սուրբ Գիրքը սովորեցնում է սիրել Աստծուն մարմնացած ու մարդացած Աստծու Որդու՝ Յիսուս Քրիստոսի միջոցով և օրինակով, որն իր մեջ խտացրել է Աստվածությանը հատուկ բացարձակ բարիքն ու սերը, որի կատարելագույն դրսևորումն ինքնազոհաբերումն է: Սակայն Յիսուս Քրիստոսը լոկ անցյալին պատկանող պատմական անձ չէ, որ կատարելով սիրալի գործեր՝ հեռացել է աշխարհից: Նա կենդանի, հավիտենական Աստված է, որ այսօր էլ աներևութապես ներկա է մարդկանց մեջ և Սուրբ Յոգու ներգործությամբ մեզանում սեր է բորբոքում Աստծու և մարդկանց նկատմամբ:

Բնական է, որ Աստծու հանդեպ սերը չի կարող քողարկված մնալ. այն ունի իր դրսևորման կերպերը: Ինչպես երեխան իր հորը մոտենում է ակնածանքով ու որդիական երկյուղածությամբ, այնպես էլ քրիստոնյան երկնավոր Յոր հանդեպ իր սերը պետք է արտահայտի այդ զգացումներով: Աստծու նկատմամբ երկյուղը պայմանավորված է նրա՝ որպես երկնավոր սիրելի ծնողի հանդեպ որևէ վատ, վիրավորական արարք չգործելու անհրաժեշտությամբ: Այսօրինակ երկյուղածությունը ոչ միայն չի հակասում սիրուն, այլև նույնիսկ պահանջվում է վերջինիս կողմից և համերաշխ է նրան: Եվ իրոք, անկեղծորեն սիրելով մեկին՝ մենք ամեն կերպ զգուշանում ենք չվիրավորել նրան: Որքան բարձր

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Է սիրելի եակը, այնքան մեծ է պատկառանքն ու երկյուղածությունը նրա նկատմամբ: Յետևաբար՝ հասկանալի և օրինաչափ է այն երկյուղած սերը, որ պետք է մարդը տածի բացարձակ Սիրո՝ Աստծու հանդեպ: Այդ պատճառով էլ Աստվածաշնչում Աստծու նկատմամբ երկյուղը համարվում է իմաստության սկիզբը: Բայց կա նաև ստրկական վախ, որ անհամատեղելի է սիրո հետ: Այդ վայել չէ ճշմարիտ քրիստոնյային: Նկատի ունենալով այդպիսի վախս՝ Յովիաննես առաքյալը գրում է. «Սիրո մեջ երկյուղ չկա և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը, որովհետև երկյուղը տանջանքի ենթակա է, և ով երկնչում է, կատարյալ չէ սիրո մեջ»: Քանի դեռ մարդու գործունեության մղիչ ուժին խառնվում է ստրկական երկյուղը, այսինքն՝ պատժվելու վախսը, տագնապը, խղճի խայթը, անհանգստությունը, նա գտնվում է բարոյական զարգացման ցածր մակարդակում: Բայց որքան քրիստոնյան կատարելագործվում է բարոյական կյանքում, գորանում սիրով և այդ սիրով միավորվում Աստծու հետ, այդքան ստրկական վախսը նահանջում է՝ իր տեղը զիջելով սիրո հետ շաղախված որդիական երկյուղին, որը մարդկային հոգու մեջ խաղաղություն է հաստատում:

Աստծու և մարդկանց հանդեպ տածվող սերերը ոչ միայն ներդաշնակ են, այլև պահանջում ու պայմանավորում են իրար: Սիրելով Աստծուն՝ մարդը պարտավոր է սիրել նաև բովանդակ աստվածային արարչությունը:

Աստծու հանդեպ սերը պետք է վկայվի երախտագիտությամբ, որը մարդու շնորհակալության

Սիրո մեջ երկյուղ չկա և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը, որովհետև երկյուղը տանջանքի ենթակա է, և ով երկնչում է, կատարյալ չէ սիրո մեջ»:



Աստծու և մարդկանց հանդեպ տածվող սերերը ոչ միայն ներդաշնակ են, այլև պահանջում ու պայմանավորում են իրար: Սիրելով Աստծուն՝ մարդը պարտավոր է սիրել և բովանդակ աստվածային արարչությունը:

Քրիստոնեական իդեալը հոգևոր բարոյական արժեքների այն ամբողջությունն է, որ մեզ ավանդված է այդ արժեքները մարմնավորող Դիսու Քրիստոսի կողմից ու մեր մեջ հաստատված ներքին փորձառությամբ, այն է՝ Աստծու հետ տևական կենդանի հաղորդակցությամբ։ Այդ հաղորդակցության մեջ է հայելանում այն լավագույնը, որի խտացումը քրիստոնեական իդեալն է՝ իր երեք կարևորագույն բաղադրամասերով՝ հավատ, հույս, սեր։



Դրսնորումն է ի վերուստ տրված շնորհների համար։ Երախտագետ քրիստոնյան իր փոքրիկ, առտնին հաջողությունների մեջ իսկ տեսմում է Աստծու օրինությունը։ Աստծու նկատմամբ երախտագիտությունն արտահայտվում է աղոթքով, նվիրաբերությամբ, ողորմածությամբ։ Վերջին պարագայում երախտագետ անձը հիշատակում է Քրիստոսի խոսքը. «Ճշմարիտ են ասուն ձեզ, քանի որ ին այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ինձ համար արեցիք»։

Ինչպես զավակը, սիրելով իր ծնողին, մեծարում է նրան և նախանձախնդիր է նրա պատվին, ճիշտ այդպես էլ ադամորդին, սիրելով Աստծուն՝ մեծարում է Նրան։ Մեծարել Աստծուն նշանակում է բովանդակ վարք ու բարքով և դրա համար սահմանված եղանակներով սիրահոժար խոստովանել Աստծու վեհությունն ու փառքը։

Եվ, վերջապես, Աստծու հանդեպ սերը դրսնորվում է նաև այն ժամանակ, երբ մարդիկ հիշում են Նրան ու Նրա պատկերը սրբորեն պահում իրենց սրտերում։ Սա նշանակում է զերծ մնալ քրիստոնյային անվայել ցոփ ու շվայտ կենցաղավարությունից, հաճախ միտքը կենտրոնացնել Աստծու վրա և խորիել հավիտենական արժեքների մասին։ Սրա շնորհիվ Աստված, ներկա գտնվելով մարդկանց մեջ՝ կառավարում է նրանց և առաջնորդում արդարության, լույսի ճանապարհով դեպ հավիտենական կյանք։

Այսպիսով, քրիստոնեական իդեալը հոգևոր բարոյական արժեքների այն ամբողջությունն է, որ մեզ ավանդված է այդ արժեքները մարմնավորող

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀՄՄԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիսուս Քրիստոսի կողմից ու մեր մեջ հաստատված ներքին փորձառությամբ, այն է՝ Աստծու հետ տևական կենդանի հաղորդակցությամբ։ Այդ հաղորդակցության մեջ է հայելանում այն լավագույնը, որի խտացումը քրիստոնեական իդեալն է՝ իր երեք կարևորագույն բաղադրամասերով՝ հավատ, հույս, սեր:



Ինչպես զավակը, սիրելով իր ծնողին, մեծարում է նրան և նախանձախնդիր է նրա պատվին, ծիշտ այդպես էլ աղամորդին, սիրելով Աստծուն, մեծարում է նրան։ Մեծարել Աստծուն նշանակում է բովանդակ վարք ու բարքով և դրա համար սահմանված եղանակներով սիրահոժար խոստովանել Աստծու վեհությունն ու փառքը։

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են քրիստոնեական հավատի հիմնական դրսնորումները:
2. Ներկայացրեք հավատի և ծանաչողության տարրերությունը:
3. Ո՞րն է ծշմարիտ սիրուն հասնելու ծանապարհը:
4. Ո՞րն է հավատի հիմքը:
5. Ո՞վ է հույսի աղյուրը քրիստոնեական իմաստով և ի՞նչն է հույսի հիմքը:
6. Ո՞րն է հույսի նպատակը: Ինչո՞ւ է Քրիստոս ինքը մեզ սովորեցնում աղոթել հանապազօրյա հացի համար:
7. Ինչպիսի՞ զգացումներով քրիստոնյան պետք է իր սերն արտահայտի Աստծու նկատմամբ: Ինչպե՞ս է մարդկային հոգում հաստատվում խաղաղությունը:

Քննարկենք

1. Մեկնարանեք «Ով Աստծուց է, Աստծու խոսքերն է լսում», «Ամեն մարդ, ով ծշմարտությունից է, իմ ձայնը լսում է» Քրիստոսի խոսքերը:
2. Քննարկեք, ինչպիսի՞ նշանակություն ունի հույսը մարդու համար:
3. Բաժանմվեք խմբերի և դասարանին ներկայացրեք ձեր խմբի կարծիքը Աստվածաշունչ մատյանի հետևյալ պատվիրանի վերաբերյալ. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեջ և առաջին պատվիրանը»:
4. Կատարեք «Ստբերի տարափ» վարժությունը՝ որպես վերմագիր ընտրելով «Քրիստոնեական իդեալ» հասկացությունը:



5. Մարդ - Անձնութեառ և Առաքելողայութեառ

Մեզ շրջապատող աշխարհը բազմազան է, հրապուրիչ, անսահման գեղեցիկ, հրաշքներով լեցուն: Կենդանական աշխարհն իր բյուրավոր տեսակներով ողջ տիեզերքին կենսականություն է հաղորդում: Եվ զարմանահրաշ այս աշխարհում ամեն ինչ, անգամ ամենափոքր բանն ունի իր նպատակն ու առաքելությունը: Մի պահ մտածենք, թե ի՞նչ իմաստ կունենար այդ ամենը, արեգակի ամենօրյա ծագելն ու մայր մտնելը, եթե այս ամենի մեջ բացակայեր բանական միակ արարածը՝ մարդը:

Ողջ տիեզերքում բանականություն ունեցող միակ արարածը մարդն է: Այսինքն՝ մարդն այս հրաշալի համակարգում եղակի է, միայն նա կարողություն ունի մտածելու, խորհելու, գնահատելու, արժնորելու, ուսումնասիրելու անհայտը և նման շատ ու շատ բաներ:

Այս համատեքստում՝ ո՞վ է մարդը: Ո՞րն է նրա կոչումը: Ո՞րն է կյանքի իմաստը: Եվ վերջապես, ո՞վ են ես:

Մենք տեսնում ենք, որ այս աշխարհում ամեն ինչ փոխվում է ժամանակի ընթացքում, գալիս գնում են սերունդները, քաղաքակրթությունները, պետությունները և, բնականաբար, հարց է ծագում. մի՞թե չկան արժեքներ, որ մնայուն են, արժեքներ, որոնք պետք է սրբությանք պահել, որոնք չեն փոխվում ոչ ժամանակի մեջ, ոչ էլ տարածության:

Ո՞վ է մարդը: Ո՞րն է նրա կոչումը: Ո՞րն է կյանքի իմաստը:



Ողջ տիեզերքում բանականություն ունեցող միակ արարածը մարդն է: Այսինքն՝ մարդն այս հրաշալի համակարգում եղակի է, միայն նա կարողություն ունի մտածելու, խորհելու, գնահատելու, արժնորելու, ուսումնասիրելու անհայտը և նման շատ ու շատ բաներ:



Իսկ եթե կան նման արժեքներ, արժեքային համակարգեր, առանց որոնց դժվար, եթե ոչ անհնար է պատկերացնել նարդուն և նարդկային հասարակության գոյությունը, ապա հենց դրանց վրա պետք է հենվել: Այդպիսի արժեքները և արժեքային համակարգերը կոչվում են բացարձակ արժեքներ: Մարդու համար այդ արժեքները հոգևոր, բարոյական առաքինություններն են՝ հավատք, հույսը, սերը, բարիք գործելը, հավատարմությունը, պատասխանատվությունը, հայրենասիրությունը և այլն:

Կյանքի իմաստը

Վերևում թվարկված բացարձակ արժեքները, թեև խիստ անհատական բնույթ ունեն և կարևոր են անհատ մարդու համար, բայց և այդ արժեքներով է պայմանավորված հավաքական - հասարակական կյանքը՝ ընտանիք, համայնք, հասարակություն, ժողովուրդ, պետություն և այլն: Յասկանալի է, որ ամեն մարդ իր կարողությունների, մտածողության ու պատկերացումների սահմաններում պիտի ծնավորի բացարձակ արժեքների իր համակարգը, իրեն հուզող հարցերի պատասխանը: Ընտանիքը, հասարակությունը, կրթությունն ու դաստիարակությունը, գիտելիքներն օգնում են անհատին բացարձակ արժեքների ճանաչողության հարցում:

Երկու տեսակետ

1. XIX դարում որոշ փիլիսոփաներ (օրինակ՝ գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցշեն) առաջ քաշեցին մի տեսակետ, համաձայն որի՝ մինչև այժմ արժևորված ամեն ինչ անհմաստ է, և Ժխտական դիրք բանեցին բացարձակ արժեքների նմանատիպ ընկալման հանդեպ: Այդ ուսմունքն այդպես էլ անվանվեց՝ Ամիկիլիզմ*, լատիներեն ուիլ (ոչինչ) բառից:

2. Մրան հակառակ է մարդու՝ կյանքում նպատակների և գաղափարների ձգտելը, այդ գաղափարների բացարձակությունը, որոնք բարձր ու վեհ արժեք են ներկայացնում, և այնպիսի արժեք, որ մարդն իր անձնական շահի ձգտումները պիտի ստորադասի դրանց:

Առանց այս վերջին արժեքային համակարգի մարդը կորցնում է իր աստվածային կերպարը և նմանությունը:

Այդ արժեքներն անհրաժեշտ պայման են մարդու բարոյական կյանքի համար, և որոնք ինչպես տվյալ անհատի, այնպես էլ հասարակության ու մարդկության իդեալն են, նպատակը:

Այդպիսին է մարդը. նա չի կարող չմտածել, չի կարող չխորհել, առաքինությունների ճանապարհով վեր չբարձրանալ, էլ ավելի կատարյալ չլինել, որովհետև հակառակ դեպքում կկորցնի բարոյական կերպարը և ավելի վատ կացության մեջ կհայտնվի:



Այդպիսին է մարդը. նա չի կարող չմտածել, չի կարող չխորհել, առաքինությունների ճանապարհով վեր չբարձրանալ, էլ ավելի կատարյալ չլինել, որովհետև հակառակ դեպքում կկորցնի բարոյական կերպարը և ավելի վատ կացության մեջ կհայտնվի:



Բացարձակ արժեքներին ձգտելը, այդ արժեքներով ապրելը կյանքի նպատակներից է, բանականության հաղթամակն է և Աստծու կողմից մարդուն տրված նպատակը:



Ո՞վ է մարդը

Մարդուն հասկանալու, այդ խորհուրդը գտնելու ճանապարհ է ցույց տվել հույն իմաստասերներից թալեսը, որի հայտնի խոսքը փորագրված է եղել Ղելփի Ապոլոնյան տաճարի մուտքի վրա:

ԾԱՆԻՌ ԶՔԵԶ

ճանաչիր ինքդ քեզ (լատիներեմ՝ nosce et ipsum) և կիմանաս, թե ով է մարդը:

**Բարեգարդեցիր խոսելու
ձիրքով,**
**Շունչ ներարկելով՝ փայլ
տվեցիր ինձ,**
**Ստքով ճոխացրիր, ամեցրիր
խելքով և իմաստությամբ,**
**Դանճարով օժոած՝ զատորո -
շեցիր շնչավորներից,**
Դամադրեցիր բանական ոգով,
**Պօնեցիր գոյով անձնիշխա -
նական:**

Ս. Գրիգոր Նարեկացի

Արդի հասարակական գիտությունները (սոցիո-լոգիա, հոգեբանություն) փորձել են այդ հարցին որոշակի պատասխան տալ: Սակայն մարդու մեջ բարոյական արժեքների համակարգի գոյության փաստը հնարավոր չէ նկարագրել հավաքական ընդհանրացումների ու վիճակագրական տվյալների վերլուծությամբ, որովհետև յուրաքանչյուր մարդ ինքնուրույն է և եզակի իր հոգեկերտվածքով, բարոյական արժեքներին ձգտելու և հասնելու իր գիտակցությամբ և այլն:

Քրիստոնեական բարոյագիտությունը «Ո՞վ է մարդը» հարցին պատասխան է տալիս համաձայն Աստվածաշունչ մատյանի.

Մարդն արարչության պսակն է:

Քանի որ մարդն Աստծո պատկերով և նմանությամբ է ստեղծված, այսինքն՝ նա նաև կարողություն ունի փոխելու իրեն շրջապատող աշխարհը, ավելին, տիրելու այն (հիշեք Աստվածաշնչի Ծնն-

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

դոց գրքի առաջին գլուխը), անհրաժեշտ է, որ մարդն օժտված լինի բարոյական արժեքների բացարձակ համակարգով: Այս անհրաժեշտության բացակայությունն աշխարհը կվերածեր քառսի:

Մարդու առաքելությունը

Չնայած մարդն իր ներքին կարողությամբ հնարավորություն ունի իրեն կոփելու ու կատարելագործելու, բայց, այնուամենայնիվ, կարիք ունեցավ ըստ արտաքին պատվիրանների և օրենսդրական դրույթների իր արարքներն ուղղելու ու ճիշտ ճանապարհով քայլելու: Միայն մարդն է, որ ունի հնարավորություն ու կարողություն կրելու բարոյական արժեքներ, իր կյանքի ընթացքում դրանցով առաջնորդվելու և իրեն հաջորդող սերունդներին փոխանցելու:

Արդեն մեզ հայտնի են Ծննդոց գրքի 3-րդ գլխում նկարագրված դեպքերը, Ադամի ու Եվայի մեղանչման պատմությունը: Թվում է, թե արգելված պտղից չօգտվելու պատվիրանը, որ տրվել էր նրանց, բռնադատում էր նրանց ազատությունը, բայց իրականում հակառակն էր. առաջին պատվիրանը Աստվածային սիրո մեջ մնալու, Աստծու հետ անմիջական հաղորդակցություն ունենալու և նրանց չարից պաշտպանելու համար էր:

Այս առումով էլ բարոյական բացարձակ արժեքներին հասնելու մի ամբողջական համակարգ են ներկայացնում Տասը պատվիրանները: Մարդու բարոյական զարգացման, արժեքային համակարգում բարին չարից զանազանելու, արարքների



Բացարձակ արժեքներին ծգուելը, այդ արժեքներով ապրելը կյանքի իմաստն է, բանականության հաղթանակը, մարդու՝ Աստվածային նպատակը:





*Մարդու գոյության խնդիրը
մարդուն որպես մարդ արժե-
վորումն է:*

համար պատասխանատվության զգացում ունենալու համար է տրվել Տասը պատվիրանների համակարգը:

Բարոյական չափանիշների համեմատ կատարելագործվելը և այդ ճանապարհով բարձրանալը մարդու մեծագույն առաքելությունն է այս արեգակի տակ: Դրանից կախված է ոչ միայն իր, այլ նաև հասարակության, ժողովրդի, պետության ապագան:

Ուստի անսահման եսակենտրոնությունը* (էգոցենտրիզմ) ըստ քրիստոնեական բարոյագիտության պետք է զսպվի պատվիրանների թելադրանքով, և հանրության բոլոր անդամները պետք է գտնվեն իրավահավասար հարթության մեջ:



Սովորենք նոր դարձվածքներ

Ես այն գիտեմ, որ ոչինչ գիտեմ:

Սիզիփույան աշխատանք:

Ծանիր գրեց:

Մարդն արարչության պսակն է:

Հարստացնենք մեր բառապաշտը նոր բառերով

Նիհիլիզմ, եսակենտրոնություն:

Հարցեր

1. Ի՞նչո՞վ է տարբերվում մարդը մյուս արարածներից:
2. Ի՞նչ է նշանակում «բացարձակ արժեքներ», բերեք օրինակներ:
3. Կյանքի իմաստի վերաբերյալ ի՞նչ տեսակետներ գիտեք:
4. Ի՞նչ է նշանակում «սիզիփույան աշխատանք» արտահայտությունը:
5. Ո՞րն է մարդու գոյության խմբիրը:
6. Ինչո՞ւ հեթանոսական քաղաքակրթությունները չհարատևեցին:

Առաջարանք

2-3 էջի սահմանում փորձեք պատասխանել հետևյալ հարցերից որևէ մեկին.

Ո՞վ է մարդը: Ո՞րն է նրա կոչումը: Ո՞րն է կյանքի իմաստը: Ո՞վ եմ ես:

Քննարկեք՝ ինչո՞ւ է բացարձակ արժեքների մերժումը, նիհիլիզմը կորստա-
բեր անհատի համար:



6. Աշատ կարք և բասարասոհայուն

«Դուք ազատության կոչված եք»

Անհատը պատասխանատու է իր արարքների համար միայն այն դեպքում, երբ նա այդ արարքը կատարում է.

ա. գիտակից վիճակում կամ գիտակցորեն,

բ. երբ նա այդ արարքը կատարելու ազատություն ունի, այսինքն՝ ինքն ազատ է՝ կատարելու կամ չկատարելու, և անձամբ է ընտրություն կատարում, առանց արտաքին միջամտության:



Չատ հաճախ այս կամ այն արարքը գործելիս հարկ է լսել խղճի ձայնին կամ խղճի թելադրանքին: Սակայն միշտ չէ, որ խղճի թելադրանքով առաջնորդվելը ճիշտ ճանապարհ է ցույց տալիս: Յաճախ առկա են գործոններ, իրավիճակներ, որոնք կախված չեն մեզանից: Պարզ է, որ անհատը պատասխանատու է իր արարքների համար միայն այն դեպքում, երբ նա այդ արարքը կատարում է.

ա. գիտակից վիճակում կամ գիտակցորեն,

բ. երբ նա այդ արարքը կատարելու ազատություն ունի, այսինքն՝ ինքն ազատ է՝ կատարելու կամ չկատարելու, և անձամբ է ընտրություն կատարում, առանց արտաքին միջամտության:

Դետևաբար, միայն այս երկու պայմանների առկայության դեպքում կարելի է ճիշտ կամ դատապարտելի համարել կատարած արարքը: Երբ չեն բավարարվում այդ երկու պայմանները, արարքը կատարողը կատարածի համար պատասխանատվություն չի կրում:

I-IV դդ. հռոմեական կայսրության սահմաններում, քրիստոնյաների հալածանքների ժամանակ, նրանց ափի մեջ խունկ էին դնում ու ստիպում ձեռքը պարզել հեթանոսական զոհասեղանի կրակին: Յալածողները կարծում էին, որ քրիստոնյաները չեն դիմանա կրակի բոցերին և այդպիսով ձեռքի միջի խունկը կթափվեր կրակի վրա ու դրանով նրանք կխնկարկեին հեթանոսական զոհասեղաններին,

այսինքն՝ կուրանային քրիստոնեական հիմնական սկզբունքները: Բնական է, որ Եղան շատ նահատակներ, որոնք այրեցին իրենց ծեռքերը, բայց «չխնկարկեցին» զոհասեղանների կրակին: Եղան և այնպիսիներ, որ չդիմացան կրակի բոցերին, և խունկը նրանց ծեռքից թափվեց այդ կրակի վրա: Բայց մի՞թե կարելի է այդ դեպքում պնդել, թե նրանք այդպիսով խունկ են մատուցել հեթանոսական կուրքերին: Իհարկե՛ ո՛չ:

Երկու տեսակետ

Վերջին ժամանակներում բարոյագիտության մեջ մեծ տարածում է գտել մի ուղղություն, որը կոչվում է դետերմինիզմ (լատիներեն՝ determinare - որոշել, սահմանել բառից): Համաձայն դետերմինիստական ուսմունքի՝ մարդը կամքի ազատություն չունի, ամեն մի արարք նա կատարում է արտաքին ազդակների ճնշման տակ, որոնք կախված չեն իրենից:

Դետերմինիստներն ասում են. «Մեզ թվում է, թե մենք ազատ ենք մեր գործերում»: Եվ այդ ցույց տալու համար նրանք բերում են փիլիսոփա Սահնողայի նետած քարի հայտնի օրինակը:

Եթե անկյան տակ նետած քարը լեզու ունենար, ապա կասեր, թե ինքն ազատ է, ազատ կամք ունի և ազատորեն թռչում է և ընկնելու է այնտեղ, որտեղ որ ինքն է կամենում: Մինչդեռ նա թռչում է, քանի որ ինչ-որ մեկն իրեն նետել է, և ընկնելու է ձգողության ուժի ազդեցության պատճառով:

Համաձայն դետերմինիստական ուսմունքի՝ մարդը կամքի ազատություն չունի, ամեն մի արարք նա կատարում է արտաքին ազդակների ճնշման տակ, որոնք կախված չեն իրենից:





Մարդն ինքն է ընտրում իր ճանապարհը, և այդ ընտրելու ազատությունն է տրված մարդուն, որով և նա՝ մարդը, համարվում է ազատ:



Մարդն օժտված է ազատությամբ, որը մարդուն տրված մեծ շնորհ է:

Դետերմինիզմին հակառակ ուսմունքը կոչվում է ինդետերմինիզմ:

Ինդետերմինիզմը սովորեցնում է, որ չնայած մարդու վրա ազդում են արտաքին ազդակները, այնուամենայնիվ, մարդն ինքն է ընտրում իր ճանապարհը, և այդ ընտրելու ազատությունն է տրված մարդուն, որով նա՝ մարդը, համարվում է ազատ:

Ինդետերմինիզմը կարելի է ներկայացնել նաև մեկ այլ՝ ծայրահեղ տեսանկյունից, մասնավորապես՝ անձի բացարձակ ազատության տեսանկյունից, այն իմաստով, որ անհատը կարող է անել այն, ինչ ցանկանում է: Բայց այս դեպքում բարոյական համակարգը կվերածվի քառսի: Ազատությունն ամենակին էլ այն չէ, որ մարդն անի այն, ինչ ցանկանում է, քանի որ դուք իրավունք չունի: Այդ բացարձակ ինդետերմինիզմը կեղծ ուսմունք է և վատ մենտոր*:

Նետած քարի օրինակի բացատրությունը

Յիմա կարող ենք բացատրություն տալ Սպինոզայի բերած օրինակին:

Մարդն ունի կամքի ազատություն այս կամ այն արարքը կատարելու համար: Եվ եթե մարդու արարքը համեմատվում է նետած քարի հետ, ապա այդ համեմատությունը չի համապատասխանում իրական վիճակին, քանի որ բերված օրինակում քարը չունի այն ազատությունը, ինչ ունի մարդը, այսինքն՝ քարն ազատ չէ՝ թռչելու կամ չթռչելու, ընկելու կամ չընկելու:

Դետերմինիզմի մերժումը

Դետերմինիզմի ջատագովների տեսանկյունից՝ չի կարելի դատապարտել ո՞չ գողությունը, ո՞չ սպանությունը և ոչ էլ որևէ հանցանք, քանի որ անհատը գործել է ոչ ազատորեն, այլ հարկադրաբար՝ արտաքին ազդակների պարտադրանքով։ Այսինքն՝ համաձայն դետերմինիզմի, մարդը նման է ստրուկի, չունի իր սեփական կամքը։

Բայց գիտենք արդեն, որ մարդն օժտված է ազատությամբ, որը մարդուն տրված աստվածային մեծ շնորհ է։ Այն կյանքում դարնում է իրական, քրիստոնեական արժեք, եթե անհրաժեշտաբար ընկալվում է Աստծո կամքի համաձայն։

Իսկ դրանում համոզվում է մեզանից ամեն մեկը, երբ որևէ սխալ արարք է կատարում։ Նրան այդ դեպքում սկսում է մտահոգել կատարած արարքն իր հետևանքներով։ Նա սկսում է քննել, վերլուծել, զղալ կատարածի համար, մտովի տեղափոխում է իրեն մինչ սխալը կատարելու պահը ու հաստատակամ որոշում, որ նման դեպքերի ընթացքի կրկնության դեպքում նա չի ընտրի նույն սխալ ճանապարհը։ Եվ այդ ամենը նշանակում է, որ մարդն ունի ազատ ընտրելու ինարավորություն, հակառակ դեպքում զղման զգացում չէր առաջանա մարդու մոտ։




Նորոգվեցնք ծեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք լավը և թե ինչ է Աստծու կամքը՝ բարին և հաճելին և կատարյալը։



Եզրակացություն

Այդ խորխորաստներից
մարդկանց փրկելու համար էլ
Քրիստոս աշխարհ եկավ ու լու-
սավորեց մարդկանց բանակա-
նությունն ու միտքն Իր
Աստվածային լուսով:



1. Մարդու ազատությունը նշանակում է, որ մարդն ունի ազատ ընտրելու իրավունք և ինքն է որոշումներ կայացնում:

2. Բարոյական արժեք են ներկայացնում միայն այն արարքները, որոնք կատարվում են գիտակցութեն և ազատորեն:

Հետևաբար՝

**Արարիչը պահանջում է
բանականության լույսի ներկայություն:**

Զքիստոնեական վարդապետությունը լու- սավորում է մարդու բանականությունը

Ինչպես ասացինք, մարդու արարքները պետք է լինեն գիտակցված: Մարդն իր բանականությամբ քննում, վճռում, իր կամքի համաձայն որոշում է ու նոր այս կամ այն արարքը կատարում: Առանց բանականության լույսի քննության ու կամքի հավանության մարդու զգայական վիճակից բխող որոշումները գրեթե միշտ սխալ խորհրդատուի դեր են կատարում:

Այդ պատճառով է, որ ավետարանական ուսուցումները հատուկ ուշադրություն են դարձնում մտքի լուսավորությանը. «Նորոգվեցեք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք լավը և թե՛ ինչ է Աստծու կամքը, բարին և հաճելին ու կատարյալը»:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուրեմն մեր կյանքը պետք է մտքի լույսով լուսավորել՝ այն երջանիկ դարձնելու համար, իսկ մեր մտքի՝ բանականության լույսն էլ անհրաժեշտ է լուսավորել քրիստոնեական լույսով, առանց որի մարդ չի կարող առաջնորդվել դեպի գերազույն երջանկություն:

ՀԵՏԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կատարելապես **ազատ ենք**, երբ գիտակցում ենք մեր կատարածը և հավանություն ենք տալիս այդ արարքին՝ Աստծո պատվիրանի հույսի ներքո:
2. **Ազատ չենք**, երբ կատարում ենք արարքներ անգիտակցաբար և հակառակ մեր կամքին, արտաքին ազդակների ճնշման տակ:

Սարդու բանականության ու կամքի ներկայությունն արարքների մեջ խիստ կենսական պայման է:

Աղամի օրինակը

Համաձայն Սուրբ Գրքի, առաջին մարդը՝ Ադամը ազատ է ստեղծվել: Նա կարող էր ազատ ապրել, անել այն ամենը, ինչ ուզում էր՝ ըստ իր կամքի ընտրության: Նա ինքնիշխան էր, իր վիճակի տերն էր: Իսկ այն պատվիրանը, որ տրվել էր նրան՝ թե «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց բարու ու չարության գիտության ծառից մի՛ կերեք», ամենին էլ չէր սահմանափակում նրա ազատությունը: Ընդհակառակը, սովորեցնում էր հեռու մնալ չարից, հնագանդվել Աստծուն՝ բարության և ճշմարտության աղբյուրին:

Բարոյական արժեք են ներկայացնում միայն այն արարքները, որոնք կատարվում են գիտակցորեն և ազատորեն՝ ելնելով վեհ նպատակներից:



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Աղամին տրված պատվիրանն ուներ պահպանիչ հատկություն, այն պետք է նրան ետպահեր չարից ու չեր սահմանափակում ազատությունը:

Դարց է ծագում. ինչո՞ւ է Աստված ընդհանրապես ազատ ստեղծել մարդուն: Եթե Աղամն ինքն է իր կամքի ու մտքի համաձայն ընտրում, մի՞թե Աստված չէր կարող նրան այնպես ստեղծել, որ նա միշտ բարին ընտրեր:

Այդ դեպքում Աղամը կնմանվեր խամաճիկի, որը չունի կամքի ազատություն, ընտրելու ազատություն, բանականության ու ստեղծագործության կարողություն: Այսինքն՝ նա չէր ունենա Աստծու պատկերն ու նմանությունը:



Հարցեր

1. Ի՞նչ պայմանների առկայության դեպքում է մարդ պատասխանատվություն կրում կատարածի համար:
2. Ինչո՞ւ է բացարձակ ինդետերմինիզմը կեղծ ուսմունք և վաս մենտոր համարվում: Բերեք օրինակներ ծեր առօրյա կյանքից:
3. Ինչո՞ւ է Աղամը ազատ ստեղծվել: Ինչո՞ւ և ինչպե՞ս նա կորցրեց իր ազատությունը և ընկավ մեղքի իշխանության տակ:

Առաջադրանք

- ա) Փորձեք բացատրել դետերմինիզմ, ինդետերմինիզմ, մենտոր բառերի իմաստը:
բ) Փոքր ենթախմբերում քննարկեք հետևյալ հարցը.
- Ավելի լավ չէ՞՞ լինի արդյոք, որ Աղամը (մարդ) չունենար ազատ կամք, մեղք չգործեր և չվտարվեր դրախտից:

Բառարան

Մենտոր – իթակե կղզու թագավոր Ողիսլահի դեպի Տրովադա արշավանքի մեկնելուց հետո նրա որդին՝ Տելեմաքոսը մնաց պալատում առանց օգնականների ու դաստիարակի: Խսկ պալատում բազում վտանգներ էին սպառնում նրան: Այդ պատճառով Արենասը՝ գիտության հովանավորը, գքաց Տելեմաքոսին և ընդունեց Ողիսլահի ընկերոց՝ Մենտորի կերպարանքը նրան օգնելու համար: Նա ոչ միայն զբաղվեց նրա կրթությամբ, այլ նաև հոգ տարավ նրան ինաստուն խրատներով ցույց տալով իր հոր՝ Ողիսլահին գտնելու ժանապարհը: Այնտեղից էլ՝ մենտոր փոխաբերական նշանակում է խորհրդական, հովանավոր, դաստիարակ:

(Դոմերոս, Ողիսլական, գլուխ 2)

7. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԽՎԱՏՈՒՄԸ



**Մեզանից ամեն մեկը գիտի,
թե որ արարքներն են լավ կամ
բարի, և որոնք՝ վատ կամ չար:
Այստեղ չափանիշները, բնա-
կան է, պետք է լինեն բացար-
ծակ, այսինքն՝ ամենին այս կամ
այն անհատի տեսակետից, քա-
նի որ չափանիշները բարոյա-
կանության օրենքներն են:**

Մարդն օժտված է բանականությամբ, ունի միտք, դատողություն, իրերն ու երևույթները զա- նազանելու, գնահատելու կարողություն: Ունենա- լով աստվածատուր այս հատուկ շնորհները՝ մարդն ինքնին բարոյական արժեք է և իր եռթյան մեջ ունի բարոյական արժեքների ու զգացմունքների մի ամբողջ համակարգ, հաղորդ է հազարամյակների ընթացքում ձևավորված բարոյական արժեքներին և առանց դրանց չի կարող ապրել:

Խախտելով բարոյական օրենքները՝ մարդն ընկնում է մեղքի մեջ, որն էլ մարդու կերպարը աղա- վաղում է, խեղաքյուրում: Մեղքն ախտահարում է մարդու բնությունը.

- **միտքը,**
- **զգացումները (սիրտը),**
- **կամքը:**

Դեռ հնուց գիտեին, որ մարդը սխալական է, կարող է հեշտությամբ սխալվել իր գործողություն-ներում: Դիշենք հայտնի լատինական դարձվածքը.

errare humanum est

Սխալը բնորոշ է մարդուն:

Սա նշանակում է, որ մարդու միտքը հակված է մոլորվելու, և նա կարող է սխալվել իր գործումնեու- թյան մեջ թե՛ գիտության բնագավառում, թե՛ փիլի- սոփայության և թե՛ իր գործնական կյանքում:

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդը վնասվում, սխալվում, մեղք է գործում և ուրախության, և վշտի մեջ՝ ենթարկվելով իր ներքին խռովքին, զգացմունքներին, ապրումներին: Մեղքը պարուրում է մեզ, և մենք կորցնում ենք մաքուրը, բարձրն ու վեհն ընկալելու ընդունակությունը, կորցնում ենք մեր սրտի, մեր հոգու կատարյալ ուրախությունն ու երջանկությունը, մտքի ազատությունը, մերձավորին սիրելու զգացումը:

Նոր կտակարանում զգուշացվում է:

Ամեն ոք, ով մեղք է գործում, մեղքի ծառա է:

Մեզանից ամեն մեկը գիտի, թե որ արարքներն են լավ կամ բարի, և որոնք՝ վատ կամ չար: Այստեղ չափանիշները, բնական են, պետք է լինեն բացարձակ, այսինքն՝ անկախ այս կամ այն անհատի տեսակետից, քանի որ չափանիշները բարոյականության օրենքներ են:

Քրիստոնեական բարոյագիտությունը քրիստոնեական սկզբունքների վրա հիմնված մարդկային արարքների մասին գիտություն է:

Բարոյական կատարելության ճանապարհը պարտադիր է ամեն մարդու համար, ով ձգտում է ներքին խաղաղության, ուրախությամբ ու խնդությամբ լեցուն կյանքի՝ մաքուր խղճով, պատրաստ բարի գործերի: Յավատարմությունն ավետարանական պատգամներին ու պատվիրաններին այն թիսմորմ է, որ ընդարձակվելով գրավում է մարդու ողջ կյանքը, տանում կատարելության ճանապարհով:



Քրիստոնեական բարոյագիտությունը քրիստոնեական սկզբունքների վրա հիմնված մարդկային արարքների մասին գիտություն է:



Դիշենք Եզնիկ Կողբացու խրատներից.

Մարդը պարտավոր է իր կյանքն ուղղել առաքինությունների ճանապարհով: Դրա համար ինքը նախ պետք է բարիք գործի ուրիշներին և աշխատի՝ ազատվել իր թերություններից և արատներից՝ իր մեջ գորացնելով բարին ու առաքինի արժեքները:



Ով լավ է ներքուստ, նաև զվարք է երևում արտաքուստ:

Սերն ու երկյուղը քեզ բնավորություն դարձրու, որ խարեւությամբ չտանջվես:

Եթե մեկը քեզանից խնդրում է և տալիս ես, շնորհակալ եղիր Աստծուն, որովհետև դու ավելին շահեցիր, քան նա՝ խնդրողը:

Բարոյական ազատություն

Մարդն օժտված է ազատությամբ և իր զարգացման ընթացքը ենթակա է իր իշխանությանն ու կամքին: Իր բարոյական արարքների ուղղությունը մարդն ինքն է որոշում:

Իր ազատությամբ մարդն ընտրում է իր առաջ բացված բազմաթիվ հնարավորություններից այն, ինչ ինքը նպատակահարմար է գտնում՝ համաձայն ստեղծված վիճակի և այլ պատճառների: Նա կարող է ընտրել ծիշտն ու բարին՝ էլ ավելի բարձրանալով կատարելության ճանապարհով, և կամ մեղքն ու արատավորը: Այդ երկու ճանապարհները մարդն ընտրում է ազատորեն, առանց արտաքին միջանտության: Այդ ընտրության համար կողմնորոշիչներ են հանդիսանում:

ա. բարոյական բնական օրենքը,

բ. բարոյական զգացումները և գիտակցությունը:

ա. Բարոյական բնական օրենք: Դա այն բնական օրենքն է, որ համակարգում է մարդկային հարաբերությունները բարոյականության ոլորտում: Ամեն մի մարդ, որ ազգի ներկայացուցիչ էլ լինի, ա priori* գիտե, որ, օրինակ, սպանելը, վիրավորելը, գողանալը մեղք է, և այդ արարքներն անօրինություններ են:

Բնական բարոյական օրենքն ընդհանուր է բոլոր մարդկանց համար, այն գրված է մեր ներքին բնության մեջ, մեր «սրտի տախտակների» վրա: Բայց այդ դեռ բավարար չէ կատարելության, քրիստոնեական բարոյական չափանիշներին հասնելու համար:

բ. Բարոյական զգացմունքներ և գիտակցություն: Բարոյական օրենքի հետ սերտորեն կապված են բարոյական զգացումները, ինչպիսիք են ամոթը, խիղճը, պարտքը կամ պարտականությունը, պատասխանատվությունը, ձգտումը բարու:

Ամոթի զգացում. մարդը բնականից այնպիսին է, որ երբ վատ արարք է գործում, անմիջապես ապրումների մեջ է ընկնում, ամոթի զգացում է առաջանում իր մեջ: Իր անձը վիրավորված է համարում այդ վատ արարքի պատճառով: Սկսում է ճանապարհներ որոնել այն քողարկելու համար և չստացվելու դեպքում փախուստի դիմում կամ մեկուսանում արտաքին աշխարհից: Սակայն մեկուսացումը, բնականարար, անհատին չի ազատում մեղքի գիտակցումից, ամոթի, թերարժեքության զգացումից, խղճի ձայնից:



Մարդ օժոված է ազատությամբ և իր իշխանությանն ու կամքին է ենթակա իր զարգացման ընթացքը: Իր բարոյական արարքների ուղղությունը մարդն ինքն է որոշում:



Մարդը չպիտի մտածե աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին: Մնացածը ունայնություն է:

Ավետիք Խահակյան

Խիղճը այն ներքին, հոգեկան ապրումն է, որը թույլ է տալիս մարդուն զանազանել արարքները, դասակարգել դրանք, որոշել արարքի դրական կամ բացասական, ճիշտ կամ սխալ լինելը: Խիղճը խիստ անհատական ապրում է, ուստի այն հաճախ նույնացվում է մարդու ներքին ձայնի հետ՝ համեմատելով կամ հավասարեցնելով այն սրտի հետ: Այս առումով է, որ հնում, նաև այսօր այն անվանում են Աստծու ձայն կամ օրենքը՝ մեր մեջ:

Խիղճը, նույնացվելով ներքին մարդու հետ, նույնացվում է նաև մարդու՝ խիղճը կրողի հետ, քանի որ այն չի սահմանափակվում միայն մարդու արարքները դրականի և բացասականի դասակարգելով: Այն նաև արդարացնում կամ դատապարտում է, մղում ուղղվելու, բարի գործեր կատարելու:

Մարդն իր խիղճն է, քանի որ այն մարդու ներքին կյանքի կենտրոնն է:

Խիղճը ճշմարիտ կյանքի հիմքն է, քանի որ այն անսխալ է որոշում, թե որ արարքն է բարի, որը՝ չար:

Խիղճը մարդու բարոյահոգեբանական գործունեության արտահայտությունն է և ոչ թե նրա մեկուսացված մի հատկանիշը:

Առանձին անհատների մոտ խիղճը տարբեր մակարդակներում է գտնվում և կարող է սխալ դատիարակության կամ տարբեր դժվարությունների, փորձությունների պատճառով վնասվել, արատավորվել՝ դառնալով անզգա արարքների, մեղքի

ԹՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

հանդեպ: Ամենաանխիղճ մարդն անգամ կարող է սթափվել, դարձի գալ, ուղղվել և վերստին վերականգնել իր կորցրած մարդկային դեմքը:

Պարտքի զգացումը առաջանում և ձևավորվում է մարդու ամենօրյա կյանքում: Պարտական լինելու մեկին՝ ներքին պահանջ է մարդու համար, եթե այդ մեկը ինչ-որ ձևով արձագանքել է անհատին՝ նրան օգտակար լինելով: **Պարտքը վճարել նշանակում** է փոխհատուցել այն բարի գործերով: Մարդն իր կյանքում բարոյական, քաղաքացիական, հասարակական տարրեր պարտականություններ ունի իր ծնողների, իր ժողովորդի, իր պետության, իր եկեղեցու հանդեպ:

Խուսափել պարտքը վճարելուց կամ պարտականությունները կատարելուց հավասարագոր է խարեւության, փախուստի, և հնարավոր չել այն արդարացնել:

Պատասխանատվության զգացումը բարոյական հաշվետվությունն է կատարած արարքի համար: Ամեն մարդ պատասխանատու է իր խորհի առաջ, իր մերձավորների առաջ՝ բարոյական օրենքը խախտելու պատճառով: Մարդուն պատասխանատվությունից ազատելու համար որոշ հոգեբաններ (Ֆրոյդ) փորձում են այն հիմնավորել բնական հակումներով: Սակայն քրիստոնեական բարոյագիտությունը մերժում է այդ տեսակետը: Այսպիսով, մարդը՝ ազատ ստեղծված լինելով, ի վիճակի է հաղթահարել իր արատները, և ոչ մի բան նրան չի ազատում կատարած արարքների պատասխանատվությունից:

Բնական բարոյական օրենքը ընդհանուր է բոլոր մարդկանց համար, այն գրված է մեր ներքին բնության մեջ, մեր «սրտի տախտակների» վրա: Բայց այդ դեռ բավարար չէ կատարելության, քրիստոնեական բարոյական չափանիշներին հասնելու համար:



Խիղճը հնում, նաև այսօր անվանում են Աստծու ծայն կամ օրենքը՝ մեր մեջ:



Խիղճը, նույնացվելով ներքին մարդու հետ, նույնացվում է նաև մարդու՝ խիղճը կրողի հետ, քանի որ այն չի սահմանափակվում միայն մարդու արարքները դրականի և բացասականի դասակարգելով: Այն նաև արդարացնում կամ դատապարտում է, մղում ուղղվելու, քարի գործեր կատարելու:

Առաքինությունների և բարին գործելու մարդու ձգտումը բարոյական սխրանքն է, որը պետք է դաստիարակվի նրա մեջ՝ կատարելության արահետով բարձրանալու համար: Առաքինությունն արդար ու ճիշտ ապելու արվեստն է:

Բարոյական գիտակցություն

Բարոյական բնական օրենքները և բարոյական զգացումները միշտ չեն, որ ուղղում և ետ են պահում մարդուն սխալ ճանապարհից: Յետևաբար, մարդու մեջ ներքին օրենքը բավարար չէ ազատելու համար նրան սխալից, մեղքից:

Ուրեմն մարդը կարիք ունի արտաքին միջանտության՝ օրենքների և պատվիրանների մի կուռ համակարգի, որոնք պիտի ուղղորդեն մարդուն՝ զարգացնելով նրա ձգտումը դեպի առաքինություններ և բարոյական բարձր արժանիքներ:

Ի տարբերություն բարոյական բնական օրենքների և բարոյական զգացումների, բարոյական գիտակցությունը ձևավորվում է մարդու հոգևոր, իմացական զարգացման ընթացքում: Բարոյական գիտակցության հիմքում ընկած են կրոնական (կանոններ ու պատվիրաններ), հասարակական (ընկալումներ ու պատկերացումներ), պետականորեն ընդունված և արձանագրված օրենքներն ու որոշումները:

Անհատի բարոյական գիտակցության ձևավորման համար կարևոր է, թե կրոնական ինչ ուղղության է պատկանում և թե որքանո՞վ է ծանոթ, որքանո՞վ է իր մեջ կրում և կիրառում տվյալ կրոնի կողմից ուսուցանվող կանոններն ու պատվիրանները:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրիստոնյայի բարոյական չափանիշները տրված են հիմնականում Աստվածաշնչում, ինչպես նաև Տիեզերական և տեղական եկեղեցական ժողովներում առանձին եկեղեցական գործիչների ուսուցումներում: Աստվածաշնչում տրված բարոյական համակարգված կանոններն ու պատվիրանները տրված են Տասնաբանյա պատվիրաններում, մարգարենություններում և հատկապես Նոր Կտակարանում՝ Յիսուս Քրիստոսի ուսուցումների («Լեռան քարոզը» և այլն), պատվիրանների («Այն ամենը, ինչ որ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այսպես և դուք արեք նրանց» և այլն) և Նրա անձնական ապրելակերպի միջոցով: Քրիստոնեական ուսմունքում հիմնական շեշտը դրված է հավատի, մարդու ազատության և բարոյական բարձր արժեքների համելու վրա:

Անհատի բարոյական գիտակցության ձևավորման համար կարևոր է նաև տվյալ ժամանակահատվածում այն հասարակության ընկալումներին ու պատկերացումներին քաջածանոթ լինելը, որի անդամն է ինքը: Յասարակության բարոյականության վերաբերյալ որոշ ընկալումներ ու պատկերացումներ, վարվեցողության կանոններ, հասարակական, ընտանեկան հարաբերություններ, տիեզերքի ճանաչում և այլն ժամանակի ընթացքում կարող են փոփոխությունների ենթարկվել: Այս ընկալումներն ու պատկերացումները տվյալ հասարակության կողմից ժամանակի պահանջներին և պատկերացումներին համապատասխան որոշակի սրբագրումների և ձևափոխումների են ենթարկվում: Յասարակության

Խուսափել պարտքը վճարելուց կամ պարտականությունները կատարելուց հավասարագոր է խարեւության, փախուստի, և հնարավոր չեն արդարացնել:





Սարդը կարիք ունի արտաքին միջամտությամ՝ օրենքների և պատվիրանների մի կուռ համակարգի, որոնք պիտի դեկավարեն մարդուն՝ ուղղելով ու զարգացնելով նրա ծգուռմը դեպի առաքինություններ և բարոյական բարձր արժանիքներ:

յուրաքանչյուր անհատ պարտավոր է ինանալ տվյալ հասարակության բարոյական ընկալումներն ու պատկերացումները և իր կողմից առավել կատարելագործել ու զարգացնել դրանք՝ ողջ հասարակության բարոյական բարձրագույն արժեքների հասնելու նպատակով:

Անհատի բարոյական գիտակցության ձևավորման համար կարևոր է նաև պետականորեն ընդունված սահմանադրությունը, օրենքներն ու որոշումներն իմանալն ու դրանք կիրառելը: Տվյալ պետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է հարգել և պահպանել իր պետության ընդունած օրենքներն ու որոշումները, ինչպես նաև իր ակտիվ մասնակցությունն ունենալ դրանց մշակման, փոփոխման ու կատարելագործման գործում:

Յարկ է նշել, որ թե՛ կրոնական, թե՛ հասարակական, թե՛ պետական կանոնները, թե՛ ընկալումները և օրենքները փոխկապակցված են և դրանց ներդաշնակ գուգակցումը միայն կարող է ապահովել բարոյական բարձր արժեքների վրա իհմնված հասարակության գոյությունը:

Այսպիսով, քրիստոնյայի բարոյական կերպարը ձևավորվում է բարոյական, բնական օրենքների, բարոյական զգացումների ու բարոյական գիտակցության իհմքի վրա՝ որպես ուղեցույց ունենալով Հիսուս Քրիստոսին:

Նոր դարձվածքներ և բառեր

- ❖ errare humanum est
(Ախալը բնորոշ է մարդուն)
- ❖ Ամեն ոք, ով մեղք է գործում, մեղքի ծառա է:
- ❖ Ով լավ է ներքուստ, նաև զվարք է երևում արտաքուստ:
- ❖ Եթե մեկը քեզանից խնդրում է և տալիս ես, շնորհակալ եղիր Աստծուն, որովհետև դու ավելին շահեցիր, քան նա՝ խնդրողը:
- ❖ Խիղճը ճշմարիտ կյանքի հիմքն է, քանի որ այն անսխալ է որոշում, թե որ արարքն է բարի, որը՝ չար, մեղքին հավասար:
- ❖ Առաքիմությունն արդար ու ճիշտ ապրելու արվեստն է:

Հարցեր

1. Ի՞նչ է նշանակում «մեղքի ծառա»:
2. Տվե՛ք քրիստոնեական բարոյագիտության սահմանումը:
3. ճի՞շտ է արդյոք միայն խղճի թելադրանքով առաջնորդվելը:
4. Ի՞նչ է բարոյական ազատությունը, և որո՞նք են դրա կողմնորոշչչները:
5. Ի՞նչ է բարոյական գիտակցությունը:



Առաջադրանքներ

ա) Քննարկել շեքսափիրյան Դամլետի հայտնի մենախոսությունը.

Լինե՞լ, թե՞ չլինել, այս է խնդիր,
Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ.
Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,
Թե՞ զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ,
Եվ դիմադրելով՝ վերջ տալ այդ բոլորին:

բ) Քրիստոնեական բարոյագիտության չափանիշների տեսանկյունից փորձեք մեկնել Դամլետի մենախոսությունը:

գ) Արդյոք մի՞շտ է գործում «այս կամ այն արարքը գործելիս հարկավոր է լսել խղճի ծայնը» բանաձևը: Դիմնավորեք ծեր պատասխանները:

դ) Կատարեք «Պրիզմա» վարժությունը՝ որպես հիմնական բառ ընդունելով «Առաքիմությունը»:


Բառարան


a priori – փորձով ապացուցված:



8. ԽՈՆԱՐՃՈՒԹՅՈՒՆ և ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Աստվածաբաններն առանձնացնում են **յոթ** առաքինություններ, որոնք առավել կարևոր և արժեքավոր են մյուս բոլոր մարդկային առաքինություններից և դրանց հակառակ՝ **յոթ մոլություններ** կամ մեղքեր, որոնց հետ այս կամ այն կերպ կապված են մարդկային մյուս բոլոր մեղքերը:





Խոնարհություն

Քրիստոնեական բարոյագիտության մեջ **Խոնարհությունը** համարվում է մեծագույն բարիք և բոլոր մարդկային առաքինությունների թանկագին գոհարը, իսկ **հպարտությունը՝** մեղերից մեծագույնը:

Հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի ավանդական արժեքային համակարգի հիմքը կազմող բարոյական նորմերում նույնպես կարևոր տեղ է զբաղեցնում խոնարհությունը: Հնուց

ի վեր հայ իրականության մեջ հարգանքի չի արժանանում այն երեխան, որը խոնարի ու հնազանդ չէ ծնողներին, այն աշակերտը, որը չի հարգում ու լսում ուսուցչին, այն ընտանիքը, ուր չկա փոխհասկացողություն ու ներողանտություն։ Բարոյական այս նորմը՝ ծնողներին ու ավագներին խոնարիաբար հարգելն ու հնազանդվելը կարևոր տեղ է զբաղեցնում նաև աշխարհի բազմաթիվ այլ ժողովուրդների կյանքում։

Խոնարիության իմաստը վերիանելու առավել հարմար ուղին նրա դրսնորումների քննարկումն է։

Խոնարիության ամենապարզ դրսնորումը հնազանդությունն է։ Բայց ո՞ւմ, ե՞րբ և ինչո՞ւ է անհրաժեշտ հնազանդվել։ Չէ՞ որ հնազանդվելն ու ենթարկվելը մի դեպքում կարող է համարվել խոնարիություն և առաքինություն, մյուս դեպքում՝ կարգապահություն և օրինապահություն, իսկ մեկ այլ դեպքում՝ վախկոտություն և թուլականություն։

Որպես քրիստոսավանդ բարոյական արժեք՝ խոնարիությունը նախևառաջ անվերապահ հնազանդություն է Աստծու կամքին և աստվածային պատվիրաններին։

Խոնարիությունը նաև ավանդույթներին և հասարակական կարծիքին ենթարկվելն է, մասնավանդ, երբ դրանց հիմքում ընկած բարոյական նորմերը և արժեքները համընկնում են ավետարանական պատգամներին։

Դայրենի պետության օրենքներին ենթարկվելը քաղաքացու սահմանադրական պարտականություններից է։ Սակայն օրենքներին և կանոններին ենթարկվելը ոչ թե խոնարիություն, այլ օրինա-



Խոնարիության ամենապարզ դրսնորումը հնազանդությունն է։ Բայց ո՞ւմ, ե՞րբ և ինչո՞ւ է անհրաժեշտ հնազանդվել։ Չէ՞ որ հնազանդվելն ու ենթարկվելը մի դեպքում կարող է համարվել խոնարիություն և առաքինություն, մյուս դեպքում՝ կարգապահություն և օրինապահություն, իսկ մեկ այլ դեպքում՝ վախկոտություն և թուլականություն։

**Քրիստոնյաները, ինչպես
նաև ողջ մարդկությունը պար-
տավոր են անզիջում պայքար
մղել անբարոյականության,
ստի, դավաճանության, կաշա-
ռակերության, հանցավորու-
թյան և այլ վտանգավոր
արատների դեմ:**



պահություն և կարգապահություն է:

Ուժեղների կամքին հնագանդվելով՝ ճշմարիտ ուղուց շեղվելը, հարկադրանքի ենթարկվելով և կամ անձնական շահադիտական նպատակներով հայրենիքին ու մերձավորին դավաճանելը խոնար- հություն չէ, այլ վախսկոտություն և թուլականություն:

Խոնարհության մյուս դրսերումը զիջելու պատ- րաստականությունն է: Այսպես, երբեմն օգնության, քաջալերանքի, հուսահատման, սխալ ճանապար- հից ետ պահելու համար անհրաժեշտ ենք գտնում մեր իրավունքը կամ ունեցվածքը զիջել առավել թույլին ու կարիքավորին, մեզ նեղություն տալով ծառայել մեր ազգակցին, մեր հավատակցին և պարզապես օգնության կարիք ունեցող մարդկանց:

Սակայն պետք չէ ենթադրել, թե անհրաժեշտ է զիջել միշտ և ցանկացած հարցում: Քրիստոնյանե- րը, ինչպես նաև ողջ մարդկությունը պարտավոր են անզիջում պայքար մղել անբարոյականության, ստի, դավաճանության, կաշառակերության, հան- ցավորության և այլ վտանգավոր արատների դեմ, այլապես հասարակությունը երբեք չի կարող ազատվել դրանցից:

Խոնարհությունը դրսերվում է նաև **համեստու- թյամբ**: Որքան շատ առաքինություններով ու շնորհ- ներով է օժտված լինում մարդը, այնքան ավելի խոնարի ու համեստ է դաշնում, ինչպես պտղատու ծառի ծյուղը, որը որքան շատ պտուղ է ունենում, այնքան ավելի է խոնարիվում:

Ուրեմն խոնարի են այն մարդիկ, ովքեր ազգային ու համամարդկային բարոյական արժեքների պահապան են և ջատագով: Ինչպես նաև նրանք,

ՁՐԻՍՏՈՆԵՎԿԱՎԸ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՎՆ ՀԻՄՆԱԿԱՎԸ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ովքեր հնազանդ են, զիջող, ներողամիտ, համեստ, իրենց չեն փառաբանում և իրենց ոչ մեկից չեն գերադասում:

Խոնարհությունը միևնույն ժամանակ այն առաքինությունն է, որը մարդուն հեռու է պահում այնպիսի վատ արարքներից, ինչպիսիք են զայրանալը, հայիոյելը, վատաբանելը, ուրիշի վրա ծիծաղելը և այլն:

Խոնարհության լավագույն օրինակը ինքը՝ Յիսուս Քրիստոսն է: Ցույց տալու համար, թե մեծը ինչպես պետք է խոնարհեցնի իր անձը և ծառայի փոքրին, Յիսուսը, իբրև ծառա, լվաց աշակերտների ոտքերը: Նա, ով Տերն ու Փրկիչն է աշխարհի, ում հողմերն ու ծովերն են ենթարկվում, իր անձը խոնարհեցրեց՝ մինչև անգամ իրեն մատնող մեղավորի՝ Յուդայի ոտքերը լվանալու: Յիսուսն ասաց իր աշակերտներին. «Ով իր անձը բարձրացնում է՝ կխոնարհվի, և ով խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրանա»:

Ոմանք երբեմն խոնարհությունն անզորություն, թուլություն են համարում: Սակայն իրականում այն ոգու քաջության, իմաստության և կամքի ուժի արտահայտություն է:

Եթե մարդը չի ներում իրեն վատություն անողին և վրեժինդիր է լինում, նշանակում է ուժ չունի մեծահոգի ու բարի լինելու: Վրեժինդիր լինելու ցանկությունը բնազդային է և դրսևովում է ակամայից, իսկ ահա ներել հնարավոր է միայն բանականորեն և կամքի ուժով: Բնավ քաջություն չէ, եթե որևէ մեկը չի ընդունում իր կատարած սխալներն ու ներողություն խնդրելու փոխարեն

Ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի, և ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա:



Չկա ավելի մեծ քաջություն, քան խոնարհաբար հնագանդվելով հայրենիքի կոչին՝ պատրաստ լինել անգամ լյանքը զոհաբերել հանուն ազգակիցների և հավատակիցների:



Անհրաժեշտ է տարբերել եսակենտրոն հպարտությունն ինքնահարգանք կամ արժանապատվության գիտակցում արտահայտող հպարտությունից:

ստում է ու կեղծ արդարացումներ հորինում:

Զկա ավելի մեծ քաջություն, քան խոնարհաբար հնազանդվելով հայրենիքի կոչին՝ պատրաստ լինել անգամ կյանքը զոհաբերելու հանուն ազգակիցների և հավատակիցների: Ո՞ր ազգը չի սրբացնում և հիացմունքով ու երախտագիտությամբ չի հիշում հանուն հայրենիքի և հանուն հավատի զոհված իր խոնարի հերոսներին:

Խոնարի մարդիկ առավել մեծ ուշադրություն են դարձնում ոչ թե իրենց ունեցած արժանիքներին ու առավելություններին, այլ՝ թերություններին, դրանք հայտնաբերելու և վերացնելու համար:

Հպարտություն

Քրիստոնեական բարոյագիտության մեջ հպարտությունը համարվում է յոթ մահացու մեղքերից գլխավորը, որը պատճառն է մյուս բոլոր մոլությունների ու մեղքերի: Սակայն ժամանակակից աշխարհում այս բառը հաճախ օգտագործվում է արտահայտելու համար բարոյական բարձր արժանիքները գիտակցելու կեցվածքը: Այդ պատճառով անհրաժեշտ է տարբերել եսակենտրոն հպարտությունն ինքնահարգանք կամ արժանապատվության գիտակցում արտահայտող հպարտությունից:


Պատահական չէ, որ աստվածաբան մեկնիչներն այդ բառին զուգահեռ օգտագործում են ամբարտավանություն, գոռողություն, փառասիրություն և այլ հոմանիշներ:

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հպարտության պատճառով է մարդը զանց առնում Աստծու պատվիրանները և հեռանում ճիշտ ուղուց:

Եսակենտրոն, հպարտությամբ տարված մարդը վերից է նայում բոլորին, միշտ աշխատում է ցույց տալ, թե ինքը ճիշտ է ու անխալական, դառնում է անբարտավան ու գոռոզամիտ: Այդ ճանապարհը կորստաբեր է հենց իր՝ եսակենտրոն հպարտությամբ տարված մարդու համար: Կորստաբեր է, որովհետև, օրինակ, եթե գողություն անողը գիտի, որ շեղվում է արդարությունից, ապա անբարտավանը չգիտի, որ հպարտությունը մեղք է, այլ կարծում է, թե առաքինություն է:

Եվ ինչպես Ս. Գրիգոր Տաթևացին բացատրում է Աստվածաշնչան խոսքը՝ «Տերը հակառակ է անբարտավանին»:



Ս. Գրիգոր Տաթևացի

Մի՛ երազիր թագ ու ամրոց,
Մի հղիանա աշխարհում,
Լավ իմացիր՝ փոքր աղբյուրից
Մարդ հանգիստ է ջուր խմում:

Հովի. Շիրազ



Մի փոքր կռանալուց մի վախենա, հետո ավելի ուղիղ կկանգնես:

ճապոնական ասացվածք

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են յոթ մարդկային առաքինությունները:
2. Որո՞նք են յոթ մոլությունները:
3. Որո՞նք են առաքինություններից և մոլություններից մեծագույնները:
4. Ի՞նչ դրսևումներ ունի խոնարհությունը:
5. Կնազանդության ո՞ր տեսակն է համարվում խոնարհություն:
6. Խոնարհության ի՞նչ օրինակ ցույց տվեց Յիսուս Քրիստոսը:
7. Ինչո՞ւ է հպարտությունը համարվում առավել մեծ մեղք:
8. Ինչո՞ւ է հպարտությունը վտանգավոր մեղք:

Քննարկենք

1. Ի՞նչ դեր է ունեցել խոնարհությունը հայ ժողովրդի կյանքում:
2. Ի՞նչն է մարդուն դարձնում համեստ: Զեր կարծիքով՝ համեստությունը բնածին, թե՞ ձեռքբերովի հատկություն է:

Բացատրենք

Յիսուս Քրիստոսի՝ աշակերտների ոտքերը լվալու օրինակը ինչպե՞ս է կիրառվում Հայոց եկեղեցում: Փորձեք բացատրել դրա իմաստն ու նշանակությունը:

Բառարան

Ժումկալություն – զսպվածություն, չափավորություն, սակավապետություն:

Որկրանոլություն – շատակերություն, որովայնամոլություն:

Բղջախոհություն – ցանկասիրություն, վավաշոտություն, մարմնական ցանկություններին անձնատուր լինելու բուռն ձգտում:

9. ԳԹԱԿՐՏՈՒԹՅՈՒՆ (ՊՈՊՐԱԾՈՒԹՅՈՒՆ) և ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Մանթաշյան, Գալուստ Գյուլբենկյան, Ալեք Մանուկյան. այս և հայ մեծամուլ այլ բարեգործների անունները կարելի է երկար թվարկել: Վստահ կարելի է ասել, որ յուրաքանչյուր հայ մարդու համար այս անունները թանկ են և հոգեհարազատ: Ինչո՞ւ են մարդիկ բարեգործություն անում կամ գթասիրու են միմյանց նկատմամբ: Ի՞նչ պտուղներ կարող է տալ բարեգործությունը: Ինչո՞ւ պետք է մարդն առհասարակ ողորմած լինի:

ԳԹԱԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ նեղության մեջ գտնվողին ծեռք մեկնելը կարևոր և գնահատելի առաքինություններից է: Միմյանց կարեկցելը, հիվանդին խնամելը և ողորմածության ցանկացած այլ ձև համարվում է առ Աստված ունեցած սիրո դրսնորում: Նոր Կտակարանում Քրիստոս ասում է. «Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ինձ համար արեցիք»:

Առաջալների գործունեության ժամանակաշրջանում աղքատների հանդեպ հոգատարությունն այնքան մեծ կարևորություն ուներ, որ նրանք ողորմության գործերը նույնքան կարևոր էին համարում, որքան քրիստոնեություն քարոզելը: Քրիստոնեական եկեղեցու անդամների միջև միմյանց նկատմամբ հոգատարությունը ոչ թե հորդոր

Նոր Կտակարանում Քրիստոս ասում է. «Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ինձ համար արեցիք»:



Քրիստոնեական համայնք-ներում տիրող սիրո ու փոխօգնության այս մթնոլորտն էր նաև նպաստում այդ համայնք-ների անդամների թվի աճին և քրիստոնեության տարածմանը:



Է, այլ պահանջ, քանի որ. «Երբ մարմնի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները»: Յետևելով քրիստոնեական այս վարդապետությանը՝ առաջին եկեղեցական համայնքները բարեգործությունն ու գթասրտությունը դարձրին համայնական կյանքի կարևոր մասը: Այդ գործի համար առանձնացվում էին հատուկ ծառայողներ, որոնք այցելում էին հիվանդներին, բանտարկյալներին, գթության արժանի այրիներին: Եականուպանների անմիջական հսկողության ներքո սարկավագների կողմից խնամվում և դաստիարակվում էին որբերը: Այստեղ նրանք նաև մի որևէ արհեստ էին սովորում, որպեսզի հետագայում կարողանային ինքնուրույն հոգալ հանապազօրյա հացը:

Մի շարք ականավոր եկեղեցական հայրեր իրենց վարք ու բարքով բարեգործության ուսանելի օրինակ դարձան: Ս. Բարսեղ Կեսարացին իր ողջ կարողությունը նվիրեց Կեսարիայի մոտ հիմնած աղքատանոցին: Ս. Եփրեմ Ասորին բարեգործական հիվանդանոց հիմնեց Եղեսիայում: Յայաստանում Ս. Ներսես Մեծը՝ Արշակ II արքայի աջակցությամբ, կրթական և բարեգործական բազում հաստատություններ ստեղծեց: Ս. Հովհան Ոսկեբերանը հիմնեց Երկու աղքատանոց Կ. Պոլսում, ուր 7.700 աղքատ էր խնամվում: Շարունակելով՝ կարելի է բազում օրինակներ բերել:

Քրիստոնեական համայնքներում տիրող սիրո ու փոխօգնության այս մթնոլորտն էր նաև նպաստում այդ համայնքների անդամների թվի աճին և քրիստոնեության տարածմանը:

Ի՞նչ է ողորմածությունը

Ողորմածությունը քրիստոնեական բարոյագիտության կանոնակարգած յոթ առաջինություններից է: Ողորմածությունը մարդուն «աստվածանման» է դարձնում:

Ավետարանում նշված է. «Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժամգ ոչնչացնում են, և ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց և ո՛չ ժամգ չեն ոչնչացնում, և ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում. քանի որ ուր ձեր գանձերն են, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»:

Քրիստոնեական բարոյագիտության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում ողորմություն տալու ձևի, չափի և նպատակի հարցերին:

Քրիստոնեական բարեգործության հետ ոչ մի կապ չունի այն նվիրատվությունը, որը կատարվում է ոչ թե կարեկցանքից, այլ ի ցույց մարդկանց, գովարանվելու և փառքի արժանանալու համար: «Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց... այլ երբ դու ողորմություն անես, թողքո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անուն քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի»:

Ոչ մի արժեք չունի նաև այն ողորմությունը, որ մարդ կատարում է պահի ազդեցությամբ, իսկ թիշ անց՝ ափսոսում: Յուրաքանչյուր գործ անհրաժեշտ է գնահատել բարոյական ներքին շարժառիթի տեսանկյունից:



«Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց... այլ երբ դու ողորմություն անես, թողքո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անուն քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի»:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Քրիստոնեական բարոյագիտության մեջ ողորմություն է համարվում այն նվիրատվությունը, որը կատարվում է արդար վաստակից՝ ըստ կարողության չափի, անտրոտունք, ուրախությամբ և ծածով։



Ողորմության համար նաև շատ կարևոր է զոհողության ոգին և ոչ թե քանակը (հիշենք այրի կնոջ լումայի պատմությունը): Ողորմությունն ընդունելի է, եթե ստացվածի համապատասխան է տրվում: Աղքատի՝ ի սրտե արած ամենափոքր նվերն անգամ հաճելի և ընդունելի է:

Ահա այս պատճառներով էլ քրիստոնեական բարոյագիտության մեջ ողորմություն է համարվում այն նվիրատվությունը, որը կատարվում է արդար վաստակից՝ ըստ կարողության չափի, անտրոտունք, ուրախությամբ և ծածով։

Ս. Գրիգոր Տաթևացին նշում է, որ ողորմությունը լինում է մարմնավոր և հոգևոր: Մարմնավոր ողորմության ձևերն են՝ քաղցածին կերակրելը, մերկին հագցնելը, ծարավածին ջուր տալը, օտարին հյուրընկալելը, գերվածին փրկելը, հիվանդին այցելելը և մահացածին թաղելը: Իսկ հոգևոր են՝ հանցավորին ներելը, մեղավորին դարձի բերելը, ճշմարտություն ուսուցանելը, ուրիշի համար աղոթելը, տրտմածին միսիթարելը, վիսալվածին խրատելը:

Ողորմության կամ բարեգործության ձևերից մեկն էլ հայոց մեջ շատ տարածված մատաղի բարեպաշտական արարողությունն է:

Խիստ կարևոր է նաև գիտակցել, որ առ Աստված ունեցած սերը բարեգործության ու ողորմության միակ դրդապատճառը չէ: Կարեկցելը, մերձավորին օգնելը, ինչ-որ բան զոհաբերելը նաև մարդու և միայն մարդու մերժին էությունից բխող հատկություններ են: Միայն մարդն է, որ մտահոգվում է այն հասարակության ապագայով, որի անդամն է ինքը:

Ազահություն

Ազահությունը, ժլատությունը, արծաթասիրությունը (դրամասիրությունը) կամ էլ ընչաքաղցությունը այն մոլություններն են, որոնք մարդուն դարձնում են նյութի գերին: Մարդ նյութական բարիքները ստեղծում է կենսական կարիքները բավարարելու, բարեկեցիկ կյանքի համար: Եվ չափազանց վատ է, եթիւ մարդու կյանքի ինաստը դառնում է հարստություն կուտակելը: Սակայն շատերի մոտ կա այն թյուր կարծիքը, թե քրիստոնեությունն արհամարհում է ոսկին և հարստությունը, քարոզում է կամավոր աղքատ և ճգնավոր կյանք վարել: Այդպես հասկանալ նշանակում է չքափանցել Ավետարանի սկզբունքների մեջ, դրանք ընկալել սուսկ տառի սահմաններում:

Կրոնական, բարոյական, հոգեբանական, ընտանեկան և սոցիալական բոլոր խնդիրները խորությամբ քննության առած քրիստոնեական վարդապետությունը չէր կարող բոլորովին անտեսել նյութական միջոցների կարևոր դերը մարդու կյանքում: Ավետարանում գործնականորեն շեշտված է դրամի դերը, քանի որ Յիսուսի աշակերտները նույնպես ունեին գանձանակ, որտեղ դրամ էին պահում իրենց կարիքները հոգալու համար:

Քրիստոնեական բարոյագիտությունը մերժում է ազահությունը և ոչ թե դրամն ու հարստությունը:

Քրիստոնեությունը բնավ դեմ չէ արդար քրտինքով ստեղծված հարստությանը: Սակայն պետք չէ բոլոր ուժերը նյութականին և միայն նյութականին ծառայեցնել: Չարիքը ոչ թե նյութի մեջ է, այլ նյութին ստրկանալու, ոչ թե հարստության, այլ դրան

Կարեկցելը, մերծավորին օգնելը, ինչ-որ բան զոհաբերելը նաև մարդու և միայն մարդու մերքին էությունից բխող հատկություններ են:



ԳԵՐԻ ԴԱԹՆԱԼՈՒ ՄԵջ:

Ազահ մարդն ազատ չէ, այլ գերին է ուկու և հարստության:



Սուրբ հայրեն ասում են.
«Ում կյանքում ուկին ու արծաթը են իշխում, այնտեղ հոգու հավատի աղբյուրը ցամաքում է, մտքի մեջ հույսի հուրմ է մարում և սրտի մեջ սիրո բոցն է խավարում»:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Քրիստոնեությունը սովորեցնում է հրաժարվել այդ ստրկությունից, հարստության կապաճմերից և ոչ թե հարստությունից: «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային*»:

Ավետարանական պատմություններում Յիսուսն անվարան պախարակում է այն հարուստների ազահությունը, ում մոտ հավատի, հույսի ու սիրո կյանք չկա:


Բարոյագետները ճիշտ են նկատել, որ ազահ մարդն ազատ չէ, այլ գերին է ուկու և հարստության: Նա նույնիսկ իր կամքի տերը չէ, այլ կույր հապատակն իր ունեցվածքի, որն իր հարստության «ազնիվ ու հավատարիմ տնտեսը» լինելուց վերածվում է սոսկ նրա պահապանի:

Իր հերթին հարստությունն ունեցվածքի առատության մեջ չէ: Յոգեբանորեն իրեն ավելի հարուստ է զգում նա, ով բավարարված է իր ունեցած հարստությամբ, վայելում է այն և առատորեն բաժին հանում մյուսներին, քան այն մարդը, ով շատ ավելին ունի, բայց տառապում է չունեցած բաները ձեռք բերելու ցանկությունից:

Եկեղեցական հայտնի գործիչներից մեկն այսպես է բնութագրում այդ երևույթը. «Ազահության ախտը կրծատում է կյանքը. որովհետև ազահը մտքով տանջվում է, թե ինչպես ձեռք բերի չունեցածը, ինչպես պահպանի ունեցածը և սրանով միշտ հյուծվում և մաշվում է, որովհետև դրամ ձեռք բերելն աշխատանքով է, պահելը՝ երկյուղով, և կորցնելը՝ ցավերով»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչո՞ւ է գթասրտությունը համարվում առ Աստված ունեցած սիրո դրսևորում:
2. Ի՞նչո՞ւ են առաջալները ողորմությունը համարում կարևոր:
3. Ի՞նչպես էր դրսևորվում գթասրտությունը վաղ քրիստոնեական համայնքներում:
4. Ի՞նչ է նշանակում «Գանձեր դիզեթ երկնքում» արտահայտությունը:
5. Ի՞նչպես և ի՞նչ չափով է անհրաժեշտ ողորմություն տալ:
6. Ըստ Գրիգոր Տաթևացու, որո՞նք են ողորմության տեսակները:
7. Ի՞նչպես է քրիստոնեական բարոյագիտությունը վերաբերվում դրամին և հարստությանը:
8. Ի՞նչո՞ւ ազահ մարդը ազատ չէ:



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քննարկենք

1. Կարո՞ղ է արդյոք գթասրտությունը ծովության պատճառ հանդիսանալ:
2. Չեր կարծիքով, կարո՞ղ է որևէ հասարակություն գոյատևել առանց գթասրտության:

Քացատրենք

Փորձեք բացատրել, թե որո՞նք են մարմնավոր և հոգևոր ողորմության տարրերությունները: Չեր կարծիքով՝ ո՞րն է ավելի կարևոր:

Քառարան

Մամոնա – չար, սատանա, դրամի աստված:



Մամահիմի վանք

10. ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆ և ՈՐԿՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական բոլոր առաքինությունները սերտորեն շաղկապված են միմյանց, ունեն ներքին տրամաբանական և հոգեբանական կապ ու հաճախ պայմանավորված են մեկը մյուսով: Յոթ առաքինություններից է ժուժկալությունը: Եթե մարդոն իր բնավորությամբ սակավապետ չէ և ձգտում է շքեղության ու զեխության, դժվար թե նա խոնարի ու համեստ լինի կամ էլ ողջախոհ:

Ժուժկալ նշանակում է սակավապետ, քչով բավարարվող, չափավոր. իր կենսական կարիքների բավարարման հարցում գուսապ անձնավորություն: Քրիստոնեական բարոյագիտության համաձայն՝ մարդը պետք է չափավոր լինի ուտելու, ոգելից խմիչքի օգտագործման, քնելու, հանգստի, մարմնական հաճույքների և կենցաղի հետ կապված հարցերում: Ոչ ոք չի կարող ապրել առանց սնվելու, սակայն չափից շատ ուտելը որկրանոլություն է: Խմիչքի չափավոր կիրառությունն օգտակար է, բայց չարաշահելը՝ վնասակար: Անցյալի նշանավոր գործիչներից մեկն ասում է. «Սրտի ցնծություն և հոգու ուրախություն է գինին, երբ այն խնում են չափավոր և ժամանակին: Յոգու դառնություն է գինին, երբ այն խնում են շատ»: Ժուժկալության մասին Աստվածաշնչում համեմատաբար

Լավ է մի պատառ հացը՝ խաղաղությամբ, քան միս ու բարիքով՝ սումը՝ թշնամությամբ:



Եթե մարդոն իր բնավորությամբ սակավապետ չէ և ձգտում է շքեղության ու զեխության, դժվար թե նա խոնարի ու համեստ լինի կամ էլ ողջախոհ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐԸ



**ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈ-
ՆՅԱՀԻ ՀԱՄԱՐ ՈՅ ՄԻՋԱՅԻ ԱՌԱ-
ՔԻՆՈՒԹՅՈՒՆ Է, ԱՅԼ ԱՎՃՐՈՒՆԸ և
ԱՎՐԵԼԱԿԵՐԱՅ:**



**Սակավապետ կենցաղը
զարգացնում է ինքնավերա-
հսկողության և սեփական
ուժերն իրատեսորեն գնահա-
տելու կարողություն, ինչպես
նաև զորացնում է կամքի ուժը:**

քիչ է խոսվում, սակայն Դիսուս Քրիստոսի, նրա առաջյալների և բոլոր մարգարենների կյանքը կենդանի քարոզ և օրինակ է չափավոր ու համեստ ապրելակերպի: Նրանց օրինակին հետևելով՝ բազմաթիվ հոգևոր այրեր, խիստ ժուժկալ կենցաղավարությունն ընտրելով, գնում էին անապատներ և վաճքեր կյանքի վայելքներից և գայթակղություններից հեռու մնալու համար:

Ժուժկալությունը քրիստոնյահի համար ոչ միայն առաջինություն է, այլև սկզբունք և ապրելակերպ: Քանի որ Եկեղեցական տոնացույցի համաձայն տարվա օրերի գրեթե կեսը պահի օրեր են, ապա յուրաքանչյուր բարեպաշտ և ավանդապահ քրիստոնյա տարվա կեսն արդեն իսկ պարտավոր է ապրել ժուժկալ կյանքով: Չնայած պահի իմաստն ու նշանակությունը շատ ավելի խորն ու կարևոր է, բայց առաջին հերթին իրաժարվելով կենդանական սննդից և տարբեր հաճույքներից, քրիստոնյան իրեն վարժեցնում է ժուժկալ կյանքի, կոփում իր կամքն ու բնավորությունը պահի օրերից դուրս նույնպես սակավապետ և չափավոր լինելու համար:

Ժուժկալ և չափավոր ապրելակերպը բավական մեծ ազդեցություն է ունենում անհատի բարոյակացերանական նկարագրի վրա: Մարդը դաշնում է զուսպ և չափավոր նաև խոսքի մեջ, ծեռք է բերում կայուն և հավասարակշռված վարքագիծ: Սակավապետ կենցաղը զարգացնում է ինքնավերահսկողության և սեփական ուժերն իրատեսորեն գնահատելու կարողություն, ինչպես նաև զորացնում է կամքի ուժը:

Որկրամոլություն

Ժուժկալության հակադիր բնեօք որկրամոլությունն է: Որկրամոլ նեղ իմաստով նշանակում է շատակեր, անկուշտ, որովայնամոլ: Քրիստոնեական բարոյագիտության մեջ այն ունի ավելի լայն իմաստ և, բացի թվարկվածներից, օգտագործվում է նաև շվայտությունը, ցոփությունը, հարբեցողությունը բնորոշելու համար:

Որկրամոլությունը պախարակելի է համարվում ոչ միայն քրիստոնեության, այլև բազմաթիվ կրոնների կողմից: Այն ոչ միայն աղճատում է մարդու բարոյական և հոգևոր նկարագիրը, այլև հիվանդությունների պատճառ դառնում: Ապացուցված է, որ առատ սննդի հետևանքով մարմինը գիրանում, ձեռք է բերում բազմաթիվ հիվանդություններ և ավելի արագ է ծերանում:

Դրան հակառակ՝ ծոմը և պահքը մաքրում են օրգանիզմն ավելորդ վնասակար նյութերից՝ նպաստելով նրա առողջացմանն ու երիտասարդացմանը: Այնուամենայնիվ, շատերի մոտ հարց է առաջանում, թե շատ ուտելը ի՞նչ կապ ունի մեղքի հետ, ի՞նչ աղերս ունի հոգեկանի և բարոյականի հետ:

Եկեղեցու հայրերը բոլոր մեղքերի պատճառը բացատրում են հոգու բնական կարգավորության խախտումով:

Այդպես է նաև որկրամոլության դեպքում: Ուտելը կամ խմելը մարմնի ցանկություններ են: Եթք բանականությունն է իշխում կամքի և կամքը՝

Ընչասիրությունը գուգակից է կրապաշտության:
Եզնիկ Կողբացի



Որկրամոլությունը պախարակելի է համարվում ոչ միայն քրիստոնեության, այլև բազմաթիվ կրոնների կողմից:

ՁՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



*Որկրամոլների աստվածն
իրենց որովայնն է:*

ցանկության վրա, մարդն ուտում և խնում է չափավոր: Իսկ եթե ցանկությունն է իշխում կամքին և կամքն էլ՝ բանականությանը, մարդու մեջ գերիշխում է անասնական բնազդը: Այդպիսի մարդկանց Պողոս առաքյալը համարում է Քրիստոսի թշնամիներ և ասում.

«Նրանց աստվածը իրենց որովայնն է»:



Գեղարդավանք



Հարցեր

1. Ինչպե՞ս է բացատրվում ժումկալ բառը:
2. Ո՞ր հարցերում պետք է քրիստոնյան լինի չափավոր:
3. Ի՞նչ դեր ունի պահքը քրիստոնյայի կյանքում:
4. Ի՞նչ կարևոր հետևանքներ է ունենում ժումկալությունը մարդու բարոյական մկարագորի վրա:
5. Ինչպե՞ս է բացատրվում որկրամոլ բառը:

Առաջադրանքներ

ա) Քննարկել.

1. Գործնական ի՞նչ օգուտ կարող է ստանալ մարդը ժումկալ կենցաղավարության շնորհիվ:

2. Որո՞նք են, ձեր կարծիքով, որկրամոլության բացասական հետևանքները:

բ) Արյուսակով ներկայացնել.

Ժումկալության օգուտները	Որկրամոլության վնասները



Կարդացեք և բացատրեք հետևյալ խրատների իմաստը

Մարդու մեջ ոչինչ ավելի մեծարված չէ, քան որկորը, բայց նրանից ապերախտ ոչինչ չկա. որովհետև որքան ավելի է պատիվ ստանում, այնքան ավելի անշնորհակալ է դառնում և հանդգնում առավել մեծարանք պահանջել: Եվ այնքան անազորույն է, որ իրեն սիրողին իրեն մշտնջենավոր գերի է դարձնում:



Յովիկը, եթե իր շանը միշտ ոչխարի մսով է կերակրում, նրան գայլ է դարձնում, և ով իր մարմինը սովորաբար պարարտ կերակրով է սնուցանում, այն գազան է դարձնում, մինչև որ ստամբակելով (ապստամբելով) այլևս չի հնազանդվում հոգու կամքին, այլ կամքը բռնադատում է ծառայելու իր հաճույքներին:



Վայ նրան, ով ծառայում ու անվարծ է մնում. բայց էլ ավելի վայ նրան, ով ծառայությունից սուժում է, ինչպիսին է մարմնի ու որկորի ծառան: Ով սանձ չի դնում երիվարի բերանին, բնավ չի հոգում, թե կզահավիժի, և ով ժուժկալությամբ չի նվաճում մարմինը, անփույթ է իր գլորման հանդեպ:

11. Ողջակուհություն և ռղջակուհություն

Մենք արդեն գիտենք նախորդ դասերից, որ այս կյանքը պատերազմի է նման (իիշե՛ք Եզնիկ Կողբացու խոսքերը), և մենք այդ պատերազմի դաշտում մարտիկներ ենք: Մեկ այլ օրինակով էլ այս կյանքը կարելի է նմանեցնել մի մեծ նավարկության, ուր ծովն այս աշխարհն է ներկայացնում, նավը մարդն է՝ իր գործերով, վարք ու բարքով, ապրումներով, հույզերով, իր էությամբ, իր իմացական ու հոգևոր կարողություններով, իսկ նավապետը՝ մարդու միտքն ու բանականությունը: Այս օրինակի մեջ նավարկելու արվեստը նմանեցվում է բարոյագիտության և գիտելիքների այն համակարգին, որի շնորհիվ ճանաչում ենք բարին ու չարը, զանազանում ենք դրանք և գնահատում կատարած արարքները: Իսկ գնահատականներ տալու չափանիշները միանշանակ են. առաջինությունները գնահատվում են դրական ու դրվագում, իսկ մոլությունները՝ դատապարտվում:

Ուստի նավը վարելու համար պետք է գերազանց իմանալ այն օրենքները, որոնց ենթակա է նավը, և սովորել նավարկելու գաղտնիքները, հակառակ դեպքում նավապետը նավը կտանի կործանման և չի կարող բարեհաջող ավարտել սկսած ճանապարհորդությունը:

Գնահատականներ տալու չափանիշները միանշանակ են. առաջինությունները գնահատվում են դրական ու դրվագում, իսկ մոլությունները՝ դատապարտվում:



Ինչպե՞ս դառնալ լավ հավապետ

Նավը վարելու համար պետք է գերազանց իմանալ այն օրենքները, որոնց ենթակա է նավը, և սովորել նավարկելու գաղտնիքները, հակառակ դեպքում նավապետը նավը կտանի կործանման և չի կարող բարեհաջող ավարտել սկսած ճանապարհորդությունը:



Ո՞ր քարտեզն ու կողմնացույցը պետք է լինեն այն մենտորները, որոնք ուղեցույց են հանդիսանալու նավապետի համար, ազատելու են ամենազանազան փորձություններից և սովորեցնելու են ճիշտ վարել նավը:

Առաջին հերթին անհատը ինքն անձամբ պիտի սովորի ճիշտ գնահատել իր գործած արարքները և իրեն վարժեցնի բարուն ձգտելու, վատն արհամարհելու ու մերժելու արվեստին:

Մենք արդեն գիտենք նաև, որ անհատն իր գործած արարքների համար պատասխանատու է և պատասխանատվություն է կրում.

- ա. Աստծու և իր խոհի առաջ,
- բ. մարդկանց առաջ,
- գ. Հայրենիքի առաջ:

ա. Աստծու և իր խոհի առաջ

Երբ մարդը հանցանք է գործում կամ վատ արարք կատարում, նրան առաջին հերթին սկսում է հանդիմանել իր խիղճը: Եկեղեցու նշանավոր հայրերից Հովհան Ոսկեբերանն այս կապակցությամբ նկատում է, թե Աստված խիղճը մարդու վրա կարգել է իբրև դատավոր: Նա չի կարող չարձագանքել իր խոհի ծայնին և հանգիստ մնալ վատ արարք կատարելուց հետո:

p. Մարդկանց առաջ

Ի վերջոն մեր արարքներին գնահատականներ են տալիս նաև մեզ շրջապատող ընկերները, մերծավորները, հարևանները: Այդ նրանք են առաջինն արձագանքում մեր արարքներին և մեր մասին հանրային կարծիք են ծևափորում: Այդ կարծիքը արհանարիել չի կարելի և պետք է հաշվի նստել այդ գնահատականի հետ:

գ. Հայրենիքի հանդեպ

Ամեն անհատ միացած է իր ժողովրդի հետ ամենազանազան կապերով՝ մշակութային, լեզվական, ազգային սովորույթներ և այլն: Սա նշանակում է, որ անհատը սերտորեն կապված է այն շրջապատի հետ, որը ծնել է իրեն, սնել, կրթել, դաստիարակել և մեծացրել: Այդ միաձուլությունը ստիպում է յուրովի մտածել և յուրովի պատկերացնել սեփական դերը հասարակության մեջ: Բազմաթիվ թելերով կապված լինելով իր ազգի հետ՝ անհատը հասկանում է, որ իր վատ արարքի դեպքում վնաս են կրում ոչ միայն ինքը, այլև մյուսները:

Հետևաբար, որևէ որոշում կայացնելուց առաջ պետք է առողջ դատել ու նոր միայն որոշում կայացնել, այսինքն՝ լինել ողջախոհ:

Եթե նավապետը զուրկ է ողջախոհությունից, նավը և նավավարը դատապարտված են կործանման:

Բազմաթիվ թելերով կապված լինելով իր ազգի հետ՝ անհատը հասկանում է, որ իր վատ արարքի դեպքում վնաս են կրում ոչ միայն ինքը, այլև մյուսները:



Ի՞նչ է ողջախոհությունը

Եթե նավապետը գուրկ է ողջախոհությունից, նավը և նավավարը դատապարտված են կործանման:



Ողջամտությունը բնորոշ է ազատ ու անկաշկանդ մարդուն: Ողջամիտն իր գործերով ու ապրելակերպով միշտ նպաստում է հոգևոր և նյութական արժեքների ստեղծմանը, իր վրա դրված պարտականությունները կատարում է անշեղորեն և երբեք չի քայլում այնպիսի ճանապարհով, որը հեռացնում է տրամաբանական քայլեր անելուց: Ողջամիտը ուշիմ է, զգոն և արաքինի:

Ուշիմը լսում է ավագներին, հետամուտ լինում իմաստուն և խելացի խորհուրդներին, ձգտում կատարելագործել իր գիտելիքներն իրեն մատչելի բոլոր ոլորտներում:

Զգոնը զինվորի նման արթուն է և պատրաստ արձագանքելու ցանկացած մարտահրավերի: Ուստի ավելի քան երբեք այժմեական է հոգևոր արթության մեջ իմանալու Քրիստոսի կոչը. «Արթուն եղեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք»:

Առաքինին միշտ հաղթում է իր մեղավոր ցանկություններին և, ի տարբերություն մոլության հետևողներին, մերժում է այդպիսի ընթացքը: Առաքինի մարդը երբեք չի թողնի հուսահատության ու նեղության մեջ գտնվողին, նա պատրաստ է իր ժամանակն ու շահերը գոհաբերել ընկերոց, մերձավորի համար անգամ այն դեպքերում, երբ դիմացինն իրեն պատասխանել է չարությամբ:

ՁՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բղջախոհությունը ողջախոհության հակառակն է, այսինքն՝ նշանակում է.

1. **ոչ ողջամիտ,**
2. **ոչ ուշիմ,** չարախոհ,
3. **ոչ զգոն,** անպատրաստ զանազան մարտահրավերների,
4. **ոչ առաքինի,** վավաշոտ, չար ցանկությունների գերի:

Մենք արդեն ցույց ենք տվել նախորդ դասերում, որ

**Առաքինության նշույլներ կան բոլոր մարդկանց
մեջ, և մարդ պետք է ձգտի վեր հանել հենց այդ,
թեկուզ փոքրիկ նշույլները:**

Առաքինությունն է զարդարում մարդու կյանքը՝ տալով նրան իրական պատկերացում կյանքի և նրա իմաստի մասին: Իսկ բղջախոհությունն ապականում է մարդու վարքը, նկարագիրը և անգամ այն բարին, որ կատարում է:

Օրինակ, տեսրի մաքուր թերթի վրա ինչքան էլ գեղեցիկ ծեռագրով, վայելուչ գրված նյութ լինի, սև թիժն անմիջապես աչքի է ընկնում:

Ամփոփում

Որպեսզի մարդ կարողանա բարիք գործել իր և ուրիշի համար, նա առաջին հերթին պիտի ինքն իր վրա աշխատի՝ պայքարելով իր անձնական արատների և թերությունների դեմ, զարգացնի իր մեջ բարին, քրիստոնեական սկզբունքները:

Որպեսզի մարդ կարողանա բարիք գործել իր և ուրիշի համար, նա առաջին հերթին պիտի ինքն իր վրա աշխատի՝ պայքարելով իր անձնական արատների և թերությունների դեմ, զարգացնի իր մեջ բարին, քրիստոնեական սկզբունքները:




Հարցեր և առաջադրանքներ

1. Բազմաթիվ նշանավոր մարդիկ իրենց կյանքի համար մենտոր են ճանաչել «Աստվածաշունչ» մատյանը: Ո՞րն է քո մենտորը:
2. Ինչպե՞ս պետք է պայքարել անձնական թերությունների դեմ:

Քննարկենք

1. Ընթերցել «Անառակ որդին» պատմությունը:
2. Ի՞նչ մենտոր նրան հեռացրեց հայրական տնից:
3. Ի՞նչ մենտոր նրան ետ բերեց հայրական տուն:



12. Ուսե ԿԱՆՈՆ

Մինչև այժմ մենք ծանոթանում էինք մարդու պարտականություններին, որոնք ունեին անձնական բնույթ, այսինքն՝ առնչվում են անհատի անձնական կյանքին, նրա կատարած այն արարքներին, որոնք ուղղակիորեն վերաբերում են իր անձին: Քանի որ մարդն իր բնությամբ ընկերային (սոցիալական) էակ է՝ իր նմանի հետ ապրող, հարաբերվող, ուրեմն բնականորեն անհրաժեշտ է այդ փոխհարաբերությունները կարգավորել օրենքի կամ պատվիրանների համակարգով: Իրոք, մարդ անհատն ապրում է հասարակության մեջ և միշտ իր առօրյա կյանքում շփում է մերձավորների, հարազատների, շրջապատի մարդկանց հետ: Այս առումով էլ կարևոր է շրջապատի հետ ունեցած հարաբերությունների կարգավորումը:

Իսկ ինչպես կարգավորել հարաբերությունները շրջապատի մարդկանց հարևանների, մերձավորների, ընկերների հետ: Ի՞նչը պետք է լինի այն մենտորը, որն ազատելու է ամենազանազան փորձություններից և սովորեցնելու է ճիշտ վճիռներ կայացնել:

Շրջապատի հետ մարդու փոխհարաբերություններն առաջին հերթին պետք է լինեն արդարացի, այսինքն՝ օրենքի, օրինականության սահմաններում, որոնք, որպես կանոն, լինում են.

ա. օրինական

բ. բարեկիրթ:

ա. Օրինական են համարվում այնպիսի փոխ-

Այն ամենը, ինչ կամենում եք, որ մարդիկ ծեզ անեն, այդպես և դուք արեք:



Քանի որ մարդն իր բնությամբ ընկերային (սոցիալական) էակ է՝ իր նմանի հետ ապրող, հարաբերվող, ուրեմն բնականորեն անհրաժեշտ է այդ փոխհարաբերությունները կարգավորել օրենքի կամ պատվիրանների համակարգով:



Ծրջապատի հետ մարդու փոխհարաբերությունները առաջին հերթին պեսք է լինեն արդարացի, այսինքն՝ օրենքի, օրինականության սահմաններում:

հարաբերությունները, երբ մարդ հավատարիմ մնալով պատվիրաններին, իր վարքն ու կենցաղը համապատասխանեցնում է այդ կանոններին: Սա արդարացի հարաբերությունների առաջին մակարդակն է, որն ամենատարածվածն է քաղաքացիական և հասարակական կյանքում: Նա իր վրա դրված բոլոր պարտականությունները կատարում է բարեխսղորեն և դրանով էլ սահմանափակվում է ու դրանից ավելիի մասին ոչ մտածում է և ոչ էլ փորձում է կատարել: Դրանց օրինակների լավագույն նմուշը Ավետարանի պատմություններում հանդիպող փարիսեցիների օրինակներն են:

Պարզ է, որ «օրինական» մարդը, այսինքն՝ օրենքի տառին հետևողը չոր ու քարսիրտ հարաբերությունների կրողն է և, չնահած իր պարտականությունները կատարելուն, այնուամենայնիվ, նրա վարքի մեջ պակասում է ջերմությունը, անկեղծությունը, սերը:

բ. Բարեկիրք հարաբերությունները գգալիորեն բարձր ու վեհ են օրինական հարաբերություններից: Բարեկիրթն ընդգրկում է օրինականի ողջ համակարգը և չի սահմանափակվում դրանով: Մարդու մեջ բնականորեն պարտականություններ կան, որոնք պարտադիր չեն, որ գրված լինեն ինչ-որ տեղ: Մարդու համար պարտականությունների այդ դասը զգացվում է խղճի վկայությամբ: Իրոք, մարդն առաջնորդվում է նաև խղճի ու սրտի թելադրանքով ու ոչ միայն օրենքի տառով: Այս դեպքում նա սովորաբար չի բավարարվում արածով ու ավելին է անում՝ օգնելով ուրիշներին: Սակայն ժամանակի

ընթացքում հոգմելով՝ բարեկիրթը կաշխատի խուսափել շրջապատից ու շրջապատող մարդկանցից՝ չլսելու համար ուրիշների կարիքներն ու հոգսերը, որոնելով առավել բարձր արժեքներ:

Մարդկային փոխհարաբերությունների մեջ գոյություն ունի մեկ այլ՝ ավելի բարձր ու վեհ հարաբերությունների տեսակ, որ համարվում է գագարնակետը գոյություն ունեցող բոլոր հարաբերությունների: Սահմանումը հետևյալն է.

**Այն ամենը, ինչ կամենում եք, որ մարդիկ ծեզ
ամեն, այդպես էլ դուք արեք նրանց:**

Եվ ոչ թե սոսկ՝

**Սի արեք ուրիշին այն,
ինչ չեք ուզում, որ ծեզ ամեն:**

Այս կանոնը կրում է «ոսկե» ածականը այն պատճառով, որ բովանդակում է մարդկային փոխհարաբերությունների կարգավորման ամենավեհ սկզբունքը, բացառում է կեղծավորությունը, սուսը, չարությունը, նախանձը: Բացի այդ, այս կանոնն ունի հրամայական ոճ, ոչ միայն թելադրում է չանել չարը, այլ հակառակը՝ բարին գործել սրտի թելադրանքով, անկեղծորեն, սիրով ու գթությամբ:

Ապրելով ու գործելով ոսկե կանոնի համաձայն՝ մարդ երբեք չի սխալվում իր կատարածի գնահատականի մեջ, այն միշտ լավագույնն է:



«Օրինական» մարդը չոր ու քարսիրտ հարաբերությունների կրողն է և, չնահած իր պարտականությունները կատարելուն՝ այնուամենայնիվ, նրա վարդի մեջ պակասում է ջերմությունը, ամկեղծությունը, սերը:



Ոսկե կանոնն ունի հրամայական ոճ, ոչ միայն թելադրում է չամել չարք, այլ հակառակը՝ բարին գործել սրտի թելադրանքով, ամկերծորեն, սիրով ու գրությամբ:

Թե՛ օրինական և թե՛ բարեկիրթ հարաբերությունների դրսնորման ժամանակ անհատը կարծում է, թե՛ ինքն արել է հնարավորությունների սահմաններում կարելին: Սա նշանակում է, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը չեն ծգտում անել այն, ինչ կուզենային, որ իր համար անեն: Սուրբգրային պատվիրաններն ունեն ներքին ուժ, կարողություն, որ անհատին առաջնորդում են անել ավելին, քան նա կարծում է: Օրինակ, եթե մեկը կարծում է, որ իր արարքը մերձավոր բարեկամի կամ ընկերոց համար բարի կլինի ու չի անում այդ, դա նրան մեղք է համարվում: Քրիստոնեական էթիկան այդ առումով միշտ ունի հրամայական եղանակով պատվիրաններ, այնտեղ չկան անգործության, անտարբերության տանող ուղիներ:

Ով որ գիտե, թե ինչ է բարին ու չի անում, նրա համար այդ մեղք է:

Եզրակացություն

Մենք բոլորս սիրում ենք, որ մեզ հետ վարվեն արդար, օրենքով, սիրով: Ոսկե կանոնն այդ հարցերին տալիս է անհատական լուծում. դու ինքդ սկսիր այդպես վարվել: Եթե ուզում ես, որ քեզ օգնեն հիվանդության ժամանակ կամ նեղության ու փորձության մեջ, ինքդ առաջինը օգնիր այդպիսիներին:

Եթե ուզում ես, որ քեզ սիրեն ու քեզ հետ վարվեն բարությամբ, ինքդ սիրիր ու բարի վարք ցույց տուր:

Եթե ուզում ես, որ քեզ ներեն ու չդատապարտեն, նախ ինքդ ներիր և փորձիր օգնել ուրիշներին՝

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

հաղթահարելու իրենց թերությունները:

Իսկ վերջին մեջ բերած պատվիրանը թելադրում է. անկախ նրանից, թե ինչ զնահատական կտա քո ընկերը, դու պարտավոր ես անել այն, ինչ համարում ես բարի. հակառակ դեպքում այդ քեզ համար մեղք կլինի:

Այս է քրիստոնեական բարոյականության շարժիք ուժը:

Անքարոյական կեռք օրինակը

Համաձայն մովսիսական օրենքի՝ անքարոյական կնոջը պետք էր քարկոծել, որպեսզի այդ երևոյթն իսպառ վերանար ժողովողի միջից:

Օրենսգետներն ու փարիսեցիները քրիստոսի մոտ բերեցին այդպիսի մի կնոջ և ասացին, որ օրենքի համաձայն այդ կնոջը պետք է քարկոծել, և ուզեցին իմանալ քրիստոսի կարծիքը: Հիսուսը պատասխանեց նրանց. «Չեր միջից անմեղը նախ թող առաջինը քար գցի նրա վրա»: Այս լսելով՝ նրանք մեկ առ մեկ թողեցին ու հեռացան:

Այս օրինակում օրենսգետներն ու փարիսեցիները ներկայացնում էին օրինականության դասի ներկայացուցիչներին, որոնց որոշումները միայն դատապարտում էին հանցավորներին (բերված օրինակում կնոջը):

Եթե ուզում ես, որ քեզ սիրեն ու քեզ հետ վարվեն բարությամբ, իմքդ սիրի՛ր ու բարի վարք ցույց տուր:




«Չեր միջից անմեղը նախ թող առաջինը քար գցի նրա վրա»: Այս լսելով՝ նրանք մեկ առ մեկ թողեցին ու հեռացան:

ՁՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ով առաքինություն է ցանում,
փառք է հնձում:**

Լեռնարդո դա Վինչի

Հիսուս չարդարացրեց կնոջը, այլ խորհուրդ տվեց զղջալ և ապրել բարոյական կյանքով, իսկ դատապարտողներից էլ պահանջեց մեղավորին դատապարտելուց առաջ անձնապես լինել մաքուր և անմեղ:



Ավետարան ըստ Յովիանու

«Գնա՛ և այսուհետ մեղք մի՛ գործիր», - ահա այսպես
Հիսուս մերեց այն կնոջը, որին կամենում էին քարկոծել:



Հարցեր

1. Որո՞նք են օրինական և բարեկիրթ փոխհարաբերությունները:
2. Ինչո՞ւ այդ երկուսն էլ բավարար չեն քրիստոնեական տեսակետից:
3. Ինչո՞ւ պետք է ամեն բան սիրով անել և ոչ թե պարտադրանքով:
4. Ինչո՞ւ է Ավետարանը պատվիրում ուրիշի աչքի միջի շյուղը տեսնելու փոխարեն սեփական աչքի միջի գերանը հանել:

Առաջադրանք

Կատարեք «Պրիզմա» վարժությունը՝ հիմք ընդունելով «Ոսկե» ածականը:

Զննարկենք

ա) Բաժանվեք խմբերի և կազմակերպեք քննարկում «Ոսկե կանոնը» թեմայով:



13. ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Բարին երբեք չի մահանում:
Եթե մահանար, աշխարհում
մարդիկ գոյություն չեն ունե-
նա, ոչ մի տեղ կյանք չէր լինի:
Վիշամ Սարոյան



Բարոյագիտության վերաբերյալ տեսակետներ

Բարոյագիտության վերաբերյալ կան բազմապի-
սի տեսակետներ, որոնք տարբեր կերպ են ներկա-
յացնում կամ բացատրում անհատի կյանքի,
բարոյական կերտվածքի ու աշխարհայացքի սկզ-
բունքները: Այդ հարցում կան նաև ծայրահեղ դիր-
քորոշում ունեցողներ: Օրինակ, մեզ արդեն ծանոթ
նիհիլիզմի ներկայացուցիչները մերժում են ամեն
ինչ, ժխտում են դրական արժեք ներկայացնող բա-
րոյական սկզբունքները, մշակութային համակար-
գերը, հասարակական կյանքին բնորոշ չափա-
նիշները: Նիհիլիստները հանգում են այն եզրակա-
ցության, որ ամեն ինչ աննպատակ է, որ նպատակ
փնտրել ամեն ինչում՝ նույնպես աննպատակ է ու
անինաստ:

Պարզ է, որ այս համակարգը քրիստոնեական
բարոյագիտության տեսակետից մերժելի է հենց
այն իմաստով, որ աննպատակ ու անիմաստ ոչինչ
չկա, և քրիստոնեական եթիկան ամեն ինչի մեջ հս-
տակ նպատակ է տեսնում ու այդ նպատակին հաս-
նելու համար ճանապարհներ ցույց տալիս:

Կան նաև այլ ուղղություններ, որոնք փորձում են
իրենց սկզբունքների համաձայն բացատրել մար-
դու կյանքի իմաստը, սահմանել ու գնահատել զա-
նազան արժեքներ և նշել այդ արժեքներին
հասնելու ճանապարհներ:

Թվենք մի քանիսը:

Հեղոնիզմը կյանքի իմաստը տեսնում է հաճույքի ու վայելքների մեջ: Այդ անվանումը առաջացել է հունարեն hedone՝ հաճույք բառից: Համաձայն այդ ուսմունքի՝ մարդու բարոյական նկարագիրը որոշվում է հաճույքների բավարարումից: Այս համակարգում բարի է համարվում այն, ինչ հաճույք է բերում, իսկ չար է այն, ինչ տառապանք է բերում: Հաճույք կամ վայելք ասելով նրանք հասկանում են և նյութական վայելքները, և հոգնոր արժեքների մեջ բավարարում գտնելը, ինչպես, օրինակ՝ արվեստում, երաժշտության, գրականության կամ գիտության մեջ:

Հին աշխարհում հեղոնիզմի լավագույն օրինակն է հռոմեացիների հետևյալ ասացվածքը.

Eide, bide, lude
Կե՛ր, խմի՛ր, քե՛ֆ արա:

Այսպիսով, այս ուսմունքը մարդկանց մղում է էթիկայի տեսակետից խիստ պարզունակ ապրելակերպի, ուստի անընդունելի է:

Հեղոնիզմի բարոյականությունն իր զարգացումը գտավ հույն իմաստասեր Էպիկուրի ուսմունքում, որը կոչվում է **Եվդեմոնիզմ**:

Եվդեմոնիզմը որպես մարդու բարոյականության հիմք ընդունում է երջանկության ձգտումը:

Մեղք է և հեշտ՝ գործել

չարիք,

Վարձք և դժվար՝ գործել

բարիք:

Նաղաշ Հովնաթան



Բարի, գեղեցիկ, առաքինի

Ծնկերը մարդու,

Փայլեցնում է արևի պես

պատկերը մարդու:

Զիվանի



Մենք այս բանի համար չենք դատողություններ անում, որ իմանանք, թե ինչ է առաքինությունը, այլ նրա համար, որ դառնանք լավ մարդ:



Առաքինությունից ավելի հարուստ ժառանգություն չկա:

Վիշամ Շեքսպիր

Երջանկություն ասելով Էվդեմոնիզմը հասկանում է հաճույքի և բավարարվածության ձգտումը, որն էլ մարդու կյանքը երջանիկ է դարձնում: Այն երկու ճյուղ ունի՝ անհատական երջանկություն և սոցիալական՝ հասարակական երջանկություն:

Այս համակարգում անհասկանալի է դառնում, թե ի՞նչ հաճույքների պիտի ձգտել երջանիկ լինելու համար: Ոնանց կարծիքով, այն կարող է լինել զգացական, զգացմունքային պահանջների բավարարումը, ոմանք էլ կարծում են, թե այդ հաճույքները պետք է լինեն ոչ նյութական բնույթի՝ ինչպես նշեցինք վերևում (արվեստ, մշակույթ, գիտություն և այլն):

Քրիստոնեական բարոյագիտության տեսանկյունից՝ հետրնիզմի և Էվդեմոնիզմի սկզբունքները չեն կարող բարոյականության հիմք համարվել:

Բարոյականության հիմնական հարցը բարու ու չարի զանազանումն է, որն անհատի ցանկությունից կախված չէ: Մրան հակառակ, Էվդեմոնիզմում բարին և չարը սահմանվում են որպես անհատի համար հաճելին կամ տհաճը, այսինքն՝ կախված են անձից, հետևաբար, ընդունելի չեն քրիստոնեական երիկայի կողմից: Յասկանալի է, որ Էվդեմոնիզմի հետևորդը միշտ պիտի ձգտի իր անձն առաջ տանելու, այսինքն՝ էռությամբ նա անձնակենտրոն է, եսակենտրոն էգոիստ: Դիշենք քրիստոնեական բարոյականության հիմք հանդիսացող պատվիրանները անձնուրացության, նեղ ծանապարհով գնալու մասին և Ոսկե կանոնը, որը տրամադրուեն հակառակ է Էվդեմոնիզմին:

Այս համակարգերում բացակայում է այն հիմ-

ՁՐԻՍՏՈՆԵՎԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

նական անկյունաքարը, որի վրա կանգնած է բարոյականությունն ընդհանրապես: Դա սերն է: Սերն է ստիպում ու առաջնորդում մեզ այնպիսի առաքինությունների, որոնք ինաստ ու ուղեցույց են հանդիսանում անհատի համար՝ ճիշտ գործելու, սխալ արարք չկատարելու: Այդ առաքինություններից են համբերությունը և հույսը, որոնց գոյությունը վերը թվարկած համակարգերում անհամատեղելի է:

Համբերություն

Համբերությունը ներքին որակ է հաղորդում անհատին իր արարքները ճիշտ գնահատելու համար: Եթե հնարավոր լիներ կատարած արարքնե- րը կրկնել, բնական է, որ չին լինի նախորդ արարքում թույլ տրված սխալները: Բայց ժամանակն իր ընթացքի մեջ անկրկնելի է և այն անհնար է ետք բերել գործած սխալն ուղղելու համար:

Այս առումով պետք է անընդհատ կրթել միտքը, սիրտը, որպեսզի արարքների մեջ գերիշխողը լինի խոհեմությունը և ոչ թե զգացմունքը, որը կարող է սխալ լինել: Համբերությունը, որպես առաքինություն, հենց այդ կարգի սխալներն է կանխում:

Համբերությունն ունի երկու երես: Նախ այն ունի անհատական բնույթ և վերաբերում է անհատի ներքին կյանքին, նրա անձնական հատկանիշներին ու բնավորության գծերին, խառնվածքին, սովորություններին: Երկրորդ կողմը վերաբերում է մերձավորների, նտերիմների, շրջապատի մարդկանց միջև տեղի ունեցող հարաբերություններին:

Սկզբում բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաքինի չի կարող լինել երկրորդը:

Սենեկա



Բարոյական լինելու համար միայն խելամտությունը շատ քիչ է:

Իմանուիլ Կանտ

**Սերմ է ստիպում ու
առաջնորդում մեզ այճախիս
առաքինությունների, որոնք
ինաստ ու ուղեցույց են հան-
դիսանում անհատի համար
ծիշտ գործելու, սխալ արարք
չկատարելու:**



Երկու դեպքում էլ համբերությունը սովորեցնում է.

**ա. համբերելով հաղթել մեր իսկ զգացմունքնե-
րին խոհեմությամբ վարվելու համար:**

**բ. համբերելով երբեք թշնամաբար ու վրեժ-
խնդրուեն չպատասխանել մերձավորներին նրանց
կատարած արարքների համար, այլ քրիստոնեա-
կան սիրո արտահայտությամբ վարվել՝ բարիով
հաղթելով չարին:**

Այստեղ, բնականաբար, հարց կառաջանա, թե
ինչո՞ւ պետք է համբերենք կամ հանուն ինչի՞ պետք
է մերել մեր հանդեպ սխալ գործողներին:

Ինչո՞ւ պետք է համբերել, կամ հույսի սահմանումը

Թե ինչի ենք ձգտում կամ թե ինչո՞ւ ենք համբե-
րում, պարզ կդառնա հույսի սահմանումից:

Հույսը այն առաքինությունն է, որը մեզ մղում է
ձգտելու, ակնկալելու բարին՝ որպես մեր սպասու-
մի ավարտ ու վերջարան: Համբերության պսակը
հույսն է, որն ստիպում է մեզ նոր եռանդով ու համ-
բերությամբ շարունակել մեր բարի գործերն ու
անձնական ինքնակրթությունը՝ ինքնադաստիարա-
կությունը:

Հույսը մարդուն երբեք մենակ չի թողնում ոչ
վտանգի ժամանակ, ոչ փորձության և վերացնում է
անհատի հուսալքնան ցանկացած դրսերում,
պարտվողական-հաշտվողական կեցվածք:

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիշենք հայտնի բանաձևը.

Հույսն ամոթով չի թողնում:

Հույսով ապրող անհատի կյանքում գոյություն չունի անելանելի վիճակ:

Հույսը ուղեկցում է մարդուն մինչև իր կյանքի վերջը՝ ինչպես ասում է լատիներեն ասացվածքը.

Dum spiro, spero

Քանի շնչում եմ, հույս ունեմ:

Ամփոփում

Իր առօրյա կյանքում, ապրելակերպում համբերությամբ ու հույսով առաջնորդվող անհատը ոչ միայն ճիշտ է լինում իր արարքների մեջ, այլև օրինակ է հանդիսանում շրջապատի համար՝ կյանքի դժվարությունները հաղթահարելու ճանապարհն:

Դույսը մարդուն երթեք մենակ չի թողնում ոչ վտանգի ժամանակ, ոչ փորձության և վերացնում է անհատի հուսալքման ցանկացած դրսնորում, այսուվողական-հաշտվողական կեցվածք:



Հարցեր

1. Ինչպե՞ս են հիմնավորում նիհիլիստներն ամեն ինչ ժխտելու իրենց դիրքորոշումը:
2. Ինչո՞ւ հեղոնիզմի և էվենոնիզմի սկզբունքները չեն կարող բարոյականության հիմք համարվել:
3. Ի՞նչ է համբերությունն անհատի կյանքում:
4. Ո՞րն է հույսի սահմանումը:
5. Ինչո՞ւ «Ուկե կանոնը» տրամագծորեն հակառակ էվենոնիզմին:

Առաջադրանքներ

ա) Ուսուցչի օգնությամբ քննարկեք բարոյագիտական ընկալումների մեջ գոյություն ունեցող այնպիսի տեսակետներ, ինչպիսիք են նիհիլիզմը, հեմդրոնիզմը, էվենոնիզմը:

բ) Կատարեք «Պրիզմա» վարժությունը՝ որպես հիմնական բառ ընդունելով «հույսը»:



14. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն գիտենք նախորդ դասերից, ամեն մի անհատ իմաստավորում է իր կյանքը՝ զգտելով բարոյական կատարելության:

Այդպես է գործնական կյանքում ձևավորվում որոշակի փորձառություն, ստուգվում անհատի իմացական կարողությունների և իրական կյանքում այդ կարողությունների դրսևորման համապատասխանությունը: Դայտնի է՝ միշտ չէ, որ այն, ինչ ուզում ենք անել և այն, ինչ անում ենք, համապատասխանում են իրար: Իմացականի ու գործնական արարքների փոխհարաբերությունը որոշում է անհատի հավատարմության աստիճանը՝ ըստ իր բարոյական կերպարի:

Խոսքի ու գործի փոխհարաբերության մասին լավագույն օրինակ է հոր և երկու որդիների հայտնի ավետարանական առակը:

Երկու որդիների առակը

Մի մարդ ուներ երկու որդի: Նա ավագին ասաց. «Գնա՛ այգում աշխատելու»: Ավագն ասաց՝ «Կզնամ», բայց չգնաց: Կրտսերին էլ հայրը ասաց նույն բանը: Կրտսերն ասաց. «Չե՞ն գնա», բայց հետո զղաց ասածի համար ու գնաց աշխատելու:

Այս երկուսից ո՞վ կատարեց հոր կամքը, կամ ո՞վ հավատարիմ եղավ հորը:

Դայտնի է՝ միշտ չէ, որ այն, ինչ ուզում ենք անել և այն, ինչ անում ենք, համապատասխանում են իրար:



Իմացականի ու գործնական
արարքների փոխարարերու-
թյունը որոշում է անհատի հա-
վատարմության աստիճանը՝
ըստ իր բարոյական կերպարի:



Պատասխանն արդեն միանշանակ հայտնի է: Ակնհայտ է, որ ավագ եղբայրը խաբեց հորը, իսկ կրտսերը, ճիշտ է, սկզբում մերժեց, բայց հետո կատարեց հոր ասածը:

Հավատարմություն

Հավատարմությունը այն ներքին առաքինությունն է, որով անհատը ճանաչում է իրեն:

Մենք նախորդ դասերում արդեն ցույց ենք տվել, որ բարոյականության վերաբերյալ այն տեսությունները, որոնց հիմքում ընկած չէ սիրո գաղափարը, թերի պատկերացում են տալիս մարդու բարոյական նկարագրի մասին: Քրիստոնեական բարոյական համակարգը՝ մերձավորին սիրելու պատվիրանով ու Ոսկե կանոնով, ի տարբերություն այլ տեսությունների վրա ծևավորված համակարգերի, իր նկարագրով ամենաիրատեսականն է ու, հետևապես, հնարավոր է այն իրականություն դարձնել: Մարդն իր կյանքում ենթակա լինելով զանազան փորձությունների, գրեթե միշտ փորձվում է, թե ինչքանով է հավատարիմ բարոյական համակարգի արժեքներին: Իսկ քանի որ բարոյական կատարելությունը սահման չունի, ինչպես որ սերը սահման չունի, անհատի համար բացվում է մի անհուն տիեզերք և հնարավորություն՝ հասնելու կատարելության տանող արժեքներին:

Այս ամենը վերացական սկզբունքներ ու սահմանումներ չեն, այլ իրականության մեջ դրսեւորվող երևոյթներ, որոնք առաջին հերթին երևան են գալիս մերձավորների հետ ունեցած անհատի փոխարարերություններում: Բարոյականության մեջ

մարդկանց փոխհարաբերությունների վերաբերյալ կան երկու իրարամերժ ու հակադիր տեսակետներ՝ կոսմոպոլիտիզմ և հայրենասիրություն կամ ազգա-սիրություն:

Ի՞նչ է կոսմոպոլիտիզմը

Բառացի՝ կոսմոպոլիտիզմ նշանակում է տիեզերական կամ համաշխարհային քաղաքացիություն: Դամաձայն այս ուսմունքի՝ մարդը «տիեզերքի քաղաքացին» է և ոչ թե իր պետության կամ երկրի: Կոսմոպոլիտիզմը չի ընդունում ոչ մի ազգային-պետական առանձնահատկություն. բոլոր մարդիկ պետք է լինեն մի ընտանիքի անդամներ: Առաջին հայացքից դա նման է քրիստոնեական բարոյական չափանիշներին, և հենց այնտեղից է վերցրել կոսմոպոլիտիզմն իր հիմնական սկզբունքները՝ սերը, եղբայրասիրությունը, իրար հանդեպ բարի լինելը: Եվ միայն այսքանը: Կոսմոպոլիտիզմի մեջ միայն այդ է գնահատելի: Բայց կոսմոպոլիտիզմը քարոզում է ողջ մարդկության հանդեպ ցուցաբերել ավելի մեծ սեր, քան իր հայրենիքի, և հայրենիքի նկատմամբ սերը հակադրում է համաշխարհային քաղաքացիությանը: Այս զաղափարը անբնական է դարձնում կոսմոպոլիտիզմը, որովհետև բնականց թիսող սերն է առաջնայինը և ոչ թե հակառակը, որովհետև մասնավոր սիրո մեջ պետք է ցոլանա ընդհանրականը:

Մերձավորի հանդեպ ունեցած սիրուն է հաջորդում սերը այլ ազգերի ու մարդկանց հանդեպ և ոչ թե հակառակը:

Քրիստոնեական բարոյական համակարգը՝ մերձավորին սիրելու պատվիրանով ու Ոսկե կանոնով, ի տարրերություն այլ տեսությունների վրա ձևավորված համակարգերի, իր նկարագրով ամենաիրատեսականն է ու, հետևապես, հնարավոր է այն իրականություն դարձնել:





Բնականից բխող սերն է առաջնայինը և ոչ թե հակառակը, որովհետև մասնավոր սիրո մեջ պետք է ցոլանա ընդհանրականը:

Ազգասիրություն, հայրենասիրություն

Հայրենիքն անհատի համար ոչ միայն այն երկիրն է, որտեղ նա ծնվել ու ապրում է, այլ նաև հասարակությունը՝ իր պետական կառուցվածքով, հավատով, լեզվով, մշակույթով, բարքերով, սովորություններով և պատմությամբ: Եվ ինչպես որ անհատը սիրում է իր ծնողներին, նույնպես և պիտի սիրի իր հայրենիքը: Հայրենիքի հանդեպ սերը բնական է մարդու համար, և այդ սերը պետք է արտահայտվի իրականում: Բարոյական քաջագործությունը է անձնական շահերը և բարեկեցությունը ստորադասելը հայրենիքի շահերին:

Հայրենիքի հանդեպ սերը մղում է քաղաքացիներին ծառայել նրա բարօրության, հզորացման համար, ինչպես նաև պաշտպանել այն օտարների հարձակումներից:

Հայրենիքին ծառայելը նշանակում է նաև պարտաճանաչ կերպով կատարել մեզ վոա դրված ամենաչնչին պարտականություններն անգամ ու երբեք չօգտագործել այդ ծառայությունն անձնական նպատակների իրագործման համար:

Հայրենիքի սերը վեր է անձի շահերից

Սկզբում միգուցե այդ սերը բնազդաբար է արտահայտվում, բայց աստիճանաբար այն վերածվում է զորեղ գիտակցության: Հայրենիքի պաշտպանությանը զուգահեռ առարկայաբար առաջանում է նաև ազգային հոգևոր արժեքների

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

պաշտպանության հարցը: Անձնական փառքի, պատվի, ապահովության և բարօրության հետ միաժամանակ ձևավորվում է ազգի ու հայրենիքի փառքի, ապահովության և բարօրության գաղափարը: Մի գաղափար, որի վար դրսեղումը Վարդանանց դյուցազնապատումն է, Արցախյան հերոսամարտը:



Դայրենիքն անհատի համար ոչ միայն այն երկիրն է, որտեղ նա ծնվել ու ապրում է, այլ նաև հասարակությունը՝ իր պետական կառուցվածքով, հավատով, լեզվով, մշակութով, բարքերով, սովորություններով և պատմությամբ: Եվ ինչպես որ անհատը սիրում է իր ծնողներին, նոյնպես և պիտի սիրի իր հայրենիքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ կոսմոպոլիտը չի կարող սիրել մերձավորին: Որպես օրինակ բերեք Ֆրանսիական մեծ հեղափոխության կոսմոպոլիտական կարգախոսները և իրականությունը՝ գիլիոտինի (մահապատիճն իրագործելու սարք) հայտնաբերումը:
2. Վարդանանց կարգախոսներից էր՝ «Վասն հայրենյաց և վասն հավատո»: Կարելի՞ է արդյոք բաժանել այս երկուսն իրարից: Բերել օրինակներ:

Քննարկեք

Կազմակերպեք քննարկում «Ի՞նչ է նշանակում ծառայել հայրենիքին» թեմայով:



Դաղպատ

15. Մարդ և աւտոմատ և ենթութիւն

Մարդը՝ արարչության պսակ

Մարդ արարածը մյուս արարածների հանդեպ գրավում է եզակի դիրք: Մարդու արարումը լրացրեց և ամբողջացրեց Տիեզերքը, աստվածային բանականությամբ իմաստավորեց ողջ արարչագործությունը:

Քրիստոնեական բարոյագիտության մեջ այդ առումով է մարդ արարածը գրավում եզակի դիրք, որովհետև մարդը ստեղծվեց Աստծու պատկերով և նմանությամբ:

Ո՞րն է Աստծու պատկերն ու նմանությունը

Ինչպես որ Աստված ի զորու է փոխել բնությունը, աշխարհը՝ իր կամքի համաձայն, այդպես էլ մարդն իրեւ Աստծու տնտես ի վիճակի է փոխելու իրեն շրջապատող աշխարհը, բնությունը, քանի որ իրեն տրվեց այդ իշխանությունը: Աստվածային պատկերն ու նմանությունը մարդուն հնարավորություն են տալիս իշխել իր զգայական աշխարհի վրա, ձգտել կատարելության: Բանականությունը, մտածելու, ընտրելու, արարքների մեջ ազատ լինելու և ստեղծագործելու կարողությունը մարդուն վեր են դասում կենդանական աշխարհից՝ շեշտելով նրա աստվածային նմանությունն ու պատկերը: Պատահական չէ, որ եկեղեցու երևելի հայրերից մեկը՝ Ս. Գրիգոր Նյուսացին գտնում է, որ մար-



Քրիստոնեական բարոյագիտության մեջ մարդ արարածը եզակի դիրք է գրավում, քանի որ ստեղծվել է Աստծու պատկերով և նմանությամբ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ծնորի տալը Աստծու գործն է:
այն պահելը ու պահպանելը՝
քոնք:**

Ս. Կյուրեղ Երուսաղեմացի



դու՝ Աստծու պատկերով ու ննանությամբ ստեղծված լինելը ցույց է տալիս նրա բացարձակ ազատությունը:

Մարդուն տրված է նաև իրական աշխարհը ճանաչելու հնարավորություն, ազատորեն ընտրելու իր ճանապարհը և, եթե այն ճիշտ է ընտրված, այդ ճանապարհով գնալու կարողություն:

Մարդը իին հույների պատկերացմամբ

Պլատոնն իր «Ճանրապետություն» երկասիրությունում նկարագրում է մի երևակայական աշխարհ՝ քարանձավ, որի բնակիչները շղթաներով գամկած բանտարկյալներ են, լույսի աղբյուրը գտնվում է նրանց հետևում, և նրանք տեսնում են միայն արտաքին աշխարհում գտնվող մարդկանց և իրենց սեփական ստվերները: Այսինքն՝ իրականությունը և արտաքին աշխարհը նրանց համար այդ պատերի վրայի ստվերներն են միայն: Բանտարկյալներից մեկին հաջողվում է ազատվել կապանքներից և հետ գնալով տեսնել լույսի աղբյուրը, որը նրա աչքերին ցավ է պատճառում, քանի որ մինչ այդ երբեք լույս չէր տեսել և լույսին անսովոր էր: Եվ չնայած այդ ամենին՝ նա համոզվում է, որ մինչ այդ իր տեսած ամեն բան միայն ստվեր էր:

Մարդու կյանքն այս իրական աշխարհում, առանց քրիստոնեական բարոյական չափանիշների, պլատոնյան քարանձավի կյանքն է՝ մութ և անիրական ստվերներով: Մարդուն քարանձավին կապող շղթան մեղքն է, նրա հակվածությունը դեպի

ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

չարը գործելու, որոնք զրկում են մարդուն իրական պատկերից ու նմանությունից և կապում պլատոնյան քարանձավի պատերին: Ազատվելով այդ կապանքներից՝ նա դուրս կգա քարանձավից դեպի լուսը և միայն այդ դեպքում կճանաչի թե՛ իրեն և թե՛ շրջապատող իրական աշխարհը:

Մարդու մեջ գիտակցականության առկայությունը և աստիճանական զարգացումը, փորձառաբարձիշտ և սխալ արարքներ կատարելով կատարելության ձգտելը, սխալները վերացնելու համար ճիգ գործադրելը նրան ազատում է այն բոլոր սահմանափակումներից, որոնք պարտադրվում են նյութական աշխարհի կողմից: Մարդն ավելին է, քան նյութական աշխարհը, և նա ի վիճակի է ձգտել ու գերի չլինել այդ կապանքներին: Այս ձգտումը, նպատակը հենց այն ուժն է, որ կարող է վերափոխել մարդուն, այլ կերպ ասած «ՄԱՐԴՈՒ ՄԱՐԴ» դարձնել: Ցանկացած գաղափարական շեղում այդ ճանապարհից առաջ է բերում Մարդուն Մարդու կերպարանքից զրկելու ուսմունք կամ վարդապետություն, որոնցից մի քանիսը ներկայացված են նախորդ դասերում:

Եկեղեցին

Քրիստոսն իր առաքյալների միջոցով այս աշխարհում հաստատեց մի նոր կառույց, որը մարդկանց պիտի սովորեցնի, դաստիարակի՝ համաձայն քրիստոնեական ուսմունքի բարոյական չափանիշների, և հանդիսանա այն «տապանը», որն ուղեկցելու է անհատին դեպի անմահության

Մարդն ավելին է, քան նյութական աշխարհը, և նա ի վիճակի է ձգտել ու գերի չլինել այդ կապանքներին:



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիշենք հայտնի դարձվածքը.
«Եկեղեցուց դուրս չկա
փրկություն»:



Զղջացող ու ապաշխարող
անհատին քահանան ներում է
շնորհում: Այդ շնորհը դարձյալ
տրված է Եկեղեցուն:

հանգրվան՝ Երկնային արքայության: Այդ հաստա-
տությունը Եկեղեցին է: Ըստ Եկեղեցու հայրերի և
աստվածաբանների՝

**Եկեղեցին Երկինքն է Երկրի վրա, այն Աստծոն և
մարդու հանդիպավայրն է:**

Անմահությունը սկսվում է այն պահից, երբ ան-
հատը մկրտվում է Եկեղեցում՝ հոգևորականի
ծեռքով: Վերջին պայմանը կարևոր է, քանի որ մի-
այն քահանայական դասին է տրված մկրտելու իշ-
խանությունը՝ անձամբ Հիսուս Քրիստոսի կողմից:

Մկրտությամբ անհատի համար սկսվում է նոր
կյանքը: Բայց, ինչպես գիտենք, մարդուն բնորոշ է
սխալվելը, ուստի նա պարբերաբար պետք է կա-
դիք ունենա մաքրվելու, սրբվելու իր կատարած
սխալներից: Այստեղ դարձյալ օգնության է հաս-
նում Եկեղեցին՝ իր խորհուրդներով ու իշխանու-
թյամբ: Զղջացող ու ապաշխարող անհատին
Եկեղեցու սպասավորը ներում է շնորհում: Այդ
շնորհը դարձյալ տրված է Եկեղեցուն:

Աստվածային շնորհը Եկեղեցու միջոցով բաշ-
խվում է մարդկանց, բայց մարդն էլ ջանք պիտի
գործադրի այդ շնորհին արժանանալու համար:
Դայց Եկեղեցու դրմերը բաց են բոլորի համար, և
Եկեղեցին պատրաստ է իր հոգևոր արժեքները
բաշխել բոլորին:

Մեր մատենագրության մեջ այդ հարցի լուսա-
բանումը գեղեցիկ ձևով ներկայացնում է Ս. Գրի-
գոր Տաթևացին՝ արծվի օրինակը բերելով:

Արծվի օրինակը

Արծիվը երկու թև ունի: Մեկը աստվածային շնորհն է, մյուսը իր՝ արծվի ջանքը վեր թռչելու համար: Եթե թևերից որևէ մեկը չգործի, ապա արծիվն ի վիճակի չի լինի վեր բարձրանալու և կընկնի գետնին: Իսկ երկու թևերը միասին աշխատելով՝ արծվին կհանեն երկինք:

Ամփոփում

Աստված մարդուն ստեղծել է առանց մարդու մասնակցության, բայց նրան փրկելու համար պահանջում է նույն այդ մարդու կամքը և ցանկությունը, քանի որ մարդն ազատ է ստեղծված և ինքն է որոշում ու ընտրություն կատարում: Մարդն ազատորեն կարող է ընտրել բարին կամ չարը, փրկությունը կամ կործանումը: Եկեղեցու հիմնական առաքելությունների շարքում է մարդուն օգնելը, զգուշացնելը, սովորեցնելը՝ ճիշտ ընտրություն կատարելու և Աստծուն մշտապես հաղորդակից լինելու համար:

Ինչպես հիշում եք, Եկեղեցի բառն առաջացել է հունարեն էկլեսիա բառից, որ նշանակում է ժողովարան, ժողովրդի հավաքույթ: Այդ առումով էլ Եկեղեցու հիմնական առաքելություններից է նաև ժողովրդին հոգ տանելը, հովվելը, Աստվածաշնչի պատգամները քարոզելը, Աստծու խոսքը ժողովրդին հասցնելը:

Եկեղեցին երկինքն է երկրի վրա, այն Աստծու և մարդու հանդիպավայրն է:



Դայոց Եկեղեցու դռները բաց են բոլորի համար, և Եկեղեցին պատրաստ է իր հոգևոր արժեքները բաշխել բոլորին:

Աստված մարդուն ստեղծել է առանց մարդու մասնակցության, բայց նրան փրկելու համար պահանջում է նույն այդ մարդու կամքը և ցանկությունը, քանի որ մարդն ազատ է ստեղծված և ինքն է որոշում ու ընտրություն կատարում:




Այդ պատճառով է, որ Եկեղեցին նաև ծշմարիտ հավատի պահապանն է: Եկեղեցու մեջ են պահպում հազարամյակներով փորձված ու հաստատված ծշմարտությունները, որոնք Եկեղեցական արարողությունների, խորհուրդների, ծեսերի միջոցով մատուցվում են ժողովրդին նպաստելով մարդկանց բարոյական կերպարի կատարելությանը:

Եկեղեցին Քրիստոսի գործի շարունակողն է այս աշխարհում:

Ինչպես գիտենք, Յայոց Եկեղեցին, մաս կազմելով Ընդհանրական Եկեղեցու, իր ծառայական պաշտոնի մեջ, բացի վերը թվարկածից, ունի նաև մի շարք այլ առաքելություններ. Յայոց Եկեղեցին **Ազգային Եկեղեցի** է և նրան է վիճակված լուծել ազգային խնդիրների մի ողջ շարան, քանի որ դարերով գրկված լինելով պետականությունից՝ պետականության առաքելությունները դարեր շարունակ նույնպես ստանձնել է Եկեղեցին:

Անկախության այս շրջանում Եկեղեցու գործունեության ծիրը գնալով ընդլայնվում է, քանի որ ավելի է կարևորվում մարդկանց բարոյական դաստիարակության խնդիրը: Բացի այդ, Եկեղեցին իր գործունեությամբ նպաստում է նաև ժողովրդի և հատկապես մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը, հայրենի պետության հզորացմանը, մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը, զանազան սոցիալական խնդիրների լուծմանը:



Նորավանք



Եկեղեցու մեջ եմ պահպում հազարամյակներով փորձված ու հաստատված ծշմարտությունները, որոնք եկեղեցական արարողությունների, խորհուրդների, ծեսերի միջոցով մատուցվում է ժողովրդին՝ նպաստելով մարդկանց բարոյական կերպարի կատարելությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է մարդու արարչության պսակ համարվում:
2. Ի՞նչ է նշանակում «Մարդու Աստծու պատկերով և նմանությամբ է ստեղծված»:
3. Ե՞րբ է լույսը մարդու համար անսովոր:
4. Ո՞րն է եկեղեցու հիմնական առաքելությունն այս աշխարհում:



Անիի Սայր տաճարը

16. Հայոց եկեղեցու ԺԱՄԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ Ս. Պատարագը

Դարերի ընթացքում եկեղեցին հաստատել և օրինակարգել է Աստծու հետ հարաբերվելու միջոցներ ու եղանակներ:

Աստվածաշնչում Աստծու հետ հարաբերվելու առաջին և կարևորագույն միջոց է համարվում աղոթքը:

Աղոթքի վերաբերյալ աստվածաշնչյան հորդորները և ցուցումներն ուսանելի են Աստծու հետ քրիստոնյայի հարաբերությունը ճիշտ և ներդաշնակ դարձնելու համար: Չատկապես կարևոր է Քրիստոսի հետևյալ պատվիրանը: **Երբ աղոթես,
չկինես կեղծավորների նման,** որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան: Այլ դու երբ աղոթես, մտիր քո սենյակը,
փակիր քո դռները և ծածուկ աղոթիր: Աղոթելիս շատախոս մի եղեք, ինչպես հեթանոսները, քանզի նրանք կարծում են, թե իրենց շատ խոսքերի պատճառով լսելի կլինեն: Այս պատվիրանի մեջ կարևորությամբ առաջին հրահանգը վերաբերում է ցուցադրական աղոթքից կամ ցուցադրական բարեպաշտությունից խուսափելուն և Աստծու հետ առանձնական հաղորդակցմանը, երկրորդը՝ աղոթքի մեջ շատախոս չի կլինելուն:

Եզնիկ Կողբացին իր խրատ-ներում պատվիրում է. «Լավ է մաքուր մտքով քնել, քան այդո՞ս խորհրդով աղոթել և իզուր չարչարվել»:



Ի՞նչ է աղոթքը

**Եկեղեցու բոլոր հայրերը
պատվիրում են աղոթելիս
միտքն ու հոգին զերծ պա-
հել երևակայական պատ-
կերմներից, որևէ ձևից կամ
գույնից, որովհետև Աստ-
ված իբրև աննյութական
էռթյուն վեր է դրանցից:**



**Աղոթքների տեսակներն են՝
խնդրական, փառաբանական,**

Աղոթքը բարձրագույն հոգևոր վիճակ է, որի ընթացքում աղոթողն առավելագույն կենտրոնացումով իր խոսքն ուղղում է Աստծուն: Առանց հավատի աղոթքն անուժ է, և միայն հավատից բխող աղոթքն է, որ կարող է լսելի լինել Աստծուն:

Եզնիկ Կողբացին իր խրատներում պատվիրում է. «Լավ է հստակ խորհրդով քնել, քան պիղծ խորհրդով աղոթել և իզուր չարչարվել»: Մեկ այլ խրատում ուշադրության և կենտրոնացումի մասին ասում է. «Երբ աղոթում ես, հավաքիր խորհուրդդ և ապա սաղմոսիր»: Նույնքան կարևոր է աղոթքի ներքին բովանդակությունը. Եկեղեցու բոլոր հայրերը պատվիրում են աղոթելիս միտքն ու հոգին զերծ պահել երևակայական պատկերմներից, որևէ ձևից կամ գույնից, որովհետև Աստված իբրև աննյութական էռթյուն վեր է դրանցից:

Աղոթքի խորհուրդները շատ գեղեցիկ և նկարագրել Գրիգոր Տաթևացին: Ըստ Տաթևացու՝ աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում: Զեռքերի սրբությունն ազահությունից, զրկանք պատճառելուց, արյունից մաքուր մնալն է, լեզվի սրբությունը բարկությունից, հայիսյանքներից, աղաղակներից զերծ մնալն է, իսկ սրտի սրբությունն աղոթքի սրտաբուխ լինելն է՝ սիրտը մաքրելով բոլոր մեղքերից, չար խորհուրդներից:

Առ Աստված ուղղված աղոթքները լինուն են ընդհանրական, երբ հավատացյալները միասին են հավաքվում աղոթելու, և առանձնական, երբ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՆԲԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

աղոթքը կատարվում է միայնակ:

Յայ առաքելական Եկեղեցին սահմանել է նաև աղոթքներ, որոնք ասվում են ծիսական արարողությունների ժամանակ: Ծիսական աղոթքը և Աստվածաշնչից ընտրված ընթերցումները կազմում են աստվածապաշտական արարողակարգի էական տարրը: Ի տարբերություն առանձնականի՝ Եկեղեցում կատարվող պաշտամունքը հավաքական է: Այստեղ հավատացյալները երգերով, աղոթքներով, միասնաբար մասնակցում են հոգևոր արարողությանը: Յիսուս Քրիստոսը ոչ միայն մասնակցեց հնուց ավանդված ծիսական արարողություններին, այլև ինքը սովորեցրեց նոր աղոթք («Յայր մեր»), հաստատեց խորհուրդներ: Դրանց հիման վրա Եկեղեցու հայրենի օրինակարգեցին ընդհանրական կամ հասարակաց աղոթքի ժամեր, որոնք և դարձան ժամերգության հիմքը:

Յայոց Եկեղեցին ունի ինը ժամերգություններ.

Գիշերային

Առավոտյան

Արևագալի

ճաշու երրորդ ժամ

ճաշու վեցերորդ ժամ

ճաշու իններորդ ժամ

Երեկոյան

Խաղաղական

Հանգստյան

Ըստ Տարևացու՝ աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ծեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում: Չեռքերի սրբությունն այն է, որ նրանք մաքուր պահիեն ազահությունից, զրկանք պատճառելուց, արյունից: Լեզվի սրբությունն այն է, որ զերծ մնա բարկությունից, հայինյանքներից, աղաղակներից: Իսկ սրտի սրբությունն այն է, որ աղոթքը լինի սրտաբուլս՝ սիրտը մաքրելով բոլոր մեղքերից, չար խորհուրդներից:



ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԹԱՐԵՆԹԱՎՃՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Աղոթքներ

Արթանալիս.

«Դայր մեր» և ապա.

- *Lgaք առաւտուո ողորմու-թեամբ քով, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց:*



Քննելուց առաջ.

«Դայր մեր» և ապա.

- *Պահապան ամենայնի Քրիստոս. ազ Քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի. ի նստիլ ի տան, ի գնալ ի ճա-նապարհ, ի ննջել և ի յառնել՝ զի մի երբեք սասանեցայց: Եւ ողորմեա Քո արարածոց եւ ինձ քազմամեղիս:*

Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակ Հայոց Եկեղեցում հասարակական կամ ընդհանրական աղոթքները կազմված էին գլխավորապես Աստվածաշնչի ընթերցանությունից, սաղմոսերգությունից: Դրանք կատարվում էին հունարեն և ասորերեն լեզուներով: Սակայն որոշ ժամանակ անց սուրբգրային ընթերցումները թարգմանվում են հայերեն և իրեն քարոզ մեկնաբանվելով՝ մատուցվում հավատացյալներին: «Ժամագրքի» կազմավորումն ու ժամասացության կարգավորումը կատարվում է Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից: Հետագայում ժամագիրքը ճոխացվում է նորանոր միավորներով: Հատկապես մեծ է Ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսի բերած նպաստը ժամերգությանը, որի մեջ ներմուծվեցին նրա բազում աղոթքները, հորդորներն ու երգերը: Հետագայում ժամագիրքը խմբագրվեց և իր այսօրվա տեսքը ստացավ XV դարում Տաթևի դպրոցի սաների և XVIII դարում Սիմեոն Երևանցու կողմից:

Ս. Պատարագ

Բացի աղոթքից և ժամերգությունից, Հայոց Եկեղեցու արարողակարգի մեջ բացառիկ կարևոր տեղ է զբաղեցնում Ս. Պատարագը: Այն նշանակում է զոհ, ընծա, նվեր: Ս. Պատարագի կենտրոնը, բուն խորհուրդը Հաղորդությունն է, որն, ինչպես հայտնի է, հաստատել է Հիսուս Քրիստոսը Խորհրդավոր (Վերջին) ընթրիքի ժամանակ: Ս. Պատարագի ժամանակ հացն ու գինին փոխակերպվում և դառնում են Քրիստոսի մարմինը և արյունը: Հաղորդությունը

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՆՔԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Դիսուս Քրիստոսի ինքնազնիաբերման խորհուրդն է:

Դաղորդության միջոցով մենք ընդունում ենք
Քրիստոսին և միանում նրա հետ:

Ա. Պատարագն ունի իր դրսևորման ձևը, որ հաստատված է Քրիստոսի կողմից և բյուրեղացված՝ եկեղեցու հայրերի փորձառության հիման վրա: Պատարագի սրբազն արարողությունը ծիսական պատկերագրումն է Քրիստոսի խաչելության և հարության: Ծեսի մեջ այն շոշափելի և առարկայական է դառնում խորհրդապաշտական գործողություններով, նշաններով, սուրբգրային ընթերցումներով, սաղմոսների և շարականների երգեցողությամբ, խրատներով, քարոզներով և աղոքքներով: Այսօր մեր պատարագը բաղկացած է չորս հիմնական մասերից:

Ա. Պատրաստություն. տեղի է ունենում եկեղեցու պահաժաման մեջ աղոքքներով և պատարագիչ քահանայի հանդերձավորմամբ: Այնուհետև խորանի առջև պատարագիչ քահանան ստանում է մեղքերի թողություն, լվանում է ձեռքերը և բարձրանում խորան: Պատրաստությունն ավարտվում է եկեղեցու մեջ՝ թափորով:

Բ. Երախայից պատարագ. կոչվում է նաև ճաշու պատարագ: Այն սկսվում է թափորից հետո, երբ պատարագիչ քահանան նորից խորան է բարձրանում, և շարունակվում է մինչև սպասավորող սարկավագը ժողովրդին ազդարարում է. «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստածային խորհուրդս»: Երախաները դեռևս

Ուտելուց առաջ.

«Դայր մեր» և ապա՝

- ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պարգեւեալ է մեզ ի Տեառնե. օրինեալ է Տէր ի պարզև իւր. ամէն:



Ուտելուց հետո.

«Դայր մեր» և ապա՝

- Զլիութիւն ի վերայ սեղանոյս անհատ եւ աննուազ արասց Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց. Նմա փառք յալիտեանս. ամէն:



Աղոքըներ

ճանապարհ գմալուց առաջ.

- **Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան.**

Տէր, ուղղեա եւ առաջնորդեա հոգոց մերոց եւ ամենայն

հաւատացելոց գմալ յարդառութեան ճանապարհն եւ ի կեանսն յախտենից:



Գործ սկսելուց առաջ.

- **Զգործս ծնոաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր եւ զգործս ծնոաց մերոց յաջողեա մեզ:**

չմկրտվածներն են անկախ տարիքից, որոնք դեռ չեն կարող մոտենալ Ս. Հաղորդությանը: Պատարագիչ քահանայի՝ սուրբ Սեղանի շուրջ խնկարկելը և այնտեղից իջնելը, ժողովրդին խնկարկելն ու դարձյալ նույն տեղը վերադառնալը Հիսուս Քրիստոսի երկիր իջնելու և դարձյալ երկինք բարձրանալու խորհրդապատկերն է:

Գ. Հավատացելոց պատարագ. սկսվում է, երբ հացն ու գինին բերվում են Սուրբ Սեղանի վրա, և պատարագիչ քահանայի աղոթքներով և աստվածային զորությամբ սրբագործվում: Ապա Քրիստոսի Մարմին և Արյուն դարձած հացն ու գինին մատուցվում են հավատացյալներին:

Դ. Արձակում. կատարվում է գոհաբանական աղոթքից և վերջին օրհնությունից հետո, երբ ժողովուրդը արձակվում և դուրս է գալիս եկեղեցուց:

Պատարագի ծիսակարգը սկիզբ է առել առաքելական շրջանում, երբ տակավին գրավոր պատարագամատույց չկար և աղոթքների մի զգալի մասը կատարվում էր համապատրաստից: Մինչև V դ. Հայոց եկեղեցին օգտագործում էր Պատարագի այն տարբերակը, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը բերել էր Կեսարիայից: Հայոց Պատարագամատույցը հիմնականում ամբողջացավ արդեն X դարում: Այն հարստացավ ոչ միայն Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Սահակ Պարթևի և Ս. Հովհան Մանդակունու, այլև Ս. Գրիգոր Նարեկացու, Ս. Ներսես Շնորհալու, Ս. Ներսես Լամբրոնացու և այլոց ջանքերով: Պատարագամատույցի կազմավորումն իր ավարտին հասավ XVII դարում:



Հարցեր

1. Ի՞նչ է աղոթքը: Ի՞նչն է աղոթքը լսելի դարձնում Աստծուն:
2. Ո՞րն է «աղոթք» բառի նշանակությունը: Ո՞րն է աղոթքի կատարելատիպը:
3. Աղոթքի ի՞նչ ձևեր գիտեք:
4. Որո՞նք են միջնադարյան Հայաստանում տարածված աղոթքները:
5. Ո՞րն է առանձնական և ընդհանրական աղոթքների տարրերությունը:
6. Ի՞նչ է ժամերգությունը: Ժամերգության ի՞նչ տեսակներ գիտեք:
7. Ի՞նչ է պատարագը, և ո՞րն է պատարագի խորհուրդը: Քանի՞ մասից է բաղկացած այսօրվա մեր պատարագը:
8. Ի՞նչ է «Պատարագամատույցը»:

Առաջադրանք

- ա) Կատարեք «Պրիզմա» վարժությունը «Աղոթք» բառով:
- բ) Ինչպես է Գրիգոր Տաթևացին մեկնում աղոթքի խորհուրդը:
- գ) Դու մասնակցե՞լ ես պատարագի արարողությանը: Պատմիր այդ մասին:
- դ) Դու երբևէ աղոթե՞լ ես: Եթե այո, ապա ի՞նչ զգացումներ և ապրումներ ես ունեցել այդ ժամանակ:



17. Հոգևոր բարեպաշտական սովորույթներ

Հոգևոր բարեպաշտական արարողություններից շատերը (խաչակնքում, մոմավառություն, մյուռռնօրհնեք, տնօրինեք, ուխտագնացություն, ջրօրինեք և այլն) հատուկ են քրիստոնեական շատ եկեղեցիների, մյուսները զուտ Հայոց եկեղեցուն բնորոշ ազգային քրիստոնեական արարողություններ են (աղօրինեք, մատաղ, խաղողօրինեք, Տյառնադառաջի խարույկ և այլն):



Տոներից բացի, Հայոց եկեղեցու կողմից հաստատված ծիսաարարողական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում հոգևոր բարեպաշտական մի շարք արարողություններ ու եկեղեցական տոններ:

Հոգևոր բարեպաշտական արարողություններից շատերը (խաչակնքում, մոմավառություն, մյուռռնօրինեք, տնօրինեք, ուխտագնացություն, ջրօրինեք և այլն) հատուկ են քրիստոնեական շատ եկեղեցիների, մյուսները զուտ Հայոց եկեղեցուն բնորոշ ազգային քրիստոնեական արարողություններ են (աղօրինեք, մատաղ, խաղողօրինեք, Տյառնադառաջի խարույկ և այլն): Հոգևոր կենցաղավարության մեջ հատկապես մեծ տարածում ունեն խաչակնքումը, մոմավառությունը, երկրպագությունը, խնկարկությունը, տնօրինեքը և այլն:

Խաչակնքում

Քրիստոնյան խաչակնքում է եկեղեցական արարողությունների ընթացքում, եկեղեցի, սրբատեղի մտնելիս և ելմելիս, աղոթքի սկզբում և վերջում, սրբապատկերին կամ որևէ սրբության մոտենալիս, խնկարկության և պատարագիչ քահանայի խաչանիշ օրինության ժամանակ: Հաճախ մենք խաչակնքում ենք նաև վտանգի, փորձության պահին, պաշտպանելով սեփական անձը չարի դեմ՝ խնդրելով Աստծու օրինությունը և ապավինելով

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԵՍԵՐԸ ԵՎ ԹԱՐԵՆԹԱՎՃԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Ս.Խաչին:

Խաչակնքելու սովորությունը սկիզբ է առել դեռևս առաքելական շրջանում, հետագայում եկեղեցին նվիրագործել է այն: Խաչակնքումը կատարվում է աջ ձեռքի երեք մատները (բթամատը, ցուցամատն ու միջնամատը) միացրած, ինչը խորհրդանշում է անբաժան և միասնական Սուրբ Երրորդությունը: Մյուս երկու մատները ծալվում են ափի մեջ՝ խորհրդանշելով Քրիստոսի մեջ կատարյալ Աստծո և կատարյալ մարդու անբաժան միությունը:

Խաչակնքելիս աջ ձեռքի երեք միացրած մատները տանում ենք դեպի ճակատը՝ ասելով «Հանուն Հոր», իջեցնում ենք ներքև՝ ասելով «Առողջո», ապա ձեռքը տանում ենք դեպի ձախ՝ ասելով «և Հոգվույն» և դեպի աջ՝ ասելով «Արբո»: Այս ձևով խաչակնքվողն իր վրա պատկերում է Ս.Խաչի նշանը: Այնուհետև, ձեռքի բաց ափը դնելով կրօքին՝ խոնարհվում ենք՝ ասելով «Ամեն», որը նշանակում է «Թող այդպես լինի», «ճշմարիտ է»:


Մոմավառություն

Մոմավառությունը հոգևոր ապրումի արտահայտություն է, որը խորհրդանշում է խավար շրջապատի, դարձի չեկածների, հեթանոսների և անհավատների լուսավորումը, ինչպես նաև քրիստոնյայի լուսավոր հավատը, աստվածային կրակով մեղքի մոխրացումը (*«Դո՞ւք եք աշխարհի լույսը ...»*):

Դո՞ւք եք աշխարհի լույսը...



Հոգևոր կենցաղավարության մեջ հատկապես մեծ տարածում ունեն խաչակնքումը, մոմավառությունը և երկրպագությունը, խնկարկությունը, տնօրինեքը և այլն:



**Խաչակնքելիս աջ ձեռքի երեք
միացրած մատմերը տանում
ենք դեպի ճակատը՝ ասելով
«Դանուն Դոր», իշեցնում ենք՝
ասելով «և Որդվո», ապա
ձեռքը տանում ենք դեպի ծախ՝
ասելով «և Դոգվում» և դեպի
աջ՝ ասելով «Մրբո»: Այս ձևով
խաչակնքվողն իր վրա
պատկերում է Ս. Խաչի նշանը:
Այնուհետև, ձեռքի բաց ափը
դմելով կրծքին՝ խոնարհվում
ենք՝ ասելով «Ամեն», որը
նշանակում է «Թող այդպես
լինի», «Ծշմարիտ է»:**

Եկեղեցում մոմ գնելը և վառելը դիտվում է նաև
որպես զոհաբերություն, ինչպես նաև՝ նյութական
օժանդակություն եկեղեցում:

ԽՆԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ և ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

Խնկարկությունը խորհրդանշում է առ Աստված
բարձրացող աղոթքն ու օրինությունը: Դայոց
եկեղեցում ծիսակատարության և պատարագի
ընթացքում գործածվող խունկը նախապես օրինում
է քահանան: Մաշտոց ծիսարանը հատուկ աղոթք է
պարունակում խունկն օրինելու համար: Խնկար-
կությունը կատարվում է նաև ննջեցյալների տանը
կամ գերեզմանատուն այցելելիս, ինչպես Յուղա-
բեր կանայք Յիսուսի թաղման հաջորդ օրն այցելել
են գերեզման՝ իրենց հետ խունկ տանելով:

Երկրպագությունը պատարագի և մյուս ծիսա-
կան արարողությունների ընթացքում Աստծուն
երկրպագելու սովորություն է: Ընդհանրապես բոլոր
եկեղեցական արարողությունները, ծեսերը, տոնե-
րը, ժամերգությունները երկրպագություն են Աստ-
ծուն՝ ի դեմս Սուրբ Երրորդության երեք Անձերի,
ինչպես նաև սրբերի մասունքներին՝ որպես հար-
գանքի, ակնածանքի, հեղինակության անվերա-
պահ ընդունում նրանց անձի, կյանքի և գործերի
նկատմամբ: Երկրպագությունը կատարում են
պատարագիչ քահանան և հավատացյալները, երբ
պատարագի ընթացքում ասվում է «Աստուծոյ
Երկրպագեսցուք»: Երկրպագելիս երեսը խաչա-
կնքում են և խոնարհվում դեպի գետին:

Տնօրինեք և անդաստան

Տնօրինեքը քրիստոնեական շատ եկեղեցիներին հատուկ արարողություն է: Ս.Ծնունդին և Ս.Զատկին քահանան այցելում է իր ծխի տները՝ Հիսուսի Ծնունդը և Հարությունն ավետելու, նրանց տները օրինելու, որպեսզի Աստված հովանի և պահապան լինի տան բնակիչներին:

Տնօրինեքի ժամանակ քահանան օրինում է տան հացը, ջուրը և աղը: Տնօրինեք կատարվում է նաև այն ժամանակ, երբ տանը խախտվում է խաղաղությունը, հանգիստը, ընտանիքի անդամների առողջությունը և այլն:

Անդաստանը աշխարհի չորս ծագերի օրինության արարողություն է: Այն կատարվում է նաև արտերի պտղաբերության և արգասավորության համար: Հնում անդաստանի արարողությունը կատարվել է Եկեղեցուց դուրս՝ արտերի և այգիների մեջ: Տննացույցի համաձայն՝ «անդաստան ելամել» կամ «անդաստան օրինել» նշանակում է Եկեղեցու ատյանում շրջելով՝ աշխարհի չորս կողմերն օրինել:

Արարողության ժամանակ հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարանով, երգելով օրինում է Արևելքը և այնտեղ գտնվող Հայոց հայրապետությունը՝ Ս.Խաչի և Ավետարանի նշանով, հանուն Սուրբ Երրորդության:

Այնուհետև օրինվում է և առ Աստված խնդրանք ներկայացվում աշխարհի արևմտյան կողմի համար, որտեղ քրիստոնյա թագավորություններ և ազգեր կան: Դեմքերը դեպի հարավ դարձնելով՝ օրինում են հարավը, այնտեղի երկրները, անդաս-

Բոլոր Եկեղեցական արարողությունները, ծեսերը, տոները, ժամերգությունները երկրագություն են Աստում՝ ի դեմս Սուրբ Երրորդության երեք Անձերի:



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՆԲԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ



Արարողության ժամանակ հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարամով, երգելով օրինում է Արևելքը և այնտեղ գտնվող Դայոց հայրապետությունը՝ Ս. Խաչի և Ավետարանի նշանով, հանուն Սուրբ Երրորդության:

տանները և տարվա պտղաբերությունը: Իսկ դեպի հյուսիս դառնալով օրինվում են աշխարհի հյուսային կողմն ու այնտեղ գտնվող վանքերը, քաղաքներն ու գյուղերը և նրանց բնակիչները:

Գերեզմանօրիներ և հոգեհանգիստ

Դանգուցյալին հոդին հանձնելուց, քահանայի կողմից գերեզմանը խաչով կնքելուց և համապատասխան աղոթքից հետո գերեզմանը համարվում է օրինված և կնքված: Օրինելուց և կնքելուց, համապատասխան աղոթքներից հետո քահանան ննջեցալի գլխավերներ ասում է. «Թող Աստծո ծառայիս գերեզմանի վրա գրված տերունական կնիքն անշարժ լինի մինչև Քրիստոսի գալուստ, որ երկորորդ անգամ գալով պիտի փառքով նորոգի ի փառս Դոր և Սուրբ Հոգու. ամեն»:

Հոգեհանգիստը ննջեցյալի հոգիների համար կատարվող արարողություն է և բառացի նշանակում է «հանգիստ հոգու համար»: Դայոց եկեղեցում հանգուցյալների հիշատակումը կատարվում է հոգեհանգստի միջոցով, ինչպես նաև Տաղավար տոներին հաջորդող գերեզմանօրինեքի ժամանակ: Դանաձայն Դայոց եկեղեցու վարդապետության՝ մահացածները սպասում են Վերջին դատարանի օրվան: Հոգեհանգստյան արարողությունն էլ այս իմաստով է կատարվում: Ողջերը, հիշելով նրանց, հոգեհանգստի ընթացքում ողորմություն են հայցում Աստծուց ննջեցյալների հոգիների համար:

Հոգեհանգստյան արարողության ընթացքում երգվում են հանգստյան շարականներ, ընթերցվում

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՆԲԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Է հանգստյան Ավետարանը և վերջում՝ «Քրիստոս Որդի Աստծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները, որպեսզի Վերջին դատաստանի օրը Աստված հիշի նրանց և գթությամբ դատաստան անի:

Մատաղ

Դեռևս Ս. Գրիգոր Լուսավորիչն է սահմանել, որ կուռքերին զրիեր մատուցելու փոխարեն մոռթված անասուններն իբրև ողորմություն բաժանեն աղքատներին: Մատաղն ըստ Ս. Գրիգոր Տարեացու ունի «մատու աղ = մատուցիր աղը» իմաստը: Ֆիշտ է, Քրիստոսով՝ որպես մեծագույն զրիով տեղի է ունեցել Աստծու և մարդու հաշտեցումը, և անասունների զոհաբերությունը դարձել է ավելորդ, սակայն մատաղը հայոց մեջ ազգային-ավանդական նշանակություն է ստացել: Այն կատարվում է Աստծու տված շնորհների համար երախտագիտություն հայտնելու նպատակով: Միսալ է, երբ մատաղը նույնացվում է զոհաբերության հետ: Աղը մաքրության և անապականության խորհրդանիշ է, ուստի քահանան օրինում է մատաղի համար նախատեսված աղը:

Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած՝ մատաղ էին անում Տերունական և Սրբոց տոններին, ննջեցյալների հիշատակի համար և որպես հոգեհաց բաժանում աղքատներին, կարիքավորներին ու ուխտավորներին:

Մատաղն արգելված է Մեծ պահքի ժամանակ և ընդհանրապես պահոց օրերին:


«Անշարժ եղիցի կմիք տէրութեան ի վերայ գերեզմանի ծառայիս Աստուծոյ մինչև ի գալուստն Քրիստոսի, որ եկեալ միւանգամ նորոգեսց փառօք ի փառս Շոր և Շոգույն Սրբոյ. ամեն»:



«Թող Աստծո ծառայիս գերեզմանի վրա գրված տէրունական կմիքն անշարժ լինի մինչև Քրիստոսի գալուստ, որ երկրորդ անգամ գալով պիտի փառօվ նորոգի ի փառս Շոր և Սուլը Շոգու. ամեն»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Լրացրեք գծակարգը՝ շրջանակներում գրելով հոգևոր-բարեպաշտական սովորույթները.



2. Ներկայացրեք խաչակնքելու ձևը և խորհուրդը:
3. Ի՞նչ է նշանակում մոմավառություն:
4. Առանձին-առանձին բացատրեք խմկարկության և երկրպագության խորհուրդները:
5. Ինչո՞ւ է կատարվում տնօրինեքը:
6. Ինչո՞ւ է անհրաժեշտ գերեզմանի օրինությունը: Ո՞րն է հոգեհանգստի խորհուրդը:

Քննարկենք

ա) Յոգևոր-բարեպաշտական սովորույթներն այսօր էլ մեր կյանքում և կենցաղում նշանակալից դեր ունեն: Ինչո՞վ եք դա բացատրում:


բ) Յոգևոր-բարեպաշտական որևէ սովորույթի օրինակով կատարեք «Պրիզմա» վարժությունը:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին



Ի խորոց սրտի խոսք Աստուծո Հետ
 Ըսդունիր սիրով, մեծազմ' ր Աստված,
 Աղաչանքները դառնացած սրտիս.
 Ամոթահարիս մոտեցիր մեծիդ բարեգիմությամբ.
 Փարատիր խապառ, ամենապարգել՝,
 Տիսրությունն իմ այս նշավակելի.
 Այս անտանելի ծանրությունները
 Վերցրո՞ւ, թոթափիիր ինձնից, ողորմա՛ ձ.
 Կտրիր մահացու սովորոցիմներն այս, ո՛վ Հսարագետ.
 Ավարի մատնիր, մշտապես Հաղթող
 Հրապուցրները մոլորապատիր:
 Ցրիր, վերնային, գայթակղության մառախուզն անհետ.



Խափանիր, փրկիչ, Հարձակումները կորուստ նյութողի.
Զնջիր, ծածկատես, որոգայթներն այս նենդ ու պատրական.
Խոյացումներն այս խոռվարարի խորտակիր, Հզ՞ ր:
Կնքիր անոնովդ լուսանցուցն Հարկիս.
Պարփակիր ձեռքովդ առաստաղն իմ տան,
Օծիր քո արյամբ մուտքն իմ սենյակի,
Սուրբ նշանը Քո դրոշմիր ամուր
Մաղթողիս բոլոր ճամփեքի վրա.
Աջովդ ամրացրու խշտիս Հագստյան
Մաքրիր անկողնուս ծածկարանն իսպառ վարմու թակարդից,
Կամքովդ պահպանիր Հոգիս տառապյալ
Ու մարմնիս շունչը, քեզնից չնորշված, անարատ պահիր,
Շրջափակիր ինձ ամուր՝ Երկնային զորքիդ բազմությամբ՝
Որպես դիմամարդ դեւերի գնդին:
Սուրբ Աստվածածնիդ եւ ընտրյալների բարեխոսությամբ՝

Ըսորչի՛ր նիրջիս այս մահաւանդույն՝
Խորին գիշերում բերկրալի Հանդիստ:
Վմիոփի՛ր մտքիս եւ զգայության՝
Տեսանելիքի պատուհանները, պարուրի՛ր այնպէս,
Որ մնան նրանք անսասանելի, խաղաղ, աներկյուղ՝
Վմեն մրրկահույզ ալեբախումից,
Վոօրյա նանիր Հոգսերից բոլոր,
Վսրջական սին երազանքներից,
Վս ցնորքներից խենթ ու խոլական,
Եվ հիշատակով Հույսիդ պահպանվեն անվթար, անեղծ:
Որպեսզի կրկին, երբ որ սթափիվեմ այս ծանր քնից,
Լիովին զգաստ ու Հոգենորոգ
Մի զվարժությամբ կանգնած Քո առաջ՝
Մաղթանքներն իմ այս, Հավատքիս բուրմամբ,
Ով ամենօր Հսյալ ու անձառելի փառքի թագավոր,
Զուգաձայնությամբ ողջ երկնագումար
Փառաբանական բազմություններիդ,
Բարձունքներդ ի վեր առաքեմ առ Քեզ:
Քանզի դու բոլոր արարծներից
Փառավորյալ ես Հավիտյանս Հավիտենից. ամեն:

Ս. Գրիգոր Նարեկացի,
 «Մատյան ողբերգության» Բան ԺԲ1.



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ I

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2. ԲԱՐՈՅԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՆՉՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԱՇԽԱՇՅՈՒՄ 5

3. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 17

ԳԼՈՒԽ II

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՎԱՑՈՒՄՆԵՐԸ

4. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻԴԵԱՆ 23

5. ՄԱՐԴ ԱՆԴԱՏԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՌՋԵԼՈՒԹՅՈՒՆԸ 35

6. ԱԶԱՏ ԿԱՄՔ ԵՎ ԲԱՍԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ 42

7. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԱՍՈՒՄԸ 50

8. ԽՈՆԱՇՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ 61

9. ԳԹԱՍՐԴՈՒԹՅՈՒՆ (ՈՐՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԱԳԱՋՈՒԹՅՈՒՆ 69

10. ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԿՐԱՑՈՒԹՅՈՒՆ 77

11. ՈՂՋԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՂՋԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ 83

12. ՈՍԿԵ ԿԱԾՈՆ 89

13. ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ 96

14. ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ 103

15. ՄԱՐԴ ԱՆԴԱՏԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ 109

ԳԼՈՒԽ III

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐՆ ՈՒ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

16. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ Ս. ՊԱՏՄՈՒԳՅԸ 117

17. ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ 124

Հայոց եկեղեցու պատմություն

Հանրակրթական ավագ դպրոցի
10-րդ դասարանի դասագիրք

Գեղարվեստական և տեխնիկական խմբագիր՝

Մ. Պետրոսյան

Լեզվական խմբագիր՝ Ա. Ոսկանյան

Մրբագրիչ՝ Ա. Պապյան

Համակարգչային շարվածքը՝

Հ. Հովհաննիսյանի

Ա. Այվազյանի

Ա. Միրզաքանյանի

Չափսը՝ 70x100 1/16

Ծավալը՝ 8,5 տպ. մամուլ

Պատվեր՝ 1256: Տպաքանակ՝ 20271:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում